Ահրիմանը ուրախացաւ իր սրտում, որ իր մարդատեաց վարդապետութիւնը առատ պտուղ է բերում, և ասաց.

— Ժամանակը դժւարացել է, իսկ — ես ձեր բարիքն եմ ցանկանում: Տալիս եմ ձեզ մի նոր պատւէր: Սիրեցէք ձեր բարեկամներին աւելի, քան ուրիշներին. մեռնաւորների մասին հոգացէք, իսկ ուրիշների մասին ոչ:

«Ճշմարիտ է նրա ասածը,— մտածում էին մարդիկ.— ժամանակը դժւարացել է, ոչ-ոքից կարող ենք ուրիշների մասին հոգալ»:

Ամեն մի ընտանիք սկսեց ապրել ինքն իր համար: Ամեն մի հայր հոգում էր միմիայն իր ընտանիքի մասին, միայն թէ իր որդիքը կուշտ լինէին, իսկ թէ ուրիշներն ևս որդիք ունին, ոչնց նոյնպէս ապրուստ է հարկաւոր, այդ մասին ոչինչ չէր ուզում խմանալ:

Պառակտումն ընկաւ: Ընտանեութիւններն ու գոյութիւնները բազմացան, բանտերում նեղւածք էր բանտարկեալների շատութիւնից. սակայն արդարադատութիւն չկար, որովհետև դատաւորնիրը հոգում էին ոչ թէ արդարութեան, այլ իրանց շահի մասին: Թափւում էր մարդկային արիւնը և

կարմիր նիրկում գետինը: Երկրի ազատակը իր կինք է բարձրանում, դէպի լուսաւոր Որմիզդը, սակայն դեռ չէը հասել Որմիզդի ժամանակը:

Աշխարհի վրայ ապրելը դժւարացել էր, սակայն մարդկանց հոգեւոր աչքերը դեռ չէին բացւել. նրանք դեռ չէին պատնում դէպի Որմիզդի վարդապետութիւնը:

Միմիայն Որմիզդի հաւատարիմ աշակերտներն էին պահում նրա պատւիրանները. սակայն ամենքը դատապարտում էին նրանց, արհամարհում նրանց վարդապետութիւնը և նոյնիսկ հայհոյում Որմիզդին:

Այն ժամանակ մոլորեցուցիչ Ահրիմանը ապստեց իր երբորդ պատւիրանը.— Թող իւրաքանչիւր ոք ամենից աւելի իմն իրեն սիրէ:

Եւ մարդիկ չհամակացան, թէ որքան կորստաբեր էր այդ հրամանը, այլ գովաբանեցին Ահրիմանին՝ ասելով.

Նրա վարդապետութիւնից աւելի լաւ չկայ: Եւ իսկապէս պտղաբեր պէտք է սկսած լինէինք այդպէս ապրել: Ամեն մէկի շապիկը իր մարմնին աւելի մօտ է: Թող Աստուած հոգ տանի ամենքի մասին, իսկ մենք աստուածներ չենք, որ բոլորի համար ցաւինք: Ամեն մէկիս հոգսերը բաւական են մեզ համար. եթէ իւրաքանչիւր ոք սիրէ ինքն իրան, բոլորի համար էլ լաւ կը լինի,

սրտվեռան ամեն մէկին իր համար աւելի լաւ կը հոգայ, քան մի ուրիշը։

Այդպէս էլ սկսեցին ապրել...

Հետևանքն այն եղաւ, որ երկրի վրայ մարդիկ սկսեցին նեղուել։ Զօրեղները ու հարուստները ճնշում էին թոյլերին ու աղքատներին և գրկած խեղճերը ոչ մի պաշտպան չունէին։ Հայրերը երեսի վրայ էին ձգում իրանց սրտիները, սրտիները վեր էին կենում ծնողների դէմ։ Մարդերը դեռ ծննդարերութիւնից առաջ գազանաբար սպանում էին իրենց երեխաներին, որովհետև չէին ուզում ծննդարերութեան ծանրութիւնը տանել։ Սէրը բոլորովին վերացաւ երկրի վրայից, արդարութիւնը չնչին հիմքի երեսից։ Իւրաքանչիւրը ոչ դադում է իր կեանքի համար... Մեռնում էին քաղցից ու ցրտից և սպանութիւններից .. Միմիայն գերեզմանները չէին նեղւում, բայց նրանք էլ սպառնում էին աշխատանել իրար։

Սակայն այդ ժամանակ հո չէին յուսահատում Որմիզդի աշակերտները։ Նրանք դեռ շարունակում էին հաւատալ, որ բարին պէտք է յաղթէ չարին կեանքի մէջ։ Նրանք տեսնում էին, որ մարդկանց սրտերում խիղճը դեռ բո որովին չէր մեռել և իսպառ պատժում էր անօրէնութիւնների համար։

Որպէսզի վերջնականապէս աշխատանք ամեն

մի բարի բան մաքրու մէջ, Անրիմանը այսպէս ապականեց ամբողջ աշխարհին.

—Դուք կատարեցէք իմ երեք պատուիրանները։ Ես ուրախ եմ, որ դուք այդպէս հնազանդ էք ինձ, և ի վարձատրութիւն ձեր դէպի ինձ ունեցած հնազանդութեան՝ ես բոց եմ անում ձեզ համար կեանքի ճշմարտութիւնը. Իմացէք ուրեմն այժմ, որ կեանքը տրուած է ուրախութեան եւ զուարճութեան համար։ Կերէք, խմէք, ուրախացէք, ամեն ինչ պիտի ծառայէ ձեր հանգստին։

Այն ժամանակ սկսեց աշխարհի վրայ տարածուել սրբեցութիւնն ու անառակութիւնը։ Գինով ուզում էին մարդիկ բթացնել խղճի խայթը և անառակութեամբ խեղդում էին Աստուծոյ արտարութեան ձայնը։

Սրբեցութիւնից, անառակութիւնից, անժուժկալութիւնից և ցանկասիրութիւնից մարդկային կեանքը սկսեց կարճանալ։ Երեսն եկան ժանտախտը և ամեն տեսակ հիւանդութիւններ ու ախտեր, իսկ արիւնեղութիւնների ու բռնութիւնները աւելի ևս չաւացան։

Եւ երբ արիւնը ծածկեց երկիրը, իսկ մարդկային տանջանքները չափ ու սահմանից անցան, մարդասէր Որմիզդը դիմեց մարդկանց և մեծ պատերազմով դուրս եկաւ Անրիմանի դէմ։

Այն ժամանակ երկնքի վրայ երեսյաւ մի

հրաշալի տեսիլ։ Երևելքից գալիս էր մի ձիաւոր սպիտակ նժոյգի վրայ։ Նրա երեսը նման էր արեգակի և ձեռքի նետերը նման էին արևի ճառագայթների։ Եւ ահա նա յայտարարեց

—Ես այն անձն եմ, որ ձեզ սէր էր քարոզում և որին դուք սպանեցիք, մերժելով նրա վարդապետութիւնը։

Եւ բոլոր մարդիկ դողացին սաստիկ երկիւղից և սպասում էին մահուան պատժի, որովհետև չէին հնազանդել լուսաւոր Որմիզդի կամքին։

Եւ ահա բոլորը ծունկ չոքեցին և անիծելով իրանց մոլոր կեանքը, ներումն էին խնդրում Որմիզդից, որպէսզի նա, պատժելով զոտ արդարութեան, չմերժէ իրանց իսպառ զոտ իր գթութեան։

—Որդեակք իմ... հեզութեամբ ասաց նա։

Եւ մարդկանցից ամեն մէկը զգաց իր սրտում, որ յիրաւի ինքը լուսաւոր Աստուծոյ որդին է հոգով։ Երկիւղը չքացաւ և մնաց միմիայն որդիական սէր դէպի բոլոր մարդկանց յաւիտենական հայրը։ Ու հեկեկում էին մարդիկ պղջութից և ուրախութիւնից։

—Որդեակք իմ,—ասում էր Որմիզդը,—ես ոչ թէ եկել եմ պատժելու, այլ ներելու։ Ես խզեցի ձեզ և արտաքսեցի ձեր չարակամին։

—Փոխեցէք ձեր կեանքը.—պատասխանեց

Որմիզդը.—իսկ պատիժը դուք ինքներդ տրվեն ուել էք ձեզ ձեր անօրէնութիւններով, չարութեամբ և ատելութեամբ։

—Բայց մենք հայհոյում էինք քո անունը,—ասում էին մարդիկ,—և քո թշնամիներն էինք, պատիժը մեզ, որպէսզի չծանրանայ այդ մեր խղճի վրայ, որպէսզի ամօթով չմնանք մենք քո առաջ։

—Ննջմեաներ,—ասաց այն ժամանակ Որմիզդը.—մի՛թէ կարծում էք դուք, որ ես կպատժեմ ձեզ իմ անունը հայհոյելու համար, երբ ինքս իմ սովորեցրել ձեզ վրէժխնդիր չլինել չարի վրայ, այլ ներել ամեն վիրաւորանք և չարախօսութիւն։ Ապրեցէք սիրով և խաղաղութեամբ, իսկ անցեալը ներւած ու մոռացած է ամրողջովին։

Եւ ներշնչեց Որմիզդը իր հոգին իր աշակերտներին և շրջում էին նրանք ամենուրէք, քարոզելով Որմիզդի վարդապետութիւնը և հաչակելով սիկրն մի նոր դարագլուխ։

Նրանք ուսուցանում էին, ինչպէս իրանց ուսուցիչ Որմիզդը, որ բոլոր մարդիկ եղբայրներ են և պարտաւոր են եղբայրաբար ապրել։

«Սիրեցէք ամենքին,—քարոզում էին նրանք,—չտարբերելով ձերայիններին օտարներից, աշխատեցէք ոչ թէ ձեզ, այլ ուրիշների համար,

հոգացէք ոչ թէ ձեր, այլ ուրիշների մասին: Դուք ամենքդ պէտք էք իրար. դուք բոլորդ միասին՝ մի մարմին էք: Երբ ցաւում է մարդու ձեռքը, նրա հետ ցաւում է համանապէս ամբողջ մարմինը. այդպէս պէտք է լինի նաև մարդկանց մէջ. եթէ մի մարդ թշուառութեան մէջ է գտնւում, ամենքը պարտաւոր են մխիթարելու և օգնելու նրան: Ինչպէս որ քաժակի մէջ եղած գինու մի կաթիլը չի կարելի բաժանել միւսից, այդպէս էլ մարդիկ պէտք է ապրեն անբաժանելի սիրով և համերաշխութեամբ: Եթէ կսկսէք ձեր երջանկութեան յետից ընկնել, չէք գտնիլ այն. այլ կգտնէք միմիայն այն ժամանակ, երբ կը սկսէք հոգալ միմեանց երջանկութեան համար:

Մարդիկ ուրախութեամբ լսում էին նրանց և արտաքսելով չարը իրանց սրտերից. ընդունում էին այն բոլորը, ինչ որ քարոզում էին նրանք: Եւ երբ վերացաւ չարը մարդկանց սրտերից, ոչնչացաւ նաև Ահրիմանը՝ ինքը, որովհետև նա կենդանի էր միմիայն մարդկային չարութեան շնորհիւ: Եւ մնաց միայն յաւիտենական և լուսաւոր Որմիզդը:

Այսպէս վերջացաւ Ահրիմանի թագաւորութիւնը և սկսեց Որմիզդի ոսկեդարը, որ վաղճան՝ չպիտի ունենայ:

Երջանկութիւնը թագաւորեց երկրի վրայ և

սէրը իշխում էր ամենքին: Պատերազմները դադարեցին, սրերը խոփի փոխուեցին և նետակնորը՝ մանգաղի, թշնամութիւնը վերացաւ: Դատաւորները մնացին անգործ, ոչ ոք չէր գալիս նրանց մօտ դատի: Մարդիկ ապրում էին մինչև խորին ծերութիւն և երբ գալիս էր մահը, նրանք վերատրում էին նրան մխիթարական մաքուր խրոճով, իսկ մահից յետոյ միանում էին հոգով Որմիզդի հետ, որ կեանքի ապրիւրն էր, որից և իրանց կեանքն էին առացել:

Երկրի վրայ այլևս սուգի ձայն չէր լսւում, այլ ուրախութիւնն ու ցնծութիւնն էր, որ տիրում էր ամենուրեք՝ երկրի մի ծայրից մինչև մեւս ծայրը:

Թարգմ. Ռ. Մելիք-Ադամեան

ՊՈՍՏ

ՊՈՍՏԱՏՆԵՐԸ ՓԱԿ ԵՆ ԼԻՆՈՒՄ

Յունուարի 1-ին
Զատկի ուրբաթին
Մարտի 25-ին
Դեկտեմբերի 6-ին
և Դեկտեմբերի 25-ին

Բաց են լինում միայն առաւօտեան ժամը 8—10

Յունուարի 6
Փետրուարի 2
Ռուսաց Ս. Երրորդութեան օրերին
Ապրիլի 23
Մայիսի 6, 9, 14, 25
Յունիսի 29
Յուլիսի 22, 30
Օգոստոսի 6, 15, 29
Սեպտեմբերի 8, 14, 26
Հոկտեմբերի 1, 5, 21, 22
Նոյեմբերի 14, 21
Դեկտեմբերի 26, 27
Մեծ բարեկենդանի չորեքշաբթի օրը
Աւագ ուրբաթ և չորեքշաբթի օրերը
Զատկի երկրորդ օրը
Համբարձման օրը
Հոգեգալստեան և բոլոր կիրակի օրերը։

Հասարակ փակ նամակների քաշը պէտք է լինի՝ տեղականը 1 ֆունտից ոչ աւելի, օտար քաղաքներինը 5 ֆունտից։ Այն նամակները, որոնք փոստային վարչութիւնը պէտք է յանձնէ միմիայն պահանջողին, վերան պէտք է գրուած լինի (до востребованію) (գպահանջ), այսպիսի նամակները փոստը պահում է մինչև 6 ամիս։

Երբ հասցէի վրայարէն թոյլ է տրւում նշանակել պայմանական գրիչ կամ նշաններ։ Հասարակ նամակները օտար քաղաքներ ուղարկելու համար պէտք է կպցնել 7 կ. նամակադրոշմ. տեղականը —3 կոպ., մայրաքաղաքներում—5 կոպէկ։ Այն նամակներն ու ծրարները, որը ուղարկւում են ոչ պաշտօնական անձանց, կարելի է պակաս կամ առանց նամակադրոշմի ուղարկել, այդ դէպքում տուղդը պէտք է կրկնակին՝ օրինակ 7 կ. փոխարէն 14 կոպ. վճարէ ու տաննայ, կարող է և հրաժարուել տանելուց։ Այսպիսի ծրարների վրայ փոստ. վարչութիւնը գրում է «доплатное»։ Փակ նամակներով կարելի է զանազան փաստաթղթեր, պատկերներ եւն ուղարկել, բացի փողից։

Փակ նամակները ապահոված ուղարկելու համար, պէտք է վրան գրել «заказное», և տալի պէտք է վճարել 7 կոպ., արտասահմանին—10 կ. այսպիսի նամակների կորած դէպքում փոստային վարչութիւնը վճարում է 10 բուբլի, մի-

այն պէտք է ներկայացնել անդորրագրերը։

Թէ հասարակ և թէ փակ նամակների մէջ արգիլւում է փող դնել, նկատելու դէպքում փոստային վարչութիւնը իրաւունք ունի փողի $^1/_4$ մասը վերցնել իրրև տուգանք։

Բաց նամակները լինում են երկու տեսակ, առանց պատասխանի—3 կոպ., պատասխանով—6 կոպ, արտասահմանինը—4 կոպ., պատասխանով—6 կոպ.։ Բաց նամակները ապահովելու համար պէտք է տալի տալ 7 կոպ., իսկ արտասահմանինը—10 կոպէկ։

Բաց նամակների հասցէի կողմը ոչինչ չպէտք է գրել, հակառակ դէպքում փակ նամակի արժէքը է առնւում։

Փաթէներ (бандерольныя отправленія). Փաթեթներով կամ բաց ծրարներով կարելի է ուղարկել պետական տպագրական գործեր՝ գիրք, բլանկ, գործի թղթեր, փաստաթղթեր, տրամաբրութիւններ և այլն, ձեռագիր հեղինակութիւններ, ապրանքների նմուշներ, որոնք գին չունին, հաշւեցուցակներ և առհասարակ այնպիսի թղթեր, որոնք ընթացիկ նամակների կամ գրագրութիւնների բնաւորութիւն չունին։ Օտար քաղաքներ ուղարկելու համար պիտի ամեն մի լոտին վճարել 2 կ. տեղականը՝ տպագրական գործերին 1 կ. 1 լոտին, իսկ 1 լոտից աւելին 2 կ. ամեն 8 լոտին։ Փաթեթի քաշը կարող է լինել ոչ աւելի քան 4 ֆ. իսկ ապրանքների նմուշներ 28 լոտ։

Փաթեթները ապահովելու համար պէտք է վճարել ևս 7 կոպէկ։

Ծանրոցներ (посылки) լինում են գնահատած (цѣнная) և առանց գնահատութեան (безъ цѣны)։ Ծանրոցները պէտք է լինեն կամ արկղներով և կամ քաթանով կամ այլ պատատոով ամուր փաթաթած ու կարած։ Վերան կապած պէտք է լինի խաչաձև թոկով, որոնց ծայրերը կնքւում են փոստատան կնիքով։ Ընդհւում է ծանրոցների մէջ փակ նամակներ կամ փող դնել. նամակների համար ամեն 1 լոտից 1 բուր. տուգանք է առնւում, իսկ փողից $^1/_4$ մասը։ Հասցէն չի կարելի գրել թղթի վրայ։ Գնահատած ծանրոցների համար փոստը ոչինչ չի վճարում, գնահատած ծանրոցները 45,000 բուր., քարշը 3 փութից աւել չի կարելի։

Ծանրոցներ ուղարկելու համար ամբողջ կայսրութիւնը բաժանած է 3 գօտիի (մասի). 1) Եւրոպական Ռուսաստան՝ Սնդրկովկասի հետ միասին, 2) Արևմտեան Սիբիրը, Թուրքեստանը և Կասպեան երկիրը 3) Արևելեան Սիբիր։

Ծանրոցները ըստ քաշի բաժանւում են՝ ա. մինչև 2 ֆ., բ. 2—7 ֆ., գ 7—12 ֆ., դ. 12 ֆունտից աւելի։

Ծանրոցների համար պէտք է վճարել հետևեալ չափով։

Ծանրոցների քաշը	I գոտի	II գոտի	III գոտի	IV գոտի	Ամբողջ երկիրը
	կ.	կ.	ր.	կ.	ր.	կ.
ա. 2 ֆ.	25	35	—	45	—	65
բ. 2—7 ֆ.	45	65	—	85	1	25
գ. 7—12 ֆ.	65	85	1	25	1	85
դ 12 լից աւելի իւրաքանչիւր ֆունտի համար	5	10	–	15	—	20

Գնահատած ծանրոցների վերայ պէտք է գրել արժէքը «цѣнная посылка на (столько руб.)» և մանրամասն հասցէն: Իւրաքանչիւր ծանրոցի հետ պիտի ներկայացնել նրա համար յատկացրած առանձին բլանկը, որը сопроводительный листъ է կոչւում, վերան մանրամասն հասցէն գրած: Այս բլանկների վրայ է կպցւում ծանրոցների համար որոշած տուրքը:

Արտասահման ուղարկուող ծանրոցները 5 կիլոգրամ (12 ֆ. $6^1/_2$ լուսից) աւելի քաշ չպէտք է ունենան. ծանրոցի մեծութիւնը բոլոր կողմերից $13^1/_2$ վերշոկից երկար չպէտք է լինի, իսկ

դնահատութիւնը 187 ր. 50 կոպ. ոչ աւելի (500 ֆրանկ): Վերոյիշեալ չափի համեմատ ծանրոցների համար ուղարկելու վճար վերցնում են մինչև Գերմանիա և Աւստրիա 70 կոպ., բացի այդ և ապահովութեան տուրք, մինչև Ֆրանսիա—90 կ. նոյնպէս ապահովութեան տուրք:

Պահեստի տարեկ.—Ծանրոցների համար առաջին անգամ ծանուցագիրը տալուց 8 օր յետոյ եթէ չի առացւում, յանձնւում է երկրորդ անգամ ծանուցագիրը չրջաբերականով, որի համար և վերցւում է առաքազրութիւն: Այս երկրորդ ծանուցագրից գարձեալ 8 օր յետոյ եթէ չի առացւում ծանրոցը, ամենայն օր պահեստի համար (на храненіе) առնւում է 5 կոպէկ:

Թղթակաց ծրարների վրայ պէտք է գրել «денежный» և փողի քանակութիւնը: Այդպիսի ծրարները պէտք է յանձնել առաքանաւորին, որպէսզի նա առաւել զգուշութեամբ գարիւր է ուղարկել թղթագրամ, տոկոսաթեր թղթեր, կլբրոններ և այլն: Ծրարի քաշը 20 ֆ. ոչ աւելի:

Թղթակաց ծրարները ուղարկելու համար պէտք է վճարել 7 կոպ. ամեն մի լուսին, պատուէր և անդորրագրի համար—7 կոպ. և ապահովութեան տուրք:

Ապահովաթեաց տարեկ. վճարւում է մինչև 600 ր. գումարին, ամեն բուբլուց $^1/_4$ կո-

պէկ, 600—1600 բուբլուն $^1/_4$ կոպ. և 1 բուբ. 50 կոպ. միանւագ. 1600 ր. գումարից աւելին $^1/_8$ կոպ. և էլի 3 ր. 50 կ. միանւագ։

Ցրժէքաւոր ծրարների (цѣнные пак.) վրայ պէտք է գրել «цѣнный»։ Այսպիսի ծրարներով կարելի է ուղարկել արժէքաւոր թղթեր՝ արժեթղթեր, մուրհակներ, իրեզնններ, փող, միայն ոչ աւել 1000 բուբլուց։

Բայց արժէքաւոր ծրարները 15000 ր. աւելի դնահատել չի կարելի, իսկ փակ արժէքաւոր ծրարները 500 ր. ոչ աւելի։

Արժէքաւոր ծրարները և ձանրոցները կարդնելու դէպքում փոստի վարչ. պատասխանատու է։ Այդ դէպքում պէտք է յայտարարութիւն տալ (заявленіе) 2 տարւայ ընթացքում, իսկ պատասխանի համար 1 տարւայ։ Յայտարարութեան հետ պէտք է ներկայացնել անդորրագրերը (квитанція)։

Վերադիր վճարով կարելի է ուղարկել ձանրոցներ, ապահոված նամակներ և փաթեթներ։ Վերան պիտի գրել «съ наложеннымъ платежемъ» և փողի գումարը. ստացողը նախ պէտք է փողը վճարէ, ապա ստանայ։ Վերադիր վճարը կարելի է անել 200 ր. ոչ աւել։ Վերադրի համար պէտք է վճարել իւրաքանչիւր բուբլուն 2 կոպ., սակայն 10 կոպ. ոչ պակաս։

ԿԱՐՃՐԱՑ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՁԵՒԸ

վարձատրութիւն պահանջելու համար պէտք է փոստի վարչութեան անունով տալ հետեւեալ ձեի յայտարարութիւն.

Г-ну Начальнику такой-то Почтово-Телеграфной Конторы (или такого-то Почтоваго Отдѣленія).

Такого-то, жител., тамъ-то.

Заявленіе.

Изъ прилагаемыхъ при семъ увѣдомленія за № 00 и почтовой росписки отъ 7-го марта сего года за № 00 видно, что заказной пакетъ, высланный мною тогда-то, утраченъ въ пути и не полученъ адресатомъ, въ виду чего прошу о выдачѣ мнѣ за утраченную корреспонденцію установленнаго вознагражденія

Годъ, мѣсяцъ, число.

Подпись

ՏԵՂ. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Յանձնացնելի (посылка) *և փաթեթների* (бандероль), *արտում այս ձևով յայտարարութիւն փոստի վարչութիւնը.*

(Վերնագիրը մնալու է նոյնը)

Заявленіе.

Такого-то числа, подъ почтовую роспиcку за № 00 сдана мною во ввѣренную Вамъ контору (или Отдѣленіе) посылка (бандероль, заказное письмо), адресованное туда то, на имя такого то. Посылка эта, какъ видно изъ полученнаго мною письма, до настоящаго времени не передана адресату. По этому, прилагая при семъ упомянутую расписку въ подлинникѣ (или засвидѣтельствованной копіи), прошу Васъ, Мылостивый Государь, извѣсти справку о причинѣ такой неисправности и о результатѣ справки сообщить мнѣ, по мѣсту моего жительства въ—

Годъ, мѣсяцъ, число.

Подпись.

Փոստաթղթերը փոստով *փոխադրելու* (переводъ по почтѣ) *համար մինչև 25 ր. 15 կոպ. մինչև 100 ր. - 25 կ., 100—125 ր. 40 կ., 125—200 ր. - 50 կ., 200—225 ր. 65 կ., 225—300 ր. 75 կ., 300—325 ր. 90 կ., 325—400 ր. 1 ր. 400—425 ր. 1 ր. 15 կ., 425 - 500 ր. 1 բար. 25 կ., իսկ 500 ր. աւելի փոստով չի կարելի փոխադրել:*

Հեռագրով փոխադրելիս (переводъ по телеграфу) *պէտք է բացի վերյիշեալ տուրքից տալ և հեռագրի 20 խօսքի վճար ըստ տուրիֆի:*

Փողի փոխադրութիւնները կատարւում են առանձին բլանկներով, որի վրայ կպցւում է փոխադրութեան արժէքի համեմատ մարկաներ, իսկ հեռագրով փոխադրելու դէպքում վճարում են կանխիկ փող:

Արտասահման փոխադրութիւն կատարւում է միմիայն փոստով: Միացեալ նահանգները ընդունում են մինչև 200 ր (100 դոլար), Աւստրօ Ունգարիա—254 կօն (100 բար.), Գերմանիա—216 մարկ (100 ր.), Բելգիա—266 ֆրանկ, Զվէյարիա—266 ֆր., Ֆինլանդիա—100 ր., Ֆրանսիա—266 ֆրանկ:

Լրագրների առաքման վճարը.—*Տարին վեց անգամ հրատարակւող թերթից փոստը վեր-*

ցնում է թերթի բաժնեգնի 8%-ը, ամսաթերթից—10%, երկշաբաթաթերթից—12%, շաբաթաթերթից—14%, շաբաթը երկու անգամ հրատարակվոլից—16% և օրաթերթից 18%:

Ամենապակաս գինը ամբողջ տարւայ համար 40 կոպ., շաբաթաթերթից—80 կ., շաբաթը երկու անգամ հրատարակվողից 1 ր. և օրաթերթից—1 րուբլի 10 կոպէկ:

ՀԵՌԱԳԻՐ

Իւրաքանչիւր հեռագրի համար պէտք է վճարել 15 կ., բացի այս, ամեն բառին 5 կոպէկ Եւրոպական և Ասիական Թուրքաստանի սահմաններում. առաջինի մէջ մտնում է Կովկասը, երկրորդի մէջ՝ Ընդերկասպեան երկիրը: Առաջին մասից երկրորդ մասը բառի վճարն է 10 կոպէկ: Քաղաքային հեռագրի բառին 1 կոպ. Հեռագրի մէջ ամենաերկար թօռքը 15 տառից տւել չպէտք է լինի: Ընդդէմ-ծառը մի բառ է հաշւում, տիրէ, չակերտ, կէտ, փակագիծ չի հաշւում, թւանշանները 5 թւանշանը մի թօռք է հաշւում, թւանշանի կարգում իւրաքանչիւր կէտ հաշւում է մի թւանշան:

Երբ ուզում են, որ հեռագիրը անմիջապէս

ուղարկւի, առանց յետաձգելու, վերան գրում են «срочная», այսպիսի հեռագրին սովորականի երկու հրեք անգամ տւել պէտք է վճարել:

Պատասխանով հեռագիր ուղարկելու համար պէտք է գրել «ответъ уплаченъ», սրա համար հեռագրատունը կատանի 10 թօռքի վճարը: Յանկացողը կարող է տւել կամ պակաս վճարել, դրա համար պիտի գրել «ответъ 18 словъ կամ 6 словъ»: Միևնոյն հեռագիրը մի քանի հասցէներով ուղարկելու համար պէտք է վճարել իւրաքանչիւր հեռագրին 10 և թօռքին 15 կոպ.:

Միջազգային հեռագրները կարելի է գրել լատիներէն տառերով և բոլոր Եւրոպական և մի քանի ասիական լեզուներով: Վճարը իւրաքանչիւր երկրի համար տարբեր է.

Աւստ. Ունգ.	11 կ.	Նօրվեգիա	16 կ.
Անգլիա	22 »	Նիդերլանդ	14 »
Բելգիա	17 »	Շվէյցիա	14 »
Բուխարա	10 »	Շվեցարիա	17 »
Բուլղարիա	9 »	Չերնօգորիա	17 »
Գերմանիա	11 »	Պօրտուգալիա	23 »
Դանիա	15 »	Պարսկ. (Հիւս.)	24 »

Եապոնիա	1 ր. 95 կ.	Պարս. (Հար.)	34 կ.
Իսպանիա	21 «	Սերբիա	15 »
Իտալիա	18 »	Տանկաստ.	16 »
Հոլանդիա	14 »	Բուլղարիա	8 »
Ցունաստան	23 «	Փրանսիա	15 »

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴԱՆԶԱՐԱՆՆԵՐ

Խնայողական դանձարանների նպատակն է տպքատ ի չունևոր մարդկանց միջոց տալ հատուկտիլու մի փոքրիկ գումար, իրենց աշխատանքից յատ ղյած փողով։

Բանուորները, արհեստաւորները իրենց շաբաթական աշխատանքի որոշ մասը յատ պղելով, կարող են յանձնել դանձարանին (եթե իրանց մօտ մնաք գույէ ծախսէին) և ապագայում կունենան մի բաւականին մեծ գումար։ Այսպէս կարող են անել և ծնողները իրանց անչափահաս որդոց համար։

Խնայողական գանձարան կարելի է յանձնել 25 կոպէկից սկսած մինչև 1000 րուբլի։ Ընկերութիւնների և հիմնարկութիւնների համար—

3000 րուբլի, իսկ եկեղեցիների համար սրքան կամենան։

Խնայողական դանձարանը իր վերցրած փոդերի համար վճարում է հետևեալ չափով տոկոս.

1) Մինչև 1000 ր. տարեկան $3^{6}/_{10}\%$։

2) Հիմնարկութիւնների և ընկերութիւնների 1000 ր. գումարների համար $3^{4}/_{10}\%$։

Տոկոսը հաշուում է ամսի 1-ից միայն ամբողջ ամիսների համար։ Մի րուբլուց պակաս գումարին տոկոս չի տրուում։

Փողը ում անունով որ յանձնուում է դանձարանը, պատնում է նրա սեփականութիւնը։ Ամեն մարդ իրաւունք ունի ուրիշի անունով փող դնել դանձարանը և փողի տէր կը դառնայ նա, որի անունով դրած է։

Խնայողական դանձարանը իր ստացած փոդերը դրում է առանձին տետրակի մէջ և տալիս փողի տիրոջը։ Եթե մնանում է այն մարդը, որի անունով դրած է փողը, այդ դէպքում խնայողական դանձարանի փողը կարող են ստանալ միայն նրա ժառանգները, երբ նրանք օրինական կարգով կհաստատուին։ Փող յանձնողը ամեն ժամանակ կարող է յատ պահանջել իր փողերը, իսկ դանձարանը պարտաւոր է կատարել նրա պահանջը։

Խնայողական դանձարանները բացած են պատահական հիմնարկութիւններին և պատական դանձարաններին կից։

Խնայողական մարկաներ

Խնայողական մարկաները սահմանուած են նրա համար, որ ունեցի դիւրութիւն տալ մարդկանց ամենափոքր գումարներ նոյն իսկ խնայել։

Խնայողական մարկաները լինում են 5 և 10 կոպէկանոց և վաճառւում են խնայողական դանձարաններում և փոստատուներում։

Այս մարկաները պէտք է կպցնել առանձին քարտերի վրայ, որոնք տրւում են ձրի։ Երբ այս ձևով մի ռուբլին լրանայ, քարտերը կարելի է ներկայացնել խնայողական դանձարանը և տեղի մէջ գրել տալ։

Այսպիսի հեշտ ձևով կարելի կը լինի ձեռք բերած 5—10 կոպէկներով ժամանակի ընթացքում նեղ օրի համար մի գումար մնտռհանել։

ԲԱՂԴ ԲԱԺԱՆՈՂ

ԱՆԱՆԴՈՒԹԻՒՆ

—Ո՞ւր ես դու, ով բաղդ բաժանող, ինչո՞վ եմ ես քո առաջ մեղաւոր, որ միշտ կարօտ եմ, միշտ ցրկած և մինչև երբ պիտի այսպէս չարքաշ կեանք անենամ։

Ահա այդպէս գանգատւում էր իր բաղդից մի աղքատ մարդ։

Նա խօսքը դեռ չէր վերջացրել, յանկարծ նրա առաջ կանգնեց մի ալեզարդ ծերունի, բոլորակազգեստ հագած։

—Ես եմ բաղդ բաժանողը, ասաց նա, ասա, ինչ ես ուզում ինձանից, ես քեզ ամեն բան կը տամ, ինչ որ սիրտը ցանկանում է։

—Ես ուզում եմ մի մեծ հոյակապ տուն։

—Շատ լաւ, յիմա՛յ։

—Յետոյ, ուզում եմ ունենալ երկու սրգի։

—Զարմանակի՛ր։

—Ուզում եմ հարիւր հազար րուբլի փող, այգիներ, հողեր, ամարանոցներ...

—Է՛լ ինչ։

—Ուզում եմ լաւ ձիեր, սլացիկ հօտեր, սպարակներ, կառքեր։

— Ջատ լաւ, այդ ամենը քեզ կատամ, բայց կատամ միայն մի պայմանով։ Դու ունես մի եղբայր, որը նոյնպէս կարօտ է ու չքաւոր. ինչ որ դու կատանաս ինձանից, նրա կրկնակին կատանայ քո եղբայրը։ Եթէ այդ պայմանին համաձայն ես, պահանջիր ինձանից, ինչ որ քո սիրտը թելադրում է, ես ոչինչ չեմ խնայիլ։

Խոր մտքի մէջ ընկաւ մեր հերոսը, մի ակընթարթում չքացաւ նրա ուրախութիւնը. այդ բոլոր բարիքները անհրաժեշտ էին նրան, — բայց հէնց որ մտածում էր, որ իր եղբայրն էլ պիտի առանայ նոյնը և այն էլ երկու անգամ աւելի, — նորից արտմում էր։ Հարստութիւնն իղձը և նախանձը սկսեցին կուել նրա մէջ. երկու զգացմունքներն էլ ուժեղ էին։

— Ես ժամանակ չունիմ, ասաց ծերունին, չուտով սրոշիր, թէ ինչ ես ուզում։

— Ոչինչ, պատասխանեց նախանձառ հերոսը։ Ուզում եմ միայն, որ իմ աչքերից մէկը հանես։

Հասկացաւ ծերունին անգութ եղբօր չար միտքը։

— Լաւ, ասաց ծերունին, մէկնեց ցուցամատը և հանեց նրա մի աչքը։

Կսկծաց, մրմնջաց նախանձառ եղբայրը և իսկոյն վազեց տեսնելու իր գոյգ աչքերից զրկած կրտսեր եղբօրը և սրանով մխիթարելու։ Սակայն նա գտաւ եղբօրը ոչ և առողջ։

Չարամիտը վրդովուեց, նրա ցաւը կրկնապատկուեց։ Նա վերադարձաւ տուն, ուր բոլոր բժշկողը սպասում էր նրան։

— Ինչո՞ւ խաբեցիր ինձ, ինչո՞ւ չհանեցիր իմ եղբօր երկու աչքերը, չէ՞ որ մեր պայմանը այդպէս էր։

— Այո՛, այդպէս էր, ասաց ալեզարդը անվրդով, և այդպէս էլ է։ Ես ասացի՝ ինչ որ դու կատանաս ինձանից, նրա կրկնակին կատանայ քո եղբայրը։ Այդ քո մի աչքն էլ, որով դու այժմ տեսնում ես, իմ տածն է։ Եւ որովհետև դու մի աչք ունիս, քո եղբայրը պիտի ունենայ երկուսը։

Այդպէս խօսեց ծերունին և աներևոյթացաւ օդի մէջ։

Ի. Մարկոսեան

ՕՐԷՆՍԳԻՏԱԿԱՆ

Չինուորագրական կանոններ

Տղամարդիկ առանց բացառութեան ենթարկուում են զինուորագրութեան։ Չինուորական ծառայութեան գնալը որոշուում է վիճակով, որ հանուում է իւրաքանչիւր անձն միմիայն մի անգամ իր կեանքում։ Վիճակահանութեան են ենթարկուում այն 21 տարեկան անձինք, որոնք ծնուել են մինչև այդ տարւայ հոկտեմբերի 1-ը, իսկ հոկտեմբերի 1-ից յետոյ ծնուածները կանչուում են հետևեալ տարին։

Ամենակարճ հասակը զինուորագրութեան համար համարուում է $2^1/_2$ արշ. 2 վերշ.։ Այն անձինք, որոնք այնպիսի հիւանդութիւն ունին, որ բոլորովին չեն ազատուում զինուորական ծառայութիւնից կամ թէ ֆիզիքապէս բոլորովին զարգացած չեն և կամ երկար հիւանդութիւնից յետոյ դեռ ևս չեն կազդուրւած, այդպիսիներին տրուում է մի տարի ժամանակամիջոց, եթէ տարին լրանալուց յետոյ դարձեալ ծառայութեան անյարմար են համարուում, երկին տրուում է մի տարի ժամանակամիջոց։ Հակառակ դէպքում նրանք կամ համարուում են պահեստում, եթէ ընդունակ են դէնք կրելու, կամ անընդունակութեան պատճառով ընդմիշտ ազատուում են։

ԱՐՏՕՆԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. 45. Առաջին կարգի արտօնութեամբ օգտուում են. ա) միակ աշխատանքի ընդունակ որդին, որի հայրը աշխատանքի անընդունակ է, կամ մայրը այրի. բ) միակ աշխատանքի ընդունակ եղբայրը, որ ունի մէկ կամ մի քանի որբ եղբայրներ կամ քոյրեր. գ) միակ աշխատանքի ընդունակ թոռը, որի պապը կամ տատը աշխատանքի ընդունակ որդի չունին. դ) ընտանիքի միակ որդին, եթէ մինչև անգամ նա ունենայ աշխատանքի ընդունակ հայր. ե) այն ապօրինածին զաւակը, որի հօգացողութեան տակ է աշխատանքի ընդունակ ուրիշ որդիք չունեցող իր մայրը կամ քոյրը կամ թէ աշխատանքի անընդունակ եղբայրը։

Այս արտօնութեամբ օգտւում են նաև ա) աշխատանքի անընդունակ անհրոջ կամ այրի զոքանչի ընտանիքում միակ աշխատանքի ընդունակ փեսան, եթէ վերջինս տարում է անհրոջ կամ այրի զոնքանչի հետ միևնոյն տնտեսութեամբ և կամ նրա հետ մի ծուխ են կազմում, (անփեսայ) և բ) ընտանիքաւոր միայնակները։

Երկրորդ կարգ.—Աշխատանքի անընդունակ միակ որդին, որի հայրը նոյնպէս աշխատանքի ընդունակ է, բայց որը ունի մէկ կամ մի քանի աշխատանքի անընդունակ եղբայրներ (յօդ. 46)։

Երրորդ կարգ.—Այն անձը, որ ամբիծ ան-
միջապես հետևում է այն եղբորը, որը պինտրա-
կոչով իսկական ծառայության մեջ է գտնում,
կամ մեռել է այդ ծառայության մեջ և կամ
անյայտ կերպով կորել է պատերազմում։

ՅՈՒՈՓ. Այն օտար պատվիները, որոնք որդի
ըրել են օրինական ճանապարհով մինչև 10 տա-
րեկան հասակը, համարւում են հարազատ որդիք։

Յօդ. 46. Ընտանիքի մէջ աշխատանքի բե-
դունակ համարւում են 18 տարեկանից մինչև 55
տարեկան անձինք, բացի հետևեալ անձնաւորու-
թիւններից. 1) հիւանդութեան պատճառով աշ-
խատել չկարողացողները. 2) ուքսուրածները. 3)
երեք տարի անյայտութեան մէջ կորածները, և
4) պինտրական հաստատ ծառայութեան մէջ
գտնուածները։

Առաջին և երկրորդ կարգի ուրուհուիների
ունեցողները զրկւում են իրենց ուրուհուիից,
եթէ նրանց հայրը կամ մայրը, պապը կամ մամ
յայտնում են, որ նրանք ընտանիքի պահպանու-
թեան համար չեն ծառայում։

Յօդ. 47. Ուրուհուիի ունեցողները պինտ-
րական ծառայութեան են կանչւում միայն այն
դէպքում, երբ նորակոչ պինտրների թիւը լրա-
նելու համար բաւական չեն լինում վիճակահա-
նութեան կանչածները։

Յօդ. 201. Այն զանգաանները, որոնք ուրուհում
են մանուսը պինտրակոչական ցուցակներ կազ-
մող հիմնարկութիւնների և պաշտօնատարներ ան-
ձանց դէմ այդ ցուցակների մէջ մտցրած ան-
ճշտութիւնների մասին, պէտք է ներկայացնեն
երկու շաբաթուայ ընթացքում, հաշուելով մանուս
պինտրակոչական ցուցակները ներկայացնե-
լու համար 118 րդ յօդ. որոշած վերջնական
ժամանակամիջոցի օրից (մայիսի 1-ից)։

Յօդ. 205. Գաւառական շրջանի և քաղաք-
յին տեսանների դէմ ուղղ զանգատները, – թէ
պինտրակոչական ցուցակների անճշտութեան վե-
րաբերմամբ, թէ ուրուհութիւններ նշանակելու և
թէ ծառայութեան պիտանի լինելու վերաբեր-
մամբ ներկայացնում են նահանգական կամ վիճա-
կային պինտրադրական տեսանների 4 շաբաթ-
ուայ ընթացքում, հաշուելով վճիռը հաշուելու օրից։

Յօդ 211. Ուրուհութիւններ նշանակելու ան-
ճշտութիւնները և կամ պինտրական ծառայու-
թեան համար պիտանի լինելը որոշ անճշտու-
թիւնների համար ուրած զանգատների մասին՝
նահանգական կամ վիճակային տեսանների կա-
յացրած վճիռների դէմ, թոյլ է ուրում զանգատ
ներկայացնել Կառավարիչ Սենատին (առաջին
ուսուցարանում) 2 ամսուայ ընթացքում, հաշուելով
վճիռը յայտնելու օրից։

Այն խնդիրները կամ բողոքները, որոնք վերաբերում են զինուորագրության, ազատ են դրամագլուխից — մարկաներից։

Կամաւոր զինուորներ (вольноопредѣляющійся): Առաջին կարգի կամաւոր զինուոր կարող են լինել նրանք, որոնք բարձր կամ միջնակարգ կրթություն ունին (գիմնազիայի և ըէալական պլոշչի 6-րդ դասարանից ոչ պակաս) և այդպիսիք ծառայում են միայն մի տարի։ Երկրորդ կարգի զինուոր կարող են լինել նրանք, որոնք պահանջած ծրագրի համեմատ քննություն կտան և նրանց ծառայությունը երկու տարի է։

Կամաւոր զինուոր լինելու համար պէտք է խնդիրը տալ ամենաուշը վիճակահանության օրից երկու ամիս առաջ։

Կամաւոր զինուոր ընդունում են ամեն ժամանակ, ծառայությունները հաշւում է պահեստան ժամանակներից։ Ծառայության մանելու համար խնդրի հետ պէտք է ներկայացնել հետևեալ փաստաթղթերը. 1. զինուորական գրասկի մէջ մտած լինելու մասին. 2. ծնողների համաձայնության. 3. առողջության վկայագիր. 4. իր ստորագրության, իրաւունքներից զրկած չլինելու մասին. 5. ծնողների կամ բարեկամների ստորագրության, որ իրենց հաշւով պահում են զինուորին. 6. ուսման վերաբերեալ վկայագրերը և այլն։

ԴՈՐԱԿՈՉ ՉԻՆՒՈՐՆԵՐԻ ՉԱՓԸ

Բոյը				Կուրծքը			
2	արշ.	$2^1/_8$	վերշոկ.	1	արշ.	$1^1/_8$	վերշոկ.
2	»	$2^3/_8$	»	1	»	$1^3/_8+^1/_{16}$	
2	»	$2^5/_8$	»	1	»	$1^5/_8$	
2	»	$2^7/_8$	»	1	»	$1^5/_8+^1/_{16}$	
2	»	3	»	1	»	$1^6/_8$	
2	»	$3^1/_8$	»	1	»	$1^6/_8+^1/_{16}$	
2	»	$3^3/_8$	»	1	»	$1^7/_8$	
2	»	$3^5/_8$	»	1	»	$1^7/_8+^1/_{16}$	
2	»	$3^7/_8$	»	1	»	2	
2	»	$3^5/_8$	»	1	»	$2^1/_{16}$	
2	»	$3^6/_8$	»	1	»	$2^1/_8$	
2	»	$3^7/_8$	»	1	»	$2^1/_8+^1/_{16}$	
2	»	4	»	1	»	$2^2/_8$	
2	»	$4^1/_8$	»	1	»	$2^2/_8+^1/_{16}$	
2	»	$4^2/_8$	»	1	»	$2^3/_8$	
2	»	$4^3/_8$	»	1	»	$2^3/_8+^1/_{16}$	
2	»	$4^4/_8$	»	1	»	$2^4/_8$	
2	»	$4^5/_8$	»	1	»	$2^4/_8+^1/_{16}$	
2	»	$4^6/_8$	»	1	»	$2^5/_8$	
2	»	$4^7/_8$	»	1	»	$2^5/_8+^1/_{16}$	
2	»	5	»	1	»	$2^6/_8$	
2	»	$5^1/_8$	»	1	»	$2^6/_8+^1/_{16}$	
2	»	$5^3/_8$	»	1	»	$2^7/_8$	
2	»	$5^5/_8$	»	1	»	$2^7/_8+^1/_{16}$	
2	»	$5^7/_8$	»	1	»	3	
2	»	$5^1/_8$	»	1	»	$3^1/_{18}$	
2	»	$5^5/_8$	»	1	»	$3^1/_8$	
2	»	$5^6/_8$	»	1	»	$3^1/_{18}+^1/_{16}$	
2	»	$5^7/_8$	»				

արշ	լայը	վնրշոկ.	արշ.	կաւրձքը.	վնրշ.
2	ր	6 »	1	»	$3\frac{2}{8}$
2	»	$6\frac{1}{8}$ »	1	»	$3\frac{2}{8}+\frac{1}{16}$
2	»	$6\frac{2}{8}$ »	1	»	$3\frac{3}{8}$
2	»	$6\frac{3}{8}$ »	1	»	$3\frac{3}{8}+\frac{1}{16}$
2	»	$6\frac{4}{8}$ »	1	»	$3\frac{4}{8}$
2	»	$6\frac{5}{8}$ »	1	»	$3\frac{4}{8}+\frac{1}{16}$
2	»	$6\frac{6}{8}$ »	1	»	$3\frac{5}{8}$
2	»	$6\frac{7}{8}$ »	1	»	$3\frac{5}{8}+\frac{1}{16}$
2	»	7 »	1	»	$3\frac{6}{8}$
2	»	$7\frac{1}{8}$ »	1	»	$3\frac{6}{8}+\frac{1}{16}$
2	»	$7\frac{2}{8}$ »	1	»	$3\frac{7}{8}$
2	»	$7\frac{3}{8}$ »	1	»	$3\frac{7}{8}+\frac{1}{16}$
2	»	$7\frac{4}{8}$ »	1	»	4
2	»	$7\frac{5}{8}$ »	1	»	$4\frac{1}{16}$
2	»	$7\frac{6}{8}$ »	1	»	$4\frac{1}{8}$
2	»	$7\frac{7}{8}$	1	»	$4\frac{1}{8}+\frac{1}{16}$
2	»	8 »	1	»	$4\frac{2}{8}$
2	»	$8\frac{1}{8}$ »	1	»	$4\frac{2}{8}+\frac{1}{16}$
2	»	$8\frac{2}{8}$ »	1	»	$4\frac{3}{8}$
2	»	$8\frac{3}{8}$ »	1	»	$4\frac{3}{8}+\frac{1}{16}$

ԿՏԿԻ ԾՐԻՆԸԿ

Ծանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Հազար ինն հարիւր տասներկու թվի Սեպտեմբերի 15-ին Ալէքսանդրապոլ։

Ես ի Ներքոյ ստորագրող Ալէքսանդրապոլ քաղաքի բնակիչ Բագրատ Սարգսեան Պետրոսեանցս լինելով առողջ և ուշիմ մտօք, կատկում եմ իմ ունեցած չարժական և անչարժ կայքերը իմ մահուանից յետոյ հետևեալ կարգով։

1) Իմ սեփական անչարժ կալւածները, որոնք գանւում են Ալէքսանդրապոլ քաղաքում, իր բոլոր հողերով ու շինութիւններով. կտակում եմ իմ մահուանից յետոյ լիովին սեփականութիւն իմ եղբօր որդի վաճառական Մինաս Գէորգեան Պետրոսեանին այն պայմանով, որ նա՝ Պետրոսեանը տայ մի հազար րուբլի (1080 ր.) տեղիս Ողբաստանեայ ընկերութեան, և այս, նա, Մինաս Պետրոսեանը պարտաւոր է կատարել իմ մահուանից յետոյ, մէկ ու կէս տարւայ ընթացքում։

2) Իմ սեփական երկյարկ տունը, իր շրջապատի տաոն ու մէկ կրպակներով, որ գանւում է Ախալքալակի առաջին քաղաքամասում № 49—60 իրենց բոլոր հողերով ու շինութիւններով կատկում եմ տեղիս Բարեգործական ընկ. ճիւղին այն

պայմանով, որ Բարեգործական ընկերութիւնը յիշեալ եկամուտից մի ամն ոյտէ մշտական հայոց միջնակարգ դպրոցներում։

3) Իմ օրինաւոր կնոջը Սօֆիա Պետրոսեանին կտակում եմ իմ մահուանից յետոյ օգուտել իմ բոլոր փողի տոկոսով, որը գտնւում է Թիֆլիսի Պետական գանձարանում։

4) Իմ բոլոր առձեռն փողերը, որոնք չեն յիշատակուած կտակիս մէջ, թող լինի սեփականութիւն իմ հաւատարիմ ծառայ Մնացական Սիրակեանցին։

5) Խնդրում եմ իմ ընտրած կտակակատար Մինաս Գէորգեան Պետրոսեանցին կատարել իմ վերջին կամքը կտակիս համաձայն։ Այս կտակը, որ գրել եմ ես իմ ձեռքով, ստորագրում եմ Բագրատ Սարգսեան Պետրոսեանց։

Վկայ եմ, որ այս կտակը գրել և ստորագրել է Բագրատ Սարգսեան Պետրոսեանցը, որ ունէր առողջ գատողութիւն և լաւ յիշողութիւն՝ ծխատէր Գարապետ քահանայ Տէր-Մկրտչեան։

Վկայ եմ հերկրորդ կարգի վաճառական Պաւլիթ Նասիբեանց։

Վկայ եմ Պետրոս Առաքելեան։

ՊԱՏՃԱՌԻ ՕՐԻՆԱՆՆԵՐ

II.

Հազար լիռն հարիւր տասներկու թվի Դեկտեմբերի երեքին, Ալէքսանդրապոլ։

Մենք ի ներքոյ ստորագրող Ալէքսանդրապոլ քաղաքի բնակիչ Միսաք Մարգարեանցս և Հայկ Սահակեանցս կտակեցինք մեր մէջ հետեւեալ պայմանը. 1) Ես Միսաք Մարգարեանցս ուի քրէհով իս սեփական տունը (կամ կրպակը), որ գտնւում է քաղաքիս առաջին մասում № 25 և բաղկացած է չորս սենեակից Հայկ Սահակեանցին մի տարի ժամանակով, տարեկան քրէհն է մի հարիւր քսան րուբլի (120 ր.) վերոյիշեալ թւից մինչև տարին լրանալը. 2) Տարեկան քրէհ հարիւր քսան րուբլին Սահակեանցը պարտաւոր է վճարել երեք քառամսեակում (արէթ), իւրաքանչիւր քառամսեակի սկզբում քառասուն րուբլի (40 րուբլի) ճշտութեամբ. 3) Սահակեանցը պարտաւոր է տունը իր ջրջակայքով կանոնաւոր մաքրութեան մէջ պահել և ոստիկանութեան արած նկատողութիւններին պատասխանատուն ինքն է. 4) Պայմանաժամը լրանալուն պէս Սահակեանցը պարտաւոր է դուրս գալ տանից և տունը նոյնութեամբ յանձնել ինձ, ինչպէս ստացել էր. 5) Ես Մարգարեանցս տարին չլրացած իրաւունք չու-

նիմ Սահակեանցին տանից դուրս հանելու, նոյնպէս և Սահակեանցը չունի իրաւունք դուրս գալու, եթէ մեր մէջ համաձայնութիւն չկայանայ. 6) Այս պայմանից զրկից երկու օրինակ. իսկականը մնալու է կալուածատիրոջ՝ Մարզպետեանցի մօտ, իսկ նոյն սառպագրութիւններով վաւերացած պատճէնը—Սահակեանցի, որի վրայ պէտք է գրել վճարած փողերի քանակութիւնը պատշաճաւոր սառպագրութեամբ. 7) Մեղանից իւրաքանչիւրն էլ պարտաւոր է մաքուր և անարատ պահել այս պայմանը. 8) Ով որ այս պայմանի որևէ կէտը խախտէ, պարտաւոր է արդար կողմին վճարել իրրև տուգանք երկու հարիւր բուրլի:

Ես որ սառպագրում ենք Միսաք Մարզպետեանց, Հայկ Սահակեանց:

Վկայ ենք՝ Մնացական Երիցպետեանց, Դաւիթ Խաւսպետեանց:

Բ.

Հազար լիւն հարիւր տասներկու թվի Յուլիսի 10 ին: Ես ի ներքոյ սառպագրող գործակատարների համաքարից վարպետ Պետրոս Յակոբեանցս ընդունեցի իմ գործակատարութեան գործատանում գործակատարութեան արհեստը սովորեցնելու համար իմ համագործակցի Սեդրաք Նասիբեանցի որդուն՝ Բաբոյին, վերոյիշեալ թվից հինգ տարուայ ընթացքում, հետևեալ պայմանով.

1) Ես պարտաւոր եմ Նասիբեանին կանոնաւոր սովորեցնել գործակատարութեան արհեստը, չպահանջելով նրա գործից՝ Սեդրակ Նասիբեանից ոչ մի կոպէկ սրա համար վարձատրութիւն. 2) Ամբողջ պայմանաժամի ընթացքում պարտաւոր եմ կերակրել նրան անդադար կերակուրներով և հագցնել մաքուր ու կանոնաւոր. 3) Թէև ծանր աշխատանքներով չեմ է ծանրաբեռնեմ նրան և նրա գործած յանցանքների համար մարմնական պատիժ չեմ է գործ դնեմ, այլ պէտք է յանդիմանեմ խօսքերով և երբ նա այս կերպով չուղղուի, պէտք է պայմանը խախտած համարել և նրան վերադարձնել իր տօրը. 4) Հինգ տարի ժամանակամիջոցը չլրացած Սեդրաք Նասիբեանցը իրաւունք չունի իր որդուն իմ գործատանից հանելու, նոյնպէս և ես չունիմ իրաւունք հեռացնելու, եթէ տեղի չէ ունեցել երբևէ կէտում յիշած պատճառը. 5) Այս պայմանից զրկից երկու օրինակ, իսկականը մնալու է Պետրոս Յակոբեանի մօտ, իսկ պատճէնը Սեդրաք Նասիբեանցի, որը պարտաւոր ենք մաքուր և անարատ պահել: Պետրոս Յակոբեանց. Սեդրաք Նասիբեանց: Վկայ ենք Յովսէփ Կարապետեանց, Մարտիրոս Արծաւուեանց:

ԿԻՆԸ

Վ. Բելինսկի

Ամեն կնոջը, քան ազամարդուն ինքը բնութիւնն ստեղծել է սիրոյ համար։ Կինը՝ երկրաւոր արտայայտիչ և պահպանող ուժի նկարագրուցիչն է. մինչդեռ ազամարդը՝ վերացականը, իմացականը։ Այստեղից առաջ է գալիս կնոջ ու տղամարդու մէջ եղած մեծ տարբերութիւնը՝ բնականական կեանքի մաքով։

Կինը մայր է կոչումով, հոգով ու արիւնով։ Մայրը՝ կինդանի, իրական, փաստացի գոյութիւն ունեցող մի հասկացողութիւն է, իսկ հայրը՝ ոչ այնքան չափով, պայմանական, չատրերական հասկացողութիւն։

Մայրը սիրում է իր երեխային սրտով, արիւնով. սիրում է նրան իր ամբողջ էութեամբ։ Նրա սէրն, ամենից առաջ ֆիզիքական, բնական սէր է, մինչդեռ հասկացած է սէրը։ Նա կրում է իր երեխային իր սրտի տակը ինն ամիս, կերակրում ու մեծացնում է իր արիւնով, զգում է իր մէջ նրա առաջին կենսական չարժումները։ Նա նրա երեխան է՝ ոսկր է ոսկրից, մարմին

մարմնից։ Նա ծնում է նրան տանջանքներով, և փոխանակ ատելու, հէնց նրա պատճառած այդ տանջանքների համար նրան աւելի է սիրում։ Փոքրիկ, թոյլ, կանչուռտոյ, կեղտոտ ու բռնակալ այդ էակը, իր աշխարհ գալու առաջին օրից դառնում է իր մօր ամենաքմահոյրը ու անդադրում հոգսերի առարկան։

Նա հիանում է նրա անճոռնիութեան, ինչպէս և գեղեցկութեան վրայ։ Նրա խորշոմնաւոր կաս-կարմիր մարթը՝ համբոյրներ է խլում նրանից։ Նրա անմիտ ժպիտի մէջ քիչ է մնում նա խելացի խօսք գտնի ու պատրաստ է ըրոյց անել հետը։ Նրա համար առանձին մի դժուարութիւն չէ զբաղել մաքրելով այդ փոքրիկ կենդանու կեղտոտութիւնները. նրան ծանր բան չեն թուում չքնել գիշերները, հսկել նրա անկողնի մօտ։ Եւ նա, այդ խղճուկ մայրը, սիրելու է նրան միշտ՝ թէ գեղեցիկ լինի, թէ տգեղ, թէ խելօք, թէ յիմար, թէ բարի, թէ չար, թէ երեկի և թէ անյայտ... Նա իր զաւակների մանկութեան պահապան հրեշտակն է։ Չկայ այնպիսի կոհ, որ նա չերերի իր զաւակների սիրոյն. նրանց թախտաւորութիւնը իր թախտաւորութիւնն է, նրանց թշուառութիւնը՝ իր թշուառութիւնը։

Մօր սիրուց սուրբ ու անշահասէր ոչինչ չկայ։ Ուրիշ ամեն սէր, ամեն անձնւիրութիւն, ա-

մեն կիրք մօր սիրու հետ համեմատած՝ կամ թոյլ է, կամ եսամոլ։ Նրա ամենամեծ երջանկութիւնն այն է, որ տեսնի ձեզ իր կողքին... Ձեր օգտի, ձեր երջանկութեան համար նա պատրաստ է բաժանուել ձեզանից մշտապէս։ Իհարկէ, մեր աշխարհում շատ չկան այդպիսի մայրեր, բայց չէ՞ որ կանայք էլ քիչ կան, այլ կան միայն շատ էգեր։

Բոլորովին ուրիշ կերպ է սիրում հայրը իր զաւակներին։ Նա սիրում է նրանց միայն այն ժամանակ, երբ նրանց մօրն էլ է սիրում. նա սկսում է սիրել նրանց միայն այն ժամանակ, երբ նրանք թէ սիրելու վիճակումն են լինում և թէ կարելի է լինում դրգռել նրանցով։ Նրանց կանչուռոցն ու պատռուռած գլուցայուանքը նա չի սիրում։

Հայրական սիրոյ տրրիւրը միշտ կամ եսամոլութիւնն է, կամ անձնական մտորումը, իսկ բնութիւնը՝ երբէք։ «Սրանք իմ երեխաներս են, ինձ են նմանում, իմ անունը շարունակում, մեծ ընդունակութիւն են ցոյց տալիս, լաւ ապագայ խոստանում»—մտածում է իր մէջ որդեսէր հայրը. ու նա ուրախութիւնից չգիտէ ինչ անէ, երբ յիշում է, որ սիրում է իր զաւակներին, որ ինքը ոչ միայն ինքը քնքոյշ ամուսին է, այլ և օրինակելի հայր։

Որ մայրն իրական հասկացողութիւն է, իսկ հայրը՝ վերացական (խօսելով փիլիսոփայական լեզուով), սրա ապացոյցն է և այն՝ որ մայրը չէ կարող չգիտենալ, թէ իսկապէս ինքն է, և ոչ մէկ ուրիշը իր երեխայի մայրը։ Հայրերն իրանց համարում են իրենց զաւակների հայրեր, յենուելով միայն իրենց կանանց վկայութեան վրայ, որ միշտ չի լինում անսուտ ճշմարտութիւն...

Բոլոր մարդիկ հաւասարապէս ծնւում են սիրոյ համար, ու առանց սիրոյ ոչ ոքի համար ոչ իսկական բախտաւորութիւն կայ, ոչ իսկական կեանք։ Բայց կնոջ սէրն աւելի է, քան թէ տղամարդունը։ Կնոջ սիրոյ մէջ կրքոտ ու արիւնոտ շատ բան կայ, տղամարդու սիրոյ մէջ մրմռածելու շատ բան կայ, եթէ կարելի է այսպէս ասել։

Արդէն վաղուց է նկատուած, որ կինը մտածում է սրտով, ինչ վերաբերում է տղամարդուն՝ սիրելիս էլ նա գլխով է սիրում։ Նկատուած է նոյնպէս, որ սիրոյ գործում տիրամարդիկ աւելի են եսամոլ, քան կանայք։ Եթէ կինը եսամոլ է, նշանակում է սրտով ամենևին չի սիրում, սէր չի պահանջում. նրա ամրողջ կեանքը հաշւի վրայ է հիմնուած։

Իսկ եթէ կնոջ սիրոը ծարաւ է սիրոյ, այդ սիրան անձնատուր է լինում տղամարդուն իր

բոլոր ինքնամոռացութեամբ, կայր մեծահոգութեան բոլոր անդաւաղականութեամբ: Ցղամարդը անսէր տալրել չի սիրում, ու պատրաստ է ամեն տեսակ վոհ բերելու և ամեն անմիտ բան անելու, քանի դեռ չէ հասել իր նպատակին՝ բաւականութիւն տալով կրքին, նա յիշում է՛ իր տղայական, իր պարտաւորութիւններըը, իր հոգու սրբազան շահերը և այլն. ու ինչքան աւելի է հասամել դառնում, այնքան աւելի է իրեն հեռու կարծում: Այս պատճառով պէնտէր կանայք,— կանայք, որոնք կարողանում են իշխել իրանց ազամարդկանց վրայ ու անձնատուր լինել, միայն երկար տանջելով իրանց վրայ սիրահարուած ազամարդուն,—աւելի աջող ու երկար են իշխում նրա սրտին:

Սիրոյ մէջ կանայք աւելի երկար են մնում, և ազամարդիկ համարեա միշտ առաջին են սառչում դէպ հին կայը և նորին անձնատուր լինում: Յանկարծակի սառչելու այս ընդունակութիւնը և յանկարծ տոկալի պատարկութիւն ու անզգամասխանատուութիւն ղգալը սրտում, այն սրտում, որ քիչ առաջ այնպէս լի էր և բարեկամաբար պատասխանում միւս սրտի բարախութին,—այս շշուառ ընդունակութիւնը՝ ազամարդու ազնիւ բնութեան համար դառնում է ապրիլը ոչ միայն անտանելի տանջանքների, այլ և նոյն

իսկ կատարեալ յանդատութեան:

Կինը միշտ պատրաստ է սիրել. ազամարդը կարող է սիրել՝ միայն իր հոգու որոշ տրամադրութեան միջոցին: Կնոջը երբէք ոչինչ չի խանգարում սիրել. ազամարդն ունի շատ շահեր, որոնք զօրեղ կռիւ են մղում սիրոյ դէմ ու յաճախ յաղթում: Կինը միշտ պատրաստ է ամուսնանալ՝ անկախ իր տարիքից ու փորձառութիւնից. ազամարդը կեանքով ու փորձով է ձեռք բերում ամուսնանալու բարոյական հնարաւորութիւնը՝ միայն որոշ տարիքից ու որոշ կարգացում ձեռք բերելուց յետոյ: Դրա համար նա գեռ պիտի ճոխ ու կարգանայ. այլապէս ամուսնանալուց հետոյ մի քանի օր յետոյ լինելու է ամենաթշուառ մարդը աշխարհում:

Իր ամուսնու վերաբերմամբ յանկարծ սառչող ու ճակատագրական կրքով ուրիշի սիրուց տարւած կինը բացառութիւն է հանուր կանոնից: Բանաստեղծօրէն վառվռուն բնոյթ ունեցող ազամարդը, որ իր ողջ կեանքում կապւած է մի կնոջ հետ՝ նոյնպէս հազուադիւտ բացառութիւն է:

Լ. Ֆ. Ն.

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսաց պետութեան բոլոր օրէնքները ամփոփած են «Օրէնսգրքի» (Сводъ Законовъ) 16 հատորի մէջ, որոնց բովանդակութիւնը հետեւեալն է.

Հատոր I.

Կայսերական հիմնական օրէնքներ.
Օրէնսգ. Պետական Խորհրդի.
Օրէնսգ. Պետական Դումայի.
Պետական Դումայի ընտրութեան կանոններ.
Պետական եւ մասնաւոր նախահաշիւի քննութեան կանոններ.
Մինիստրների խորհուրդ և մանուժոդով.
Ֆինանսական կօմիտէ.
Պետական պաշտպանութեան օրէնսդրութիւն
Գլաւաւորիչ Սենատ.
Մինիստերութիւններ.
Բարձրագոյն անունով արուղ խնդիրների վերանայուն.
Քաղաքացիական ծառայութիւնների վերաբերեալ կօմիտէ և նիւթատուութիւնների մասին.
Շքանշաններ և այլ նշաններ։

Հատոր II.

Նահանգական կեմստվոյական և քաղաքային հաստատութիւններ.
Կովկասի, Անդրկասպեան երկրի, Թուրքեստանի վարչական հաստատութիւնները։

Հատոր III.

Գիւղ. ծառայողների կենսաթոշակների և կառավարութեան միանուագ նպաստների վերաբերեալ կանոններ։

Հատոր IV.

Զինուորագրական օրէնքներ.
Զեմսկի տուրքերի օրէնքներ։

Հատոր V.

Ուղղակի հարկերի,
Մաքսերի,
Ակցիզի տուրքերի կանոնագրութիւն։

Հատոր VI.

Մաքսային կանոնագր. և տուրիֆներ։

Հատոր VII.

Գրամական կանոններ.
Հանքային կանոնագրութիւն։

Հատոր VIII.

Մաս 2.

Անասային կանոնագրութիւն.

Մասն 2.

Հաշիւների կանոնադրութիւն:

Հատոր IX.

Օրէնքներ հարկ. վճռակների և գործերի վերաբերեալ (ազնուականների, քաղաքացիների և գիւղացիների մասին):

Հատոր X

Մասն 1.

Քաղաքացիական օրէնքների ժողովածու.
Պետական կապալի և մասնակարարութեան վերաբերեալ կանոնադրութիւններ.

Մասն 2.

Հողաբաժնութեան (межевые) օրէնքներ:

Հատոր XI.

Մասն 1.

Ծառայողականների հոգևոր գործերին վերաբերեալ կանոններ (կաթոլիկների, բողոքականների, հայ լուսաւորչականների, հրէաների, մահմեդականների և այլն):
Դիւանական և կրթական հաստատութիւններին վերաբերեալ կանոնադրութիւնների ժողովածուներ.

Մասն 2.

Վարկային կանոնադրութիւն.

Մուրհակների կանոնադրութիւն.
Առևտրական »
Առևտրական դատարանի.
Հիւպատոսների.
Երդիւնարերութեան:

Հատոր XII.

Մասն 1.

Ճանապարհների հոգորգ. կանոնադրութիւն.
Փոստական երկաթուղ. »
Պոստային »
Հեռագրական »
Շինարարական »
Կրակից փրկ. ապահովագրութեան կանոնադր.

Մասն 2.

Գիւղատնտեսութեան կանոններ (գիւղական բանուորներ վարձելու, պանդոկների մասին ևլն):

Հատոր XIII.

Ժողովրդական մթերքների ապահովութեան վերաբերեալ կանոնադրութիւն.
Հատարակական բարեգործութեան կանոնադր.
Բժշկական կանոնադրութիւն:

Հատոր XIV.

Ընդազրերի վերաբերեալ կանոններ.
Ցենզուրայի »

Դրաքննութեան, տպարանական գործի վերաբերեալ.
Ճանցագործութիւնների նախազգուշութեան կանոնադրութիւն.
Հսկողութեան տակ գանուողների վերաբերեալ.
Աքսորեալների մասին կանոնադրութիւն։

Հատոր XV.

Քրէական յանցանքների վերաբերեալ օրէնքներ.
Դատարանների պատժամիջոցների վերաբերեալ։

Հատոր XVI

Մասն 1.
Դատաստանական հաստատութիւններ։
Մասն 2.
Քրէական դատավարութիւն.
Նօտարական օրէնքներ։

ԱՍՐ ԼՕՑՍ, ԱՍՐԻՆ, ԱՍՑՈՒՆՑՈՑ

Որքան որ ժողովուրդ կայ, այնքան էլ իրար բարեւելու, իրար ամեն տեսակ յաջողութիւններ մաղթելու կամ թէ յարգանքը դիմացինին արտայայտելու ձևեր կան։

Եթովպացի բնիկները իրար հանդիպելիս՝ բռնում են միմեանց ձեռք և համբուրում, նայում որ բարեւում են, բռնում են նրա գօտին— եթէ ունի— և մէջքերին փաթաթում, այնպէս որ շատ անգամ ում որ տալիս են բարեւ, դրեթէ մերկ է մնում, որովհետև այս տարօրինակ երկրի մէջ բնիկները շատ անգամ գօտի ու բամբակէ վարտիք են հագնում միայն։

Անգլիացին գլխարկով է բարեւում և ասում —ինչ էք անում, ինչպէս էք։ Ու բարև ասացողը օրւայ ժամերի համեմատ ասում է՝ բարի ե-րեկոյ, բարի լոյս, բարի գիշեր, ճիշտ այնպէս, ինչպէս մեր մէջ է լինում։

Գերմանացին երբորդ դէմքով է խօսում,— ինչպէս է գնում, լաւ է ապրում։ Եւ կամ ինչպէս էք գանում դուք ձեզ։ Անգլիացու նման գերմանացին էլ օրւայ ժամերի համեմատ բարևներ ունի։

Աբաբը, ինչպէս նաև բոլոր Աբեսկլինները— հանգիստասէր է։ Երբ իրար են հանդիպում, առա-

Ջինը ասում է՝ Էմեի պէս—Սէլամա, այսինքն՝ գնա խաղաղութեան մէջ, իսկ միւսը պատասխանում է՝ Էպմա է՛լ խէ՛յր՝ գնա հանգստի մէջ։

Ճատրախանի բնակիչները իրար բարևելու ժամանակ իրենց հոգաբարձութիւններից մէկը, որբևմն երկուսը միասին հանում են։ Այնիսը բարև տալու համար գլխացնի ականջի մէջ է փչում։

Կամպոնձին բարևելիս գնային ծունր է դնում։

Հինացին մօտենալով, երկու ձեռքերը կրծքին զրած ասում է Ջիե, ձիե, կամ հարցնում է Ջի եա Քաճե՝ կեր՞ք բրինձներդ, կամ պարզապէս Եա Քաճե՝ երբ բարձր անձնաւորութիւն է գլխացինը, ծունկ է չոքում և ճակատը գետնին քսում։

Ոֆբիկայի ծովեզրի ցեղապետներն ու պատերը երեք անգամ իրար միջնամատ են սեղմում։ Երբ Ոսկիի ծովեզրի կանայք մի տեղ են դնալու լինում, հանում են մազերի միջի սանրը և այն ուսերից վայր թափում։

Կիկատեան արշիպելագի բնակիչների բարևը իրար գլխին չուր սրսկել է։

Դանիմարքացին գլխացինին բարևում է ասելով՝ լաւ ապրեցէք։ Սպանիացին ասում է՝ բարև պարոն, ու ընդհանրապէս՝ Ճատրա ձեզ հետ, կամ ինչպէս է ձեր մեծապատուութիւնը։ Սպանիացին յաճախ ասում է՝ ձեռքիդ եմ համբուրում։

Սկովտացին ասում է՝ ձեր տան մէջ ամեն բան թրիչպէս է։ Այժմեան յոյնը հարցնում է Թի՛ բանիս—թրի՞չ ես անում։ Թէ հին և թէ նոր երբայեցին ասում է Սալամ—խաղաղութիւն։ Իսկ Հոլանդացիները հարց են տալիս—ինչպէս էք ձեմբորդում, ինչպէս էք ծփում, կամ լաւ ճաշ ունէ՞ք։ Հօրնի գլխի բնակիչները գետնին փոքր վրայ պառկում են բարևած ժամանակ։

Ընդհանրապէս Իտալացին ասում է—ինչպէս է գնում։ Նաև չուայլօրէն ասում է—ձեռքդ կամ ձեռքերդ եմ համբուրում։ Իրլանդացին ասում է—իքիւ կարողանայիք փառքով փոխել ձեր անկողինը։ Հնդկաստանի մէջ գլխացինի մօրուքն է բանգում բարև ասողը,—մի բան, որ ուրիշ տեղը ծանր նախատինքի նշան է։

Նապոնացիները յաճախ իրենց ոտնամաններն են հանում։ Լաւօնացիները ուժով իրենց քիթը գլխացինի քթին են դիպցնում ու հոտ քաշում, հաւանականապէս Կարրուխները հազւագիւտ են լինելու այս երկրի մէջ, ապա թէ ոչ շատ անվտանգ չպիտի լինի սրսկ հիւանդ քթի իր քիթը թեթև քսելուց։ Փիլիպեան կղզիներում Էմիւբէքի բնիկները իրար առքից են բռնում յոխորտաբար և երեսները քսում առքերին։ Սրանց նման են և Բալաօացիները, Լանկոյի բնակիչները բարևելիս իրենց ձեռքերը երեք չոքս անգամ դէպի

ալ ու ձախ կատաղարար չարժում են՝ եւ մայ Նրանց, ով այս երկրի մէջ ուժասնամեայ է կամ հիւանդոտ է։

Լօրէդ հրամանդանի սահմանքներն ծիներից մէկը գետին են դնում և երեք անդամ ձեռքերը իրար են խփում մինչև ատերը բարձրացնելով։ Մարթանի կողնցիները իրենց ձեռքերը բարև ուած մարդու փոքի վրայ պատեցնում են։ Մեքսիկացիները Յայտնութեան միջի ապօքալիպսը իրար բարևում։ Նթաղօլիցին յաճախ սիրում է ասել—ամենչէք սրբութեամբ։ Ննամի և Տօնկինի մէջ, մանաւանդ երբ բարև ուզը հանդիպում է մի բարձրատիճան անձնաւորութեան՝ գլուխը գետին է խոնարհեցնում մինչև ճակատը փոշոտելու աստիճան։

Օթոմիթիցիները և ընդհանրապէս Պոլինեզիացի բոլոր բնակիչները Լաբօնացիների նման բարևում են քթերը իրար քսելով։ Պոլինեզացին ասում է՝ ոտքերիդ կընկնէք, ասելի չափազանց ասելացնում է—Էյը Ասուած, օրհնեալ լինես։ Թուաններն ասում են—լաւ եղէք, կամ ձեր գիրին, ձեր ճորաբ։

Ընդհանրապէս Սյաւ ժողովուրդների բարևն է խաղաղութիւն տալ իրար։ Սօքօթօրիայի բրնիկների բարևն է հանդիպելիս իրար ուսերը համբուրել։

Տէնրաթի կղզու բարձր անձնաւորութիւններն ու կապիտանները երբ ժողովի մէջ են գտնուում, իրենք ծոքի վրայ են կանգնում, իսկ իրենց հրապարակները նստած մնում, ի նշան խոնարհութեան։ Իսկ շատ տեղեր ընդհակառակն է լինում այս ամենի։

Մինքօրինների մէջ, իրար բարևելու համար հանդիպելիս միմեանց երեսն են փչում։

Երբ երկու Մօնպութթա իրար են մօտենում, ալ ձեռքերը յառաջացնելով միմեանց մէջ ամբողջ ցաւեցնելու աստիճան կաճիկի ատելով։

Տիւրնները իրար հանդիպած ժամանակ միմեանց երեսի են թքում։ Այս արդէն սիրոյ և մեծ ժամանակ հատատարմութեան դրուատական է։ երկու վաճառականներ մինչև այս արարողութիւնը չանեն, իրար մէջ գործ երբէք չի կնքուում։

Տիպէտեցիների բարևն էլ բաւականին տարօրինակ է։ Երբ Նրանք միմեանց են հանդիպում լեղունները դուրս հանելով ականջներն են քրքրում իրար երես նայելով։

Սակայն վերջացնենք բարևելու ձևերի այս շատ հետաքրքրական շարքը, և այստեղ յիշատակենք ամենից գործածական մի եղանակը, որ գործածում են Ամազոնի հնդիկները։

Պ. Պօլ Լէմօռնի ասում է.

Սրանք ծխախոտ ոչ թէ ներս են քաշում, այլ իրար քթից ներս են փչում: Հավատիան փոդի ձևով ծռած ոսկորէ—յամառ մարդկային ոսկորից—մի խողովակի մէջ դրած գրգռիչ փոշին, հնդիկը փչում է իր բաբեկամի քթի ծակից, յետոյ փոխադարձաբար քաղաքավարական նայն ցոյցը անում է և դիմացի հնդիկը, կամ պատասխում է ժամանակ, որ այս բանը հրկուսն էլ իրար հետ են սկսում անել:

Ահա և բարևներ արտայայտելու ձևերը, որ պակաս հետաքրքիր և դարմանալի բան չէ մեզ համար:

Նշան Պապիկեան

Վ Ի Ճ Ա Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ռուսաստանի տարածութիւնն է 19,027,809 քառ. վերստ: Ընդհանուր ապրարնակութիւնը— 149,276,300: Եւրոպական Ռուսաստանի 50 նահանգները ունին 4,242,701 քառ. վ., 109,331,600 բնակիչ. մի քառակուսի վերստի վրայ 25,8:

Լիհաստանի 10 նահանգները 111,552 ք. վ. 10,947,300 բնակիչ. ամեն մի ք. վ. վրայ 98,1:

Ֆինլանդիայի 8 նահանգները 291,629 ք. վ. 2,857,200 բնակիչ. ամեն մի ք. վ վրայ 9,8:

Կովկասի 6 նահանգ. և 5 շրջան. 411,324 ք. վ. 10,458,500 բն. ամեն մի ք. վ. վրայ 25,4:

Սիբիրի 4 նահ. և 4 շրջանը 10,893,977 ք. վ. 6,740,60 բնակիչ. ամեն մի ք. վ. վրայ 0,6:

Միջին Ասիայի 9 շրջ: 3,076,628 ք. վերստ, 8,941,100 բնակիչ. ամեն մի ք. վ վրայ 2,9:

Եւրոպական Ռուսաստանի բոլոր տարածութիւնը փոքր է միայն Չինաստանից և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներից, իսկ մնացած պետութիւններից բոլորից մեծ է: Մասնաւորապէս եւրոպական Ռուսաստանը 10 անգամ մեծ է Գերմանիայից և համարեա 200 անգամ մեծ է Բելգիայից:

Ազգաբնակութեան խտութիւնը. — Ռուսաս-

տանը չատ անօսր է բնակած. միջին թիւով 1 ք. վերստ տեղի վրայ դալիս է 6—7 մարդ. ամեն նանոսր բնակչութիւն Սիբիրն ունի. այնտեղ 2 քառ. վ.-ին ընկնում է 1 մարդ: Եւրոպական Ռուսաստանում և Կովկասում 1 ք. վ. ընկնում է 22 մարդ: Ամենից խիտ ազգաբնակութիւն ունի Լեհաստանը—1 ք վ.-ին 84 մարդ: Եւրոպական պետութիւնները աւելի խիտ ազգաբնակութիւն ունին, քան Ռուսաստանը. օր. Բելգիայում 1 քառ. վերստի վրայ ապրում է 260 մարդ, Անգլիայում —160 մարդ, Գերմանիայում—120 մարդ. Ֆրանսիայում—80 մարդ:

Ազգաբնակութեան աճումը.—Իւրաքանչիւր տարի 1000 բնակչին ծնում է 48 երեխայ: Ըստ միջին Եւրոպայում ծնունդը աւելի պակաս է լինում օր.

Գերմանիայում	1000—	36 ն. ծ.
Իտալիայում	»	38 —
Անգլիայում	»	31 —
Ֆրանսիայում	»	23 —

Մանացութիւնը՝

Անգլիայում	1000—	19
Ֆրանսիայում	»	22
Գերմանիայում	»	25
Եւր. Ռուսաստ.	»	34

Չը նայած այն հանգամանքին, որ Ռուսաստանում մանուղների թիւը չատ է, այնուամենայնիւ ազգաբնակութիւնը աւելի արագ է աճում: Եւրոպական Ռուսաստանում իւրաքանչիւր տարի ամեն 1000 բնակչին աւելանում է 14 մարդ

Անգլիայում	12 —
Գերմանիայում	12 —
Իտալիայում	11 —
Ֆրանսիայում	½ — .

Կեանքի միջին հասակը.

Անգլիայում տղամարդիկ միջին թիւով 48 տ. են ապրում, իսկ կանայք 45 տարի. Գերմանիայում—տղ. 36, կանայք—38 տարի. Ռուսաստանում տղ. 27 տ, կանայք—29 տարի:

Ազգաբնակութիւնը.— Ռուսաստանում ապրում են մօտ 30 ազգեր, որոնք խօսում են ամենապակասը 142 լեզուով ու բարբառով:

	Հազար հոգի
Վելիկօրօսներ . .	55,673
Մալօրօսներ . .	22,415
Լեհեր . . .	8,159
Բելօրուսներ . .	5,886
Չրէքներ . . .	5,063
Կիրգիզներ . . .	4,084
Թաթարներ . . .	3,738
Ֆիններ . . .	2,191

	Հազար հոգի
Գերմանացիք . .	1,790
Լիտուացի և Ժմուտներ .	1,658
Բաշկիրներ և Գինտար	1,439
Լատիշներ . . .	1,436
Վրացիներ բոլոր ցեղ. .	1,352
Հայեր . . .	1,473
Մոլդաուներ և Ռումիններ	1,122
Մորդվա . . .	1,024
Լսահեր . . .	1,003
Չուվաշներ . . .	844
Ուզբեկներ . . .	728
Լեղգիներ . . .	601

Եւրոպական պետութիւններից միայն Բուլղարիայում և Տանիմարկում տարում են այնպէս բազմացող ազգեր, ինչպէս Ռուսաստանում։

Ըստ դաւանութեան 1000 հոգուն գալիս է.

Ռուսներ	860 մ.	Լիւտերական	29 մ.
Մահմեդական	111 »	Սաարովեցի	18 »
Հռոմ. կաթոլ.	91 »	Հայ լուսաւոր.	8 »
Յուդայական	42 »	Կաթոլիկներ	8 »

Բուդդայական 4 մարդ։

Ազգաբնակութիւնը ըստ սեռի.—Եւրոպական Ռուսաստանում 1000 տղամարդուն գալիս է 1048 կին, Լեհաստանում—990, Կովկասում—905, Սիբիրում—945, Միջին Ասիայում—860, Ֆինլանդիայում—1027, ընդհանրապէս Ռուսաստանում —1011։

Ազգաբնակութիւնը ըստ հասակի. 1000 հոգուն գալիս է—մինչև 10 տարեկան 270½ հ.

10—20	»	210 »
20—30	»	160 »
30—40	»	125 »
40—50	»	95 »
50—60	»	65 »
60—70	»	44 »
70 բարձր	»	26 »

Ազգաբնակութեան բաժանումը ըստ դասակարգի.—Ռուսաստանի ազգաբնակութիւնը, առանց Ֆինլանդիայի, բաժանում է հետևեալ դասակարգերի. 1000 հոգուն ազնւական գալիս է 15, հոգևորական—5, վաճառական և պատուաւոր քաղաքացի—5, քաղաքացի—106, գիւղացի—771, կոզակ—23, այլազգի—66 և այլք—9։

Ազգաբնակութեան բաշխումը ըստ պարապմունքի.—1897 թ. աշխարհագրութեամբ ամբողջ ազգաբնակութեան 63,702 հազար երկսեռ անձն ապրում է գիւղատնտեսութեամբ, արդիւնաբերութեամբ 12,286 հ., առևտուրով 6,750 հ., այլ պարապմունքներով 12,904 հ.։ Այդ նշանակում է որ ազգաբնակութեան ամեն մի 1000-ից 742

մարդը ապրում է պետականականութեամբ, միայն կրկրապատնութեամբ 703 մ., արդիւնաբերութեամբ 98, առևտուրով 56 և այլ պարապմունքներով 104։

Երկրագործութեամբ պարապողների թիւը Ռուսաստանում անհամեմատ շատ է և մեծ տոկոս է կազմում, քան այլ երկրներում։ 1000 աշխատանքի հասակի մարդուն բնկնում է 719 մ., Իտալիայում—594 մ. Ֆրանսիայում—443 մ. Գերմանիայում - 375 մ. Միացեալ Նահանգներում—359 մ. Բելգիայում—211 մ. Անգլիայում—124 մ.։

Ազգաբնակութեան բաժանումը pus գիւղի եւ քաղաքի.—Ռուսաստանի մօտ 150 միլիոն ազգաբնակութիւնից քաղաքներում ապրում են 19,0480 հազար, իսկ գիւղերում 130,228,3, այսինքն 100-ից 87,2 կազմում է գիւղի բնակչութիւնը, իսկ 12,8 քաղաքների։

Քաղաքների բնակչութիւնը համեմատած ուրիշ երկրների հետ շատ չնչին է։

1897 թուին, գիւղական ազգաբնակութիւնը ապրում էր 567,568 գիւղերում, որով ամեն մի գիւղին գալիս էր 194 մարդ։ Զանազան տեղերում գիւղերի մեծութիւնը տարբեր է։ Եւրոպական Ռուսաստանում ամեն գիւղին գալիս է 167 բն., Լեհաստանում 171, Ֆինլանդիայում 229, Պովկասում 671, Սիբիրում 418 և Միջին Ասիայում 885 բնակիչ։

Բոլորովին հակառակ պատկեր ունի Արեւմտեան Եւրոպան։ Այնտեղ աւելի շատ բնակուում են քաղաքներում, քան գիւղերում։ Իտալիայում ամեն 100 մարդուց 26-ը ապրում են քաղաքներում. Ֆրանսիայում—41, Գերմանիայում — 54, Անգլիայում—77.

1901 թուին ամբողջ Ռուսաստանում 100,000 բնակիչ ունեցող հաշուում էր 35 քաղաք։ Հետեւեալ քաղաքներում բնակիչները 150,000-ից աւելի են. Պետերբուրգը—1,439,375 բ., Մոսկուան 1,092,360 բ., Վարշաւան—756,426 բ., Օդեսսան—449,673 բ., Լօդզը—351,570 բ., Կիևը—319,000 բ.. Ռիգան —256,197 բ., Խարկովը—197,405 բ., Բաքուն—179,133 բ., Վիլնան—162,633 բ., Թիֆլիսը—160,—645, Տաշկենտը—156,506 բնակիչ։

Գաղթականութիւնը.—Ռուսաստանում գաղթականութիւնը մեծ ծաւալ է ստացել գիւղացիների ազատութիւնից սկսած. 60-ական թուականներին ամեն տարի գաղթում էր 25 հազ. մարդ, 70-ական թուականներին—40 հազար, 80 ական թուականներին մօտ 60 հազար, 90-ական թուականների սկզբին մօտ 75 հազ., 90 ական թուականների վերջերին 100 հազար մարդ։ Գլխաւորապէս գաղթում էին այն նահանգներից, որոնց հողերը պակաս էին։ Իսկ գէպի այլ երկրները, ինչպէս Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նա-

հանգները գաղթում են գլխաւորապէս Ռուսաստանի արևմտեան նահանգներից։ 1893 թ. գաղթել են դէպի օտար երկիր 130 հազար մարդ, 1904 թ.— 145 հազար, 1905 թ.— 184,896 մարդ. գաղթողների մեծագոյն մասը հրէաներ են։

Ժողովրդական կրթութիւնը. — 1900 թ.ին Ռուսաստանում տարրական դպրոցների թիւը հասնում էր 90,000-ի, ուր սովորում էին 5,389, հազար երեխաներ, իսկ 7,300,000 երեխայ դուրս էին մնացել տեղ չլինելու պատճառով։ Բոլորովին այլ պատկեր է նեղկայացնում ուրիշ երկիրներում։ Ռուսաստանում ամեն 208 քառ. վերստի վրայ գալիս է մի դպրոց, իսկ Իտալիայում—4 քառ. վերստին, Գերմանիայում և Անգլիայում—8 ք վ։ Ռուսաստանում 2117 մարդուն մի դպրոց է գալիս, իսկ Անգլիայում—1300 հոգուն, Բելգիայում—990 հ., Գերմանիայում—910 հ։ Պրթականօրհայ դպրոցներն ևս շատ քիչ են. 1904 թ.ին ամբողջ Ռուսաստանում կար ընդամենը 89 դպրոց, ուր սովորում էին հասակաւորները, մինչդեռ նոյն դպրոցներից, նոյն թւականին Անգլիայում հաշւում է 53,590, Գերմանիայում—7,713 նոյն իսկ փոքր Ֆինլանդիայում 7611։

Ժող. կրթ. ծախ.—1900 թւականին ժողովրդական կրթութեան համար ծախսւում էր շատ չնչին գումար, այնպէս որ ամեն մի հոգուն գալիս էր 7—8 կոպ.։ Հաշւած է, որ զինւորական գործի համար ծախսւած գումարը հեղ բաժանւի ազգաբնակութեան վրայ, ամեն մի հոգուն կը դար 3 ր. 16 կ.։ Ներկայիս տարրական կրթութեան համար ծախս հաշւում է 31 կոպ, սակայն այս թիւը շատ չնչին է, երբ համեմատւի արտաոտհմանում նոյն նպատակով արած ծախսի հետ։ Փրանսիայում տարրական կրթութեան համար ծախք ընկնում է ամեն մի հոգուն 1 ր. 66 կ., Անգլիայում—2 ր. 36 կ., Գերմանիայում—3 ր. 43 կ, Ամերիկայում—4 ր. 86 կ., Նոր Զելանդիայում (Աւստրալիա) 5 ր. 74 կ.։

Գանձարանը տարրական կրթութեան ծախքի $^1/_3$ է վճարում, $^1/_{10}$-ը վճարում է գեմստվօն։ Բացի սրանցից վճարում են նաև քաղաքային վարչութիւնները. մանաւոր անձինք և այլն. 1908 թ.ի պետական ծախքի հաշւում ժողովրդական կրթութեան ծախք նշանակւած էր 52,991,818 ռուբլի։

Ազգաբնակութեան գրագիտութիւնը.—1897 թ.ի աշխարհագրի համեմատ 1000 տղամարդուն ընկնում էր 293 գրագէտ, իսկ 1000 կնոջը —136։ Ռուսաստանում բնակւող զանազան ազգութիւններից թւով պակաս գրագէտ են ռուսները. 1000 ռուս տղամարդուն ընկնում է 296 գրագէտ, 1000 կնոջը—9, իսկ գերմանացի 1000-ին 590 տղամարդ և 585 կին, հրէաներին 490 ա. և 382 կին, պոլեերին—350 ա. և 290 կին։

Մեչենակարգ եւ բարձր դպրոցներ. 1898 թ. մի չենակարգ դպրոցների թիւը 854 է, 3,188,983 աւանդողներով (բացառապէս միջնաստիճան և տնային հնչակայ): Համալսարանների թիւը Ռուսաստանում 10: Ընտանեմանում որանց թիւը անհամեմատ շատ է: Զւիցերիայում 445 հազար մարդուն դալիս է մի բարձրագոյն դպրոց, Իտալիայում - 476 հազարին, Ֆրանսիայում - 602 հազարին, Գերմանիայում 2,376 հոգուն, իսկ Ռուսաստանում—10,616 հոգուն: Զւիցերիայում 27 հազար հոգուն բնակում է մի միջնակարգ դպրոց, Ֆրանսիայում—25 հազարին, Բելգիայում —37 հազարին, Գերմանիայում—49 հազարին, Ռուսաստանում—103½ հազարին:

Չ ե մ.—Ռուսաստանի ամբողջ ժողովուրդը դնում է տալիս իր թւի համեմատական քանակութեամբ: 1907 թ. 440 հազար նորակոչներից Վելիկօրօսները ունէ են 202 հազար, Բելօրօսները և Մալօրօսները 130 հազար, Լէհերը—30 հազար, Չրէմները—18 հազար, Թաթարները—8 հազար և այլն:

Ըստ զաւակութեան ամենից մեծ տոկոս դինուորագրւում է գիւղացիութիւնը, (1000 բնակչին 772 գիւղացի է գալիս), նրանք 1907 թւականին ունէ են 1000-ին 890 մարդ, մնչչանները, որանց 1000-ին բնակում է 106 մարդ, ունէ են 102 դին-

ւոր, վաճառականները, որանց 1000-ին 2 մարդ է գալիս, չեն ունէ և ոչ մի դինուոր, գործաւորները, որանց 1000 ին գալիս է 15 մարդ, ունէ են չորս դինուոր:

Զանազան տէրութիւնների դինւորական ցամաքային ոյժերը.—

	Խաղ. ժամ.	Պատ. ժամ.
Աւստրօ-Ունգարիա	382,616	1,872,178
Մեծ Բրիտանիա	419,162	1,036,714
Գերմանիա	619,072	4,350,000
Իտալիա	291,952	1,126,301
Ֆրանսիա	600,965	4,372,000
Միացեալ Նահանգներ	75,250	10,845,267
Եապոնիա	640,701	1,388,000
Ռուսաստան	1,383,000	3,615,400

Իւրաքանչիւր 1000 բնակչին դինւոր բնակում է Եապոնիայում—13, Գերմանիայում—10, Ռուսաստանում—9, Աւստրօ-Ունգարիայում և Իտալիայում—8, Ֆրանսիայում—14, Մեծ Բրիտանիայում—2, Միացեալ Նահանգներում—1:

Զինւորական ծախսեր.—Ներկայ պետութիւնների դինւորական ծախսերը կազմում է ¹/₆ —¹/₅ մասը պետական բոլոր ծախսերի: Զինւորական ծախսերը հաշւում են այսպէս.—

Մեծ-Բրիտանիա 293 միլ. ր. կամ 35,3% բոլ. ծախ.
Ռուսաստան 455 » » 34,9 » »

Ֆրանսիա 355 միլ. ր. կամ 29,3 բոլ. ծախսերի
Իտալիա 135 » » 22,5 » »
Աւստրիա 99 » » 19,0 » »
Պրուսիա 205 » » 18,2 » »

Միջին հաշուով բոլոր եւրոպական պետութիւնները իւրաքանչիւր տարի յամաքային և ծովային ոյժերի համար ծախսում են $2^1/_2$ միլիարդ րուբլի։ Բոլոր այդ զօրքերի մոբիլիզացիայի գէպքում պետական ծախսերը հասնում են $12^1/_2$ միլիարդի, կամ 35 միլիոնի օրական։

Ժողովրդի առողջապահական դրութիւնը.— Թղթախաղից մեռնողների թիւը Ռուսաստանում անհամեմատ չատ է, քան այլ տեղերում։ Ամբողջ տարուայ ամեն 100 հազ. բնակչից մեռնում են Մոքաքաթից 486 հոգի, Լոնդոնում և Փերլինում—687, Միլանում—862, Վիէննայում—949, Պարիզում—1,055, իսկ Մոսկուայում—1,201։

Անգլիայում մի բժիշկը գալիս է 1730 բնակչին. Ֆրանսիայում—2630, Գերմանիայում—2820, Իտալիայում—3570, Աւստրիայում—3630, իսկ Ռուսաստանում—6450 բնակչին։

Պետութեան բիւդժէն.—1909—10 թուին պետական մուտքը հաշուում է 2,535 միլ. 817 հ. ր. և ելքը 2,510 միլ. 36 հազար ր., 1903 թ. պետական մուտքը հասնում էր 2,031,8 միլ. րուբ. և ելքը—1,883 միլ. րուբլի։ Վերջին 6 տարուայ ընթացքում

մուտքը աւելացել է 445 միլ. րուբլի, իսկ ելքը 589,2 միլ. րուբլի։

Մուտքերը կազմում են հետևեալ աղբիւրները.

1. Գառավարչական ձեռնարկութիւններից (օր. խմիչքների վաճառումից և այլն) 826 մ. ր.
2. Պետական գոյքերից (ինչպէս երկաթուղիներից՝ և կապիտալից—699.3 մ. ր.
3. Անուղղակի հարկեր—519,6 մ. ր.
4. Ուղղակի հարկեր—191,1 մ. ր.
5. Պօշլիններից—133,3 մ. ր.
6. Այլ եկամուտներ—107,7 մ. ր.։

Եթէ խմիչքների պետական վաճառման գումարը աւելացնի անուղղակի հարկերի վրայ, (որ կանոնաւոր էլ կլինի, որովհետև այս եկամուտը կազմում է գլխաւորապէս բարձր ակցիզից), այն ժամանակ առանձին պետական եկամուտի աղբիւրները այլ կերպ կդասաւորուին։

Այսպիսով պետական եկամուտի կէսը կազմում են անուղղակի հարկերը, այսինքն զօրծառնեան մերքերների հարկերից։ 25 տարուայ ընթացքում (80-ական թուականներից մինչև 1907 թ.) ուղղակի հարկերը աւելացել են 5,4%, իսկ անուղղակի հարկերը 28,4%, այսինքն համարեա 6 անգամ աւելի։ Մասնաւորապէս ծխախոտի հարկը չատացել է 281,2%, նաֆտայինը—159, 1%, լուցկիինը—174,8%, մաքուր—149,5%, չա-

քաղքինը — 2377,6%։ Այս աւելացումները ներանից չեն, որ շատ են սպառւում, այլ նրանից, որ մեծ տոկոս է առնւում։ Այսպէս օր. շնորհիւ մաքսի բարձր տուրքի. ազգաբնակութիւնը իւրաքանչիւր տարի աւելի է վճարում բամբակեայ գործւածքների համար 100 միլ. ր., իսկ մետաղների համար—120 միլ. րուբլի։ Ամերիկայում չուգունի փութը արժէ 19—24 կ., իսկ Ռուսաստանում մի միայն մաքսագին է առնւում փթին—30 կ։ Գամ օր. թէյը. Ռուսաստանում ամեն բնակիչ միջին հաշւով տարեկան թէյ է գործածում 1/8 ֆունտ. Անգլիայում մօտ 7 ֆ., մինչդեռ Ռուսաստանում մարդի տուրք մի ֆունտ թէյին հաշւում է 79 կ. իսկ Անգլիայում—17 կ.։ Եթէ ստացած տուրքը բաժանենք գործածողների թւի վրայ, այն ժամանակ կստանանք խմիչք գործածողներին 5 ր., Գրանսիայում—3,1 րուբ. Գերմանիայում—1,1 ր. շաքարի ակցիզը մօտ 70 կ. ծխախոտինը—30 կ. լուցկինը—1 կոպէկ։

Բոլոր ուղղակի և անուղղակի հարկերը ընկնում է ամեն հոգու՝ Ռուսաստանում 9,6 ր. Գերմանիայում—15,7 ր. Իտալիայում 16,5 ր. Աւստրիայում—17,9 ր. Գրանսիայում—18,9 ր. Անգլիայում 30,3 ր.։ Ռուսաստանում բոլորից պահաս է հարկը այն պատճառով. որ ժողովուրդը ադքատ է, այնպէս որ դրանից աւելի անհնար է։

եթէ հաշւի առնենք բոլոր կապիտալը և գոյքը, որ տիրապետում է ժողովուրդը, այն ժամանակ իւրաքանչիւր բնակչին գալիս է 600 ր. Իտալիայում—1000 ր. Գերմանիայում—1600 ր. Գրանսիայում—2550 ր. Անգլիայում 3300 ր.։ Աշխատանքի արդիւնքն էլ Ռուսաստանում քիչ է, քան այլ տեղերում։ Միջին հաշւով Անգլիայում ամեն բնակչին տարեկան գալիս է արդիւնք 380 րուբ. Գրանսիայում—310 ր. Գերմանիայում—250 ր. Իտալիայում—140 ր. Ռուսաստանում—49 րուբ.։

Ելմր 1909-10 թ. հաշւած է 2,510 մ. 36 հ. ր.

1. Պետական օպերացիաններ—774 մ. ր.
2. Պետական պահպանութեան (զօրքի և այլն)—536,4 մ. ր.
3. Փոխառութեան վճար—396,7 մ. ր.
4. Կառավարութեան ծախքեր—386,8 մ. ր.
5. Լուսաւորութիւն—78,4 մ. ր.
6. Ձանապարհներ (բացի երկաթուղիներից) —75,5 մ. ր.
7. Պոստ, հեռագիր, տելեֆօն—51,1 մ. ր.
8. Շինութիւններ—39,7 մ. ր.
9. Վաճառականութիւն և արդիւնաբերութիւն—5,0 մ. ր.
10. Այլ և այլ ծախքեր—116,5 մ. ր.

Պետական օպերացիան կազմում են արքունական ձեռնարկութիւնների ծախքից (784,1 մ.

բուբլուց պետական երկաթուղիների, խմիչքի, մոնոպոլիայի համար գնում է 746,7 մլր. բուբլի)։ Պատասխանատվության ծախսերն են արքունական պալատի, բարձրագոյն պետական հաստատությունների, կենտրոնական և տեղական ադմինիստրացիայի, հոգևորականության, պոլիցիայի և այլն։

Այսպիսով ամեն 100 բուբլուց, որ գնում է պետական ծախքի համար, պետական ապրանքայինների—31 ր. 70 կ., պետության պահպանության համար (զօրք և նաւատորմ) 21 ր. 70 կ., փոխառության վճարում—16 ր. 10 կ., չինովնիկների համար—1 ր. 60 կոպ. վաճառականության և արդիւնաբերության—20 կոպէկ։

Պետական պարտքը հետևեալ պատկերն է ներկայացնում. 1861 թ. պարտքի գումարն էր—1,264 մ. ր. 1876 թ.—2,949 մ. ր. 1896 թ.—4,418 մ. ր. 1902 թ.—6,651 մ. ր. 1906 թ.—8,625 մ. ր. 1907 թ.—8,725 մ. ր. 1908 թ.—8,925 մ. ր.։ 1903—1908 թ. Ռուսաստանի պարտքը չաւացել է 2 միլիարդից աւելի, միայն 1906 թ. պարտքը չաւացել էր 1,275 մ. ր.։ Պարտքի չաւատության համար Ֆրանսիան է միայն առաջ Ռուսաստանից (11,310 մ. ր.)։ Հաշւած է, որ Ռուսաստանի իւրաքանչիւր բնակիչ իր ապրելկան 100 բուբլի եկամտից փոխառության համար վճարում է 4 ր. 80 կ. Ֆրանսիացին 3 ր. 90 կ. անգլիացին—2 ր. 20 կ. գերմանացիները—50 կ.։

Հոգեւորականութիւն.—1902 թ. Ռուսաստանում ոչ կուսակրօն հոգևորականներ (բացի վիճորական 7 պալատական և ծովային պաշտօններում հոգածներից), կային հետևեալ քանակութեամբ—ապագ քահանաներ—2340, քահանաներ—44,487, սարկաւագներ—14,960 և սաղմոսերգուներ—43,552, բոլորը 105 հազարից աւելի։

Կուսակրօն հոգևորականներ հաշւում են—վարդապետներ—8,455, կոյսեր—10,960, պոլիներ—6,591, պալատներ—32,309, բոլորը 58 հազարից աւելի, որոնց թւում տղամարդ մօտ 15 հազար, կին—երեք անգամ աւելի, մօտ 43 հազ.։

Ռուսաստանում կայ 49,703 եկեղեցի, որոնց թւում ծխական եկեղեցիներ—37,465, մայր եկեղեցիներ—724, տնային գերեզմանատան և այլն 11,514։ Բացի դրանից աղօթատներ և մատուռներ—19,859, վանքեր—862, որոնցից 500 տղամարդկանց և 362 կանանց։

Ռուսաստանը բաժանւում է 66 թեմերի, (բացի այդ, մի թեմ էլ Ամերիկայում կար)։ Թեմերը կառավարում են երեք միտրոպոլիտներով, 14 արքեպիսկոպոսներով և 50 եպիսկոպոսներով։ 1902 թ. մի եպիսկոպոսութիւն էլ հիմնւած է Պիկինում։

ԻՆԽՍՏԱՆԻ

ՊԱՀԱՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Մինիստրներ

Ռուսաստանի ամեն նահանգ կառավարում է նահանգապետը, իսկ ամբողջ Ռուսաստանը կառավարում են մինիստրները, որոնք լրագրւած են Թագաւորից:

1. Կայսերական Տան մինիստրը կառավարում է Կայսեր, Կայսրուհիների, Մեծ Իշխանների և Իշխանուհիների բոլոր գործերը, կալքերը և հողերը:

2. Արտաքին գործոց մինիստրը յարաբերութեան մէջ է օտար պետութիւնների հետ, հետեւում է, որ այնտեղ ոչինչ է վնաս Ռուսաստանի չկատարւի և որպէսզի ռուսահպատակները պըրկանքներ չկրեն այն պետութիւնների մէջ:

3. Ներքին գործոց նախարարը կառավարում է պետութեան ներքին շատ գործեր: Նա է ղեկավարում Ռուսաստանի ամբողջ պօլիցիան, նրան են ենթարկւում բոլոր նահանգապետները, գաւառական ոստիկանապետները, պրիստաւները և զեմսկի նաչալնիկները. նա է կառավարում պոստը և հեռագիրը, պարտական է հոգալ բժշկական նպաստի մասին. ժողովրդի ապրուստի. նա հետևում է, որ խօսակցութեան մէջ, լրագրներում վիրաւորական ոչինչ չգրւի ուղղափառ հաւատի, Թագաւորի և կառավարութեան մասին, որպէսզի պետութեան մէջ անկարգութիւններ չլինեն, որպէսզի Ռուսաստանում ամեն տեղ խաղաղ լինի:

4. Ֆինանսների մինիստրը պարտաւոր է հոգալ, որպէսզի մէջոցներ գտնւեն պետութեան բոլոր պէտքերի համար, այսինքն գայսերական Պալատի, օրքերի պահպանութեան և նաւատորմիղի, մինիստրների, ասիճանաւորների (чиновники) և պօլիցիայի, բոլոր պետական երկաթուղիների, պետական խմիչքի խանութների, պահեստների և ուրիշ պետական հաստատութեան պահպանութեան համար:

5. Արդարադատութեան մինիստրը ղեկավարում է Ռուսաստանի ամբողջ դատաստանական մասը. նրա իրաւասութեան տակ են գտնւում բոլոր ընդհանուր և հաշտարար դատաւորները, դատախազները (прокуроры), բոլոր դատաստանական քննիչները, նօտարները և դատաստանական պրիստաւները:

6. Զինւորական մինիստրը կառավարում է զինւորական մասը: Նա կառավարում է բոլոր յամաքային օրքը, նա հոգում է չինելու և լաւ դրութեան մէջ պահպանելու զինւորական բերդերը, օրքի զինելու և կերակրելու մասին:

7. Ծովային մինիստր կառավարում է ծովային նաւատորմիղը, պարտաւոր է հոգալ բոլոր ծովային նաւերի և բերդերի պինաւորման համար, նաւաստիներին լաւ կերակրելու և լողանալ սովորեցնելու և նրանց պատրաստակամութեան մասին ռուսական ափերը պաշտպանելու թիւնամիներից։

8. Ժողովրդական լուսաւորութեան մինիստր կառավարում է բոլոր բարձրագոյն և տոերին դպրոցները, նա պարտաւոր է հոգալ գրագիտութեան, և ժողովրդի մէջ լայն չափերով լուսաւորութիւն տարածելու մասին։

9. Հաղորդակցութեան ճանապարհների մինիստր կառավարում է բոլոր երկաթուղիները և խճուղիները, բոլոր ցամաքային և ծովային ճանապարհները։ Նա հոգում է ճանապարհները շտացնելու և լաւացնելու մասին և պարտաւոր է ուշք դարձնել նրանց լաւ պահպանութեան համար, որ յարմար և դիւրին լինին ժողովրդի հաղորդակցութեան համար։

10. Երկրագործութեան ընդհանութեան մինիստր պարտաւոր է հոգալ, որ երկրագործութիւնը և հողից օգտւելը լաւ հիմունքների վրայ դրւած լինի, ընդարձակելու գիւղատնտեսութիւնը, այդ գործութիւնը, անասնապահութիւնը և այլ գիւղատնտեսական ճիւղեր, անհող և քիչ հող

ունեցող գիւղացիների, գաղթողների և գաղթածների, լեռնային և անտառային արդիւնաբերութեան մասին հոգալ։

11. Առեւտուր-արդիւնաբերութեան մինիստր պարտաւոր է հոգ տանել, որ լաւ զարգանան ֆաբրիկային և գործարանական արդիւնաբերութիւնը, որ ռուսաց առևտուրը զարգանայ թէ Ռուսաստանի նահանգներում և թէ արտասահմանում։

Մինիստրների Խորհուրդ

Բոլոր մինիստրները միասին կազմում են Մինիստրների Խորհուրդ։ Մինիստրներից մէկին Կայսրը նշանակում է Մինիստրների Նախագահ. այդ նախագահը յարաբերութեան մէջ է մնում Կայսեր հետ և ղեկավարում է նրան Խորհրդի բոլոր գործերի մասին։

Մինիստրների Խորհրդի միջոցով մինիստրները մշակած բոլոր նոր օրէնքները մտցւում են քննութեան Պետական Դուման և Պետական Խորհուրդ։

Կառավարիչ Սենատ

Կառավարիչ Սենատը Ռուսաստանի բարձրագոյն դատարանն է, կամ բարձրագոյն դատա-

լու տեղը, ուր բոլոքում են միւս բոլոր դատաստանական հաստատութիւնների և բարձրագոյն պետական ատեանաւորների սխալ ուած վճիռների մասին: Սենատը հոգս է տանում, որ բոլոր օրէնքները գործադրուեն ճշտութեամբ, որպէսզի ատեանաւորները և հասարակ քաղաքացիները օրէնքից դուրս չգան: Սենատը կազմուած է շատ սենատօրներից, որոնց Կայսրը նշանակում է պետական ծառայութեան կամ ծառայութեան տարիները լրացած լինելու համար:

Սրբազան Սինօդ

Սրբազան Սինօդը կառավարում է բոլոր հոգևոր գործերը: Նրան են ենթարկուում բոլոր եկեղեցիները և վանքերը, բոլոր հոգևորականներն ու կուսակրօնները: Սինօդը հոգս է տանում, որ ուղղափառ դաւանութիւնը տարածուի զանազան այլադաւանների մէջ, խիստ հետևում է, որ ուղղափառ եկ. սահմանած բոլոր ծէսերն ու արարողութիւնները ճշտութեամբ կատարուեն. հոգում է եկեղեցիների և վանքերի բարեկարգութեան, հոգևորականների վրձակի բարելաւման համար: Սրբազան Սինօդը կազմում են 3 միաբօսլիտ և մի քանի ընտրուած եպիսկոպոսներ: Սինօդի գործերի մասին մասին Կայսեր ներկայանալու համար նշանակուում է առանձին բարձրագոյն ատիճանաւոր, որը օպեր պրօկուրօր է կոչուում: Նրա միջոցով Կայսրը անում է իր կարգադրութիւնները Սրբազան Սինօդի վերաբերմամբ և տեղեկանում է հոգևոր կարևոր գործերի մասին:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՕՐԻՆԱԴՐՈՂԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պետական խորհուրդ

Պետական խորհուրդը մինչև 1905 թուականը պետական ամենաարժէք տեղն էր, ուր քննութեան էին առնուում մինիստրների մշակած բոլոր օրէնքները: Քննութիւնից յետոյ այդ օրէնքների մասին զեկուցում էր Կայսեր, միայն նրա հաստատութիւնից յետոյ նրանք ոյժ էին ստանում, իսկ առանց այդ հաստատութեան, նրանք և ոչ մի ոյժ չունէին: Պետական խորհուրդը կազմուում էր բոլոր մինիստրներից և բարձր ատիճանաւորներից, որոնց նշանակում էր Կայսրը: Բայց 1905 թ. Պետական խորհուրդը կազմափոխուեց: Այդ ժամանակից նրա մէջ մըտնում են ոչ միայն բարձրագոյն հաստատուած անձինք, այլև ընտրուած անդամներ, որոնք ընտրուում են ուղղափառ հոգևորականութիւնից, նահանգական զեմստվոներից, ազնուականութիւնից

(дворянство), համալսարաններից և անանի վաճառականութիւնից։ Պետական Խորհրդում զբաղաւոր անձը նախագահն է, որը նշանակւում է Կայսեր կողմից։ Նախագահից յետոյ երկրորդ տեղը բռնում է փոխ նախագահը. նա փոխարինում է նախագահին, երբ վերջինս հիւանդ է, և կամ արձակուրդ է ստացել։

Պետական Խորհրդի մէջ քննւում են պետական օրէնքները, որոնք արդէն մշակւած և հաստատւելու են դրած Պետական Դումայում։ Տարբերութիւնը միայն նրանում է, որ մինչև 1905 թ. մինիստրների կազմած ամեն մի օրէնք ուղղակի մտնում էր Պետական Խորհուրդ. այժմ նա առաջ մտնում է Պետական Դուման և Դումայից արդէն մտնում է Պետական Խորհուրդ։ Բայց ամեն մի օրէնք, որ քննւած է Պետական Դումայում և Խորհրդում այժ է ստանում միայն Կայսեր հաստատութիւնից յետոյ։

Պետական Դուման

Պետական Դուման հիմնւած է 1905 թւականին։ Նա զբաղւում է պետական օրէնքների մշակմամբ և քննութեամբ։ Այդ մշակւած օրէնքները յետոյ մտցւում են Պետական Խորհուրդ և որի հաստատութիւնից յետոյ միայն ներկայացւում է Կայսեր ի հաստատութիւն։ Իսկ առանց Պետական Խորհրդի հաստատութեան և Կայսեր հաստատութեան ոչ մի օրէնք այժ չի ստանում. թէպէտև և նրանք հաստատութիւն գտած լինեն Պետական Դումայում։

Պետական Դուման կազմւում է ժողովրդի կողմից 5 տարի ժամանակով ընտրւած անդամներից։

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՊԱԼԱՏԸ
ուր տեղի են ունենում Պետ. Դումայի նիստերը։

Պրեզիդիում Պետ. Դումայի

Պետական Դուման իր միջից ընտրում է մի նախագահ, երկու ընկեր-նախագահ, մի քարտուղար, մի աւագ օգնական քարտուղարի և մի քանի կրտսեր քարտուղարներ։

Պետական Դումայի նախագահը, երկու ընկերները, քարտուղարը և քարտուղարի աւագ օգնականը, բոլոր այդ հինգ անձինք կազմում են խորհուրդ, որը կոչւում է պրեզիդիում։ Այդ պրեզիդիումը վաղօրօք քննութեան է առնում թէ ինչ խնդիրներ պէտք է մացնել Դումայի հերթական նիստին, որպէսի գործը կարելի է յաջաձգել միւս նիստին և ուրիշ շատ հարցեր, որոնք Դումայի կարգապրութեան են վերաբերում։

Պետական Դումայի անդամներ

Պետական Դումայի անդամները անվախ ու ազատ կարող են խօսել այն հարցերի մասին, որոնք մացրած են Դումայի քննութեան (Յօդ. 14-րդ)։

Պետական Դումայի անդամը կարող է ազատութիւնից զրկել (բանտարկել) միմիայն պետական իշխանութեան որոշումով։ Իսկ Դումայի աշխատանքների ժամանակ պետական իշխանութիւնը նրան կարող է ազատութիւնից զրկել միայն Պետական Դումայի թոյլատուութեամբ։ Բայց եթէ Դումայի անդամը ծանր յանցանք գործած տեղում բռնւում է, այն ժամանակ պետական իշխանութիւնը առանց Դումայի համաձայնութեան էլ կարող է նրան ազատութիւնից զրկել (Յօդ. 15, 16 և 22)։

Պետական Դուման կարող է իր անդամներին ժամանակաւոր հեռացնել նիստից անկարգութիւնների և արատաբեր վերաբերմունքի համար (Յօդ. 21)։

Պետական Դումայի կազմը

Առաջին և երկրորդ Պետական Դումայի ընտրութիւնները կատարւում էին 1905 թւին հրատարակած օրէնքներով։ Այդ ժամանակ Պետական Դումայում ընտրած էին 524 անդամ։ Բայց երկրորդ Դումայի արձակումից յետոյ, հրատարակուց ընտրութիւնների վերաբերեալ նոր օրէնք։ Այդ օրէնքով Պետ. Դումայի անդամների թիւը պակասեց. ընդամենը ընտրուց 442 անդամ։

Երրորդ Պետական դումայի կազմը շատ է տարբերւում առաջին և երկրորդ Դումաներից։

Ահա տարբերութիւնը.—

Կ ա յ ի ն	I Պետ. Դում	II Պ. Դում.	III Պ. Դում.
Գիւղականներ . .	194	163	224
Հոգևորականներ .	17	21	52
Գիւղացիներ և մեշչաններ . .	241	256	111

Այս ազիւսակից երևում է, որ առաջին և երկրորդ Պետական Դումայում գիւղացիները և մեշչաննները թիւով աւելի շատ էին, քան երրորդ Դումայում. միւս կողմից ազնւականները և հոգևորականները երրորդ Դումայում աւելի շատ են, քան առաջին և երկրորդ Դումայում։ Այս առաջացաւ նրանից, որ երկրորդ Դումայի արձակումից յետոյ Դումայի ընտրական օրէնքների մէջ փոփոխութիւն տեղի ունեցաւ։

Ըստ պարապմունքի Ա. Բ. և Գ. Պետական Դումայի անդամները բաժանւում են հետևեալ կերպով.—

Պարապմունք	I Պետ. Դում.	II Պ. Դում.	III Պ. Դում.
Հինովնիկներ . . .	23	9	25
Հաս. ծառ. ընտրութ.	58	42	137
Հաս. ծառ. վարձով .	10	13	13
Պրօֆեսսօրներ . .	17	9	10
Ուսուցիչներ . . .	26	31	12
Գրողներ	14	16	4
Փաստաբաններ . .	44	36	31
Բժիշկներ	26	32	15
Տնտեսներ . . .	8	11	51
Հոգևոր պաշտօնեան.	17	21	6

Վաճառ. և արդիւն. .	29	29	24
Խոշոր հողատէրեր .	67	58	51
Բանւոր. և արհեստ.	109	168	43
Մանր հողատէրեր .	24	36	11
Այլ անձինք . . .	52	13	9
Դումարը	524	524	442

Առաջին, երկրորդ և երրորդ Դումաները տարբերւում են և իրենց անդ. հայեացքներով ու ցանկութիւններով։ Իւրաքանչիւր Դումայի անդամ ընտրութիւնից առաջ իր ընտրողներին յայտնում էր ինչ հայեացքների պիտի հետևի, ինչի պիտի ձգտի Պետ. Դումայում իր ժողովրդի համար։ Եւ նա, երբ իր ընտրութիւնից յետոյ գնում էր Դուման, նա ամենից առաջ սկսում էր ծանօթանալ Դումայի անդամների հետ. որպէսզի իրեն դաշնակիցներ գտնի։ Համախոհներից կազմւում էր կուսակցութիւններ. ամեն կուսակցութիւն միացնում էր իր անդամներին միևնոյն խնդիրների ու ցանկութիւնների շուրջը։ Եւ ամեն մի անդամ պարտաւորւում էր պաշտպան լինել այդ խնդիրներին ու ցանկութիւններին։

Այսպէս Պետական Դումայում կազմւեցին դանազան կուսակցութիւններ։ Այդպիսի կուսակ

յուխթիւններ Դումայում չատ կան, որոնցից գլխաւորները հետեւալներն են. 1) Սոիւզնիկներ. 2) Ձախաւոր աշակողմեաններ. 3) Նացիոնալիստներ. 4) Հոկտեմբերեաններ. 5) Լեհական կօլօ. 6) Պրօգրեսիստներ. 7) Կադետներ. 8) Աշխատաւորականներ (трудовики) և 9) Սօցիալ-դեմոկրատներ։

Բոլոր այդ կուսակցութիւնները չատ խընդիրներում միանում են երեք գլխաւոր խմբերի մէջ, այսինքն 1) աջակողմեաններ խումբ, 2) ձախակողմեաններ խումբ և 3) կենտրոնի խումբ։

Մի քանի խօսք իւրաքանչիւր խմբի մասին։

1) Սոիւզնիկների կուսակցութիւնը գլխաւորապէս կազմում են «ռուս ժողովրդի միութեան» և «Մարքայէլ հրեշտակապետի միութեան» անդամները։ Նրանց գլխաւոր առաջնորդներն են Պուրիշկևիչը, Ձամիսլովսկին և Մարկով երկրորդը։ Սոիւզնիկների այս խմբակցութիւնը միացած է հետեւալ կանոնութիւններով։ Ռուսաստանի դլուխը պէտք է կանգնած լինի անսահման, ինքնակալ թագաւորը։ Նրա իշխանութիւնը պիտի լինի լրիւ (полная), ոչ մի օրէնքով չը սահմանափակած։ Ռուս եկեղեցու դլուխը պէտք է լինի Մոսկւայի միտրոպօլիտը։ Ռուսաց պետութեան մէջ պէտք է գերիշխէ ուղղափառ կրօնը

միւս բոլոր կրօնների վրայ. ռուս ժողովուրդը պէտք է գերիշխէ բոլոր ժողովուրդների վրայ։ Բոլոր հրէաները պէտք է արտաքսուն ռուսաց պետութեան սահմանից։ Քրիստոնեական հոդեւորականութիւնը պէտք է կանոնաւոր կերպով բնդարձակէլ Սիբիր գաղթեցնելու ճանապարհով, բայց ոչ մի մէկից, որոնք գիւղացիների դրութեան բարւոքմանն են ուղղած, չպէտք է խանգարեն հողի սեփականութեան անձեռնմխելիութեանը։

Հոդային հարցի նկատմամբ սոիւզնիկների խմբին միանում են աջակողմեանների և նացիոնալիստների կուսակցութիւնը։ Նրանց նպատակները ու ցանկութիւնները չատ բաներում նմանում են։ Աջակողմեանների գլխաւոր առաջնորդներն են Պրուշեվսկի, Բաշմչև և դրաֆ Բոբրինսկի։

2) Ձախակողմեաններ խմբին անւանում են նոյնպէս օպոզիցիական. այդ խումբը կազմում են կադետները, աշխատաւորականները և սօցիալ-դեմօկրատները։ Առաջին Պետական Դումայում սրանց խումբը թւով ամենից չատ էր։ Թէ ինչպէս է այդ խումբը հասկանում ժողովրդի կարիքները, այդ մասին մանրամասն խօսած է առաջին Պետ. Դումայում Դայսեր դաշնական ճառի պատասխանի մէջ։ Երրորդ Դումայում օպոզիցիան պնդում է, որ բոլոր նոր կարգերը, որ

թոստացել է Գայսերը 1905 թւի հոկտեմբերի 17-ի մանիֆեստում, այժմ նրանից իսկ բոլորը իրականացնան կեանքի մէջ։ Այս խմբի մէջ գլխաւոր առաջնորդներն են Միլիւկով, Մակլակով, Ռոդիչև (կադ.), Ռուլատ (աշխ.) և Պօկրովսկի (ա.-պ.)։

Հակակոմմաններների խմբին մի քանի հարցերում միանում է պրօգրեսիստների կուսակցութիւնը, որոնց առաջնորդներն են Եֆրեմով և Լվով։

4) Կենդրօնի խումբը կազմում են հոկտեմբերիստները, իսկ սրանց միանում են և Լեհաստան հօլօվ անդամները։ Այս խումբը երբորդ Դումայում թւով ամենից շատն է։ Հողային խընդրում կենդրօնը համակերպւում է աջակողմեանների. նա միայն տարբերւում է նրանով, որ աջակողմեանները ամեն կերպ ընդիմանում են Ռուսաստանում նոր կարգեր մուծելուն, որոնք Գայսեր կողմից խոստացւած են 1905 թ. հոկտ. 17-ի մանիֆեստում, իսկ հոկտեմբերիստները խոստովանւում են, որ նոր կարգերը օգտակար են ռուս ժողովրդի բարօրութեան համար, բայց ներկայիս նրանց կեանքի մէջ դործադրելը վտանգաւոր է. նրանք համոզւած են, որ ռուս ժողովուրդը դեռ ևս անպատրաստ է նոր կարգերին, որ սկզբում նրան պէտք է զարգացնել, իսկ նոր կարգերը կեանքի մէջ աստիճանաբար սկսել։

Այս ազիւսեակից երևում է Դումայում եղած իւրաքանչիւր կուսակցութեան անդամների թիւը.

Կ ա յ ք ն	Ը. Դում.	Բ. Դում.	Գ. Դում
Սօցիալ դեմօկրատն.	23	99	15
Աշխատաւորականներ	97	115	14
Կադետներ	161	92	52
Պրօգրեսիստներ . .	—	—	39
Հոկտեմբերիաններ .	31	42	135
Չափաւոր միապետ.	67	50	107
Ծայրահեղ միապետ.	17	22	51
Լեհեր և այլ ազգեր	—	—	27

Թարգմ. «*Народный календарь*» *1911 г.*

ԱՂՔԱՏ ՄԱՐԴԻԿ

Վ. Հ ի ւ գ ո

Մութ է փոխադրակայից գիշեր է։

Չինորսի աղքատիկ խրճիթում, կրակի մօտ նստած է ծանրին և կարկատում է կոշտ քրտինքից մաշած առագաստը։ Նա լսում է, ինչպէս սուլում և գոռում է քամին, ինչպէս անձրևը թմբկահարում է պատուհանները, ինչպէս աննըպաշտակ կերպով ճընգճընգացնում են ջրի ալիքները, ճղփալով և փշրւելով ափերի մօտ. գուրսը չոհսնւած մութ է և սաստ։ Չինորսի աղքատիկ խրճիթը ասք է և գուրալի։ Հոգէ յուսակը մաքուր աւելած է. վառարանում ճայթում է կաթսը ու բոցավառում կրակը, իսկ խաչքում փայլում են մաքուր լուացած ամանները։ Սենեակի խորքում հին մահճակալն է սպիտակ վարագոյրով ծածկած ու յատակին գցած մեծ գոշակի վրայ քաղցր քնած են նրա հինգ փոքրիկ երեխաները, որոնց նանիկ է ասում փոխադրակայ ովկիանոսը։ Ծաննին նստած է կրակի մօտ և կարկատում է մաշած առագաստները։ Նրա ամուսինն այժմ ծովումն է. նա գնացել է ձուկ սրսալու։

Սոսկալի է ծովը գուրս գալ այդ մութ, ցուրտ և մառախլապատ գիշերը. բայց պէ՞ տ չէ անել. ամ չի կարելի թողնել ընտանիքին անտէր, անտիրական աշխարհի երեսին։ Մանկութիւնից նա ընտելացել է ովկիանոսին և բացի ձկնորսութիւնից չի պարապել ուրիշ ոչ մի գործով, ու թէև երկիւղալի ու յամառ է ովկիանոսը, բայց այնպէս թէ այնպէս էլի նա էր, որ կերակրում է և՛ նրան և՛ Ծաննին և՛ բոլոր փոքրիկներին, որոնք թափւած են հինգ գոշակի վրայ։

Խաղաղ լինի թէ մառախլապատ, ձկնորսը ամեն երեկոյ իր նաւակով ուղևորւում է ծովը իր բախտը փորձելու։ Այդ այնքան էլ դիւրին չէ. հա՞շտ է արդեօք փնտրել այդ ահագին ջրի մէջ այն կամարաձև արգելնաւտը տեղերը, որտեղ հաւաքւում և խաղ են անում արծաթափայլ թեփերով ծածկւած ձկները։ Դրա համար ինչքան լաւ պէտք է իմանալ ովկիանոսը, ինչպէս պէտք է ի նկատի առնել հողմը և մակընթացութիւնը։ Շուկը յանդուգն է. նրա համար ահռելի չեն ալիքներն ու ապառաժները, նա մտնում է ամենավտանգաւոր տեղերը, որտեղ եփւում ու սպասում են կոհակները։ Եւ ահա համարձակ ձկնորսը գրնում է դէպի ապառաժները։

Սառը և կանաչ ալիքները բարձրանում են նրա շուրջը, խորտակւելով նաւակին այս ու այն

կողմը չալարելով. Չրի ցավքունը խփում է նրա երեսին, բոլոր իրերը հռնհռում են, քամին ուռցնում է մոխրագույն առագաստները...

Իսկ Ծաննին նստած է տանը, կարկատում է պատռոտած ցանցը և հին առագաստը ու ձկնապուր է պատրաստում ընթրիքի համար, և երեխաներին կերակրելուց ու քնեցնելուց յետոյ, երկար, շատ երկար ազօթում է... Նրան լսելի է սպիկանոսի թնդիւնն ու քամու չռռաչիւնը։ Երբեմն նրա ականջին է հասնում Ուրբաթի սուր ձայնը... իսկ անձրևը գալիս է, հա գալիս։ Ծաննին երկիւղի մէջ է։ Նրան երևում են նաւարեկման սասկալի պատկերներ, ժայռերին դիպչող ու չարչուող նաւեր, խեղդուող նաւաստիներ... Ահռելի է...

Փայտեայ հին ժամացոյցը իր խռպոտ ձայնով հաւասար բաղխում է տիկ-տակ, տիկ-տակ ..

Երեխաները քնած են...

Ծաննին խորասուզւում է մտածմունքների մէջ...

Ցոյն, նրանք հեշտ չեն ապրում, ամուսինն իր կեանքը չնայելով քամուն և ցրտին մանում է ծովը, ննջարկում է իրեն սոսկ հաղարատար վտանգների, իսկ Ծաննին առաւօտից մինչև երեկոյ նստած է աշխատանքի։ Եւ ինչ-մեծ է արդեօք նրանց վաստակը։ Նրա փոքրիկ երեխաները սոսկ թէ ձմեռ վազվզում են բորիկ ոտքերով. ցրտենի հացի մասին նոյն իսկ ուսուցչուհի է մտածել,—յաւ է, որ հաճարենին էլ բաւականանում է։ Ուրիշ է, լինում է երբեմն և ձուկը։ Էլի փառք Աստուծոյ, որ երեխաները առողջ են, իսկ հիմ Աստուած մի արասցէ, նրանցից մէկին ու մէկը հիւանդանար... Ինչ կլինէր այն ժամանակ... Օ՜, Տէր Աստուած, ինչպէս զոռում է սպիկանոսը ու փչում քամին։ Ո՞րտեղ է այժմ նաւը։ Ո՞րտեղ է իմ խեղճ ամուսինը։ Պահպանիր նրան Տէր Աստուած, ողորմիր և ազատիր։

Խեղճ նաւաստիների մայրեր ու կանայք։ Դժուար է ծովում թողնել սիրեցեալ ամուսիններին, ծնողներին, որդիքներին ու հղիացներին։ Ծանր է նրանց անյայտութեան լուրն առնելը, ծանր է նոյնիսկ մտածել, որ նրանք սպիկանոսի իշխանութեան տակն են, այդ սառը, գաժան և հզօր հրէշի, և որ այդ հրէշի հետ կռուելու համար նրանք ոչինչ չունեն, բացի մի քանի տախտակներից և խղճուկ քաֆեանի կտորներից։ Եւ ոչ մի բոպէ չի կարելի համոզուած լինել, որ նրանք ողջ են ու անվնաս, որ նրանց ոչնչանալ չի սպասում։ Ինչպէս իմանալ։ Գուցէ փոթորիկը չարգել է նաւը, ինչպէս տաշեղի շպրտել է նրան դէպի ալիքները .. Խեղճ մայր և խեղճ կին, լացիր, կսկծիր ձեռքերդ, վազիր ծովի ափ, նայիր

հետուն... Ահա նա, այս անյատակ ովկիանոսը — այս անդունդը իր մութ և ահռելի ալիքներով։

Կոհակները ճաշում են, նա ճաշում... Պաղատում, ձայն տուր նրան. «Օ՜, խնայեցէք, պահպանեցէք, վերադարձրէք նրան ինձ»... Ովկիանոսը բեղ պատասխան չի տալ։

Թշուառ Ժաննին աւելի է ախրում ու տրտմում։ Նրա ամուսինը բոլորովին միայնակ, միայնակ է բաց ծովում այս մութ ու փոթորկալից գիշերը։ Նա օգնականներ չունի։ Երեխաները դեռ ևս փոքր են։ Խեղճ Ժաննի, դու խաբում ես քեզ ասելով թէ՝ «Ահա, հիմ նրանք մեծացած լինէլին, կօգնէին իրանց հօրը». մի ասիր այդպէս. կմեծանան նրանք, կերթան իրանց հօր հետ և դու լաց լինելով կասես «Ընկ, երանի նրանք փոքր լինէին և ինձ հետ տանը նստէին։

Մտածմունքից արթնանալով Ժաննին վեր կացաւ, գլուխը փոթաթեց, վառիչ լապտերը և դուրս եկաւ փողոց։ Նա ուզում էր տեսնի՝ չի՞ վերադառնում արդեօք իր ամուսինը, հանդիպում է արդեօք ծովը, վառած — և ոչ է տալիս արդեօք փարոսի լամպան։

Մութն է։ Դալիս է բարակ անձրև։ Ամբողջ գիւղը քնած է։ Լոյսերը հանգցրած են։ Գիւղի ծայրում, ովկիանոսի ափին, կանգնած է հին, կիսակործան լուսնիկը ծուռ ու պատռտով ու

քայքայած պռնով։ Իւրաքանչիւր քամու ժամանակ դուռը ճռնչում է և թխթխկում, կարծես հառաչում է։ Քամին աւելի կատաղի քնկնում է այս աղքատիկ խրճիթի վրայ, կարծես ուզում է պոկել ու փախցնել նրան. իսկ դուռը ճռնչում ու հառաչում է և փաթաթ ծղնոտը տանկրում խշշխշում, կարծես պատռտում է, որ խնայի իրեն։ Ժաննին կանգնից խրճիթի չէմքին ու նայեց ծուռ պատուհանից։ Խրճիթը մութն է «Պէտք է նայել խեղճ հիւանդին — մտածեց նա — ես բոլորովին մոռացել եմ նրա մասին։ Ամուսինս ասում էր, որ երէկ նա վատ էր։ Էհ, նա էլ խեղճը բոլորովին միայնակ է, ոչ ոք չկայ, որ մարկ տայ»։

Եւ Ժաննին ծեծից դուռը, ականջ դրեց...

Խրճիթում լռութիւն է տիրում. ոչ ոք չի պատասխանում։

«Թշուառ հիւանդ, — չէմքումը կանգնած մտածում էր Ժաննին — լինչպէս կարող ես հիւանդանալ, երբ դու ինքդ պէտք է պահես ընտանիքդ։ Առնէք նա միայն երկու երեխայ ունի, բայց չէ որ նա որբևայրի կին է և բոլոր աշխատանքն ու չարչարանքը միայն նրա վրայ է ծանրացած, իսկ այսպէս կրկին հիւանդութիւն։ Էհ, ծանր է, արդարատեսիլ»։

Նա նորից և նորից ծեծից դուռը։ Դարձեալ պատասխան չկայ։

—Էյ, հարևանուհի— կանչեց Ժաննին ու մըտածեց. «Ամա թէ քնել է հա՛, չես էլ կարող պարթեցնել»: Քամին փչում է առաջվայ նման. Ժաննին սկսում է դողալ ցրտից ու խոնաւութիւնից: Նա արդէն ուզում էր տուն վերադառնալ, յանկարծ ուժգին քամին, որ քիչ էր մնում խլէր նրա թաշկինակը, թափահարեց հին դուռը և նա ճռնչալով բացւեց

Ժաննին չէմքից անցաւ ու ներս մտաւ նրա լապտերը լուսաւորում էր սլաուր և անմռունչ սենեակի նոյրին մասը: Այստեղ նոյնպէս խոնաւ էր ու ցուրտ, ինչպէս և փողոցում. պարզ երևում էր, որ սենեակը վաղուց է չի տաքացրած: Ցանկրի շատ տեղերից անձրևը թափւում էր ինչպէս մաղի ծակերից. պատի մօտ, ուղիղ դռան դիմացը, մի փոքրիկ ծղնոտի կիսուկի վրայ ընկած է մեռած որևէայրուհու դիակը: Նրա գլուխը չատ էր ընկած. սառած և կապտած ղէմքին ու չվակած բերանում երևում էր պարհուրկի և յուսահատութեան արտայայտութիւնը... Սփրթնած, քարացած ձեռքը կարծես թէ մի բանի համար մեկնելիս՝ վայր էր ընկել ու կախւել ծղնոտից. Մօր դիակից երկու քայլ հեռու, աղքատիկ օրօրոցում, երկու փոքրիկ երեխաներ դուռաց, խուճուճ հատատաթշիկները խարտեաշ գլխիկները կծկելով և մէկը միւսին տուի տալով—չը

նայած մահուան մօտիկութեան ու քամու մռնչիւնին՝ քնած են պինդ ու անվրդով:

Մայրը մահուան վերջին րոպէին կարողացել էր նրանց առուիկները փաթաթել հին թաշկինակով և ծածկել նրանց իր չորերով, որպէսզի նրանք չդգան ցուրտն ու խոնաւութիւնը: Երեխաներից մէկն իր թմփլիկ թաթիկն էր դրել մշի տակ, միւսը՝ երեսը հդրօր վրայն էր փաթաթել: Նրանց շնչառութիւնը հանգիստ է և հաւասար, թւում էր, թէ նրանք այնպէս ամուր և քաղցր են քնած, որ ոչ մի բան չի կարող պարթեցնել նրանց: Իսկ հոգին բոլորովին չի հանգստանում, վրդում է և մռնչում... Մերթ ընդ մերթ անձրևի կաթիլները, որ թափւում էին տանիքից, ընկնում էին հանդուցեալի ճակատին, գալարւում սառած այտերին, կարծես արցունքներ լինէին վշատաղ, այլանդակած դէմքին... Ժաննին վազում է դէպի տուն: Նա իր վերարկուի տակ ինչ որ տանում է: Նրա սիրտը պարկում է ուժգին, նա չի համարձակւում յետ նայել, կարծես թէ մէկը վազում է նրա յետևից: Մի բան լսо չի դադարել հանդուցեալից:

Տուն հասնելով, նա իր բեռը դնում է մահճակալի վրայ և շտապով քաշում է վարագոյրը: Յետոյ նա վերցնում է աթոռը, դնում մահճակալի մօտ և նստում, գլուխը մահճակալի անարին

խոնաքհեղնելով։ Նա զոնաա էր և յուզած։ Թրուում է, թէ մի ինչ որ բան տանջում է նրան ու խլիզը կշտամբում է մի ինչ որ բանի համար։ Դուրս էն թռչում նրա բերանից կծկուռը բացականչութիւններ «Ախ՜զ ամուսին, ինչ կասի նա... Այս ինչ արի հո. կատակ է արդեօք։—հինդը,—մեր երեխանները – քիչ էր արդեօք նրա համար սրանց հոգսը... Այս նո՞ է .. Ոչ, դեռ ոչ... եւ ինչո՞ւ համար վերցրել... եթէ նա ինձ յանդիմանի դրա համար—արժանի եմ, այդպէս է հարկաւոր... Ահա նա... Ոչ. ակն, աւելի լաւ»... Դուռը ճռռաց, կարծես մէկը նորա մտաւ։ Թանձրն ցնցուեց, վերկացաւ աթոռից։

«Ոչ, գարձեալ ոչ ո՛ր. Տէր Աստուած, ինչո՞ւ ես այդ արի... Եւմ ինչպէս պէտք է ես նրա աչքերին նայիմ... Եւ Թանձրն մտատանջելով, երկար ժամանակ նստում է մտճաւալի մօտ, խորասուզուում մտածմունքների մէջ։

Ընդհակ դադարեց. լուսացաւ, բայց վզվզում է քամին և ամպիանոսը ոռնում առաջւայ նման։ Յանկարծ դուռը բացուեց, սենեակը ճեղքեց ծովի օդի թարմ հոսանքը և բարձրահասակ թխադէմ ձկնորսը քարշ տալով իր յետեից թաց և պատռտած ցանցը նորա մտաւ խրճիթը առելով.

—Ահա և ես, Թանձր։

—Ա՛հ, այդ դո՛ւ ես—ճչում է Թանձրն, ձա-

դում պէտի նա, վրկում է և լսում, չհամարձակւելով աչքերը պարձնել պէտի նա։

—Է՛հ, Թանձր, վատ էր, սիրելիս, շատ վատ, սմա թէ գիշեր էր հա՛, երկիւղալի...

—Այո, այո, եղանակը սոսկալի էր. բայց ինչպէս է որդ։

—Անյաջող, բոլորովին անյաջող։ Ոչինչ չը բռնեցի, միայն ցանցը քրքրւեց։ Վատ է, շատ վատ... Բայց ինչ եղանակ էր, Թանձր։ Այդպիսի գիշեր իմ կեանքումս չեմ յիշում։ Քամին վռռում էր ինչպէս սատանայ, իմ մակոյկս շպրտում էր ինչպէս մի գնդակ։ Լինում էին րոպէներ, երբ ես մտածում էի, թէ թռիչը կտրւել է և նաւակս գնում է դէպի ծովի յատակը։ Էլ ինչ ձուկ բռնել։ Փառը Աստուծոյ, որ էլի սաղ-սալամաթ տուն հասայ։ Բայց դու այստեղ առանց ինձ ինչ էիր անում—շարունակից ձկնորսը ցանցը ներս քաշելով ու տաքանալով վառարանի մօտ։

—Ե՛ս...—տաց Թանձրն սիրթենելով —էլ ինչ ես... Նստած կարում էի... Քամին այնպէս էր փչում, որ ես սոսկում էի, ես քո մասին մըտածում ու վախենում էի։

—Այո, այո, փըսթփըսթաց ամուսինը—եղանակը սատանայական էր, անտանելի, բայց դէ ինչ արած։

Երկուսն էլ լռեցին։

Յետոյ Ժաննին անվճռակամօրէն, դողալով և վախնալով ինչպէս յանցաւոր, ասաց.

—Հա, ի դէպ, պիտի՛ս. հարևանուհի Սիմըոնը վաճառնել է: Չգիտեմ, թէ երբ է վաճառնել, երևի երէկ քո այնտեղ գնալուց յետոյ: Յուսում եմ խեղճ թշուառին: Դառն էր նրա համար մեռնիլ այդ տեսակ տգրատութեան դրկում: Եւ երեխաների համար, ո՛վ գիտէ, որքան էր սիրտը ճմլուում: Չէ՞ որ նա թողել է երկու փոքրիկ երեխաներ, մէկը դեռ և չի խօսում, իսկ միւսը հազիւ է շուշ անում:

Ժաննին լռեց: Չկնորսը մռայլուեց. նրա բառերի և ժպտալից դէմքը լրջացաւ ու մտատանջուեց:

—Ա՛յ քիզ բան.—խօսեց նա վերջապէս ծոծրակը քորելով:—Է՛հ, եղած-չեղած, հինգ երեխայ ունէինք, այժմ կունենանք հօթը: Դէն լաւ չենք չպրտել նրանց, ինչպէս շան ձագերի: Հէնց որ մեզ քիչ կզգինք—այժմ է քիչ դժուար: Է՛հ, ինչ արած: Երեխաները փոքր են, ինչպէս կաթող են նրանք խրանց կերակրել.. Դիտի՛ս ինչ, Ժաննի, վազիր չուտով նրանց մօտ և բեր այստեղ, եթէ նրանք գտրճնել են. երևի կվախենան հանդուգնայից: Լսո՛ւմ ես, ինչպէս քամին բաղխում է դուռը,—կարծես նրանց հանդուգնայ մայրն է բաղխողը: Ազատարան տանք նրա երեխանգը, Ժաննի: Նրանք կբարեկամանան մեր

երեխաների հետ և կլինեն ինչպէս հարազատ եղբայրներ: Երեկոները, ասենքին մեզ մօտ ուելը ազմկալի և ուրախ կլինի, քան առաջ: Ընդանք կինդան, կխաղան, կրարձրանան իմ ծընկներիս մեր երեխաների հետ միասին:

Իսկ երբ Ասուած կտեսնի, որ պէտք է կրակրել էլի երկու երեխի, Նա ինձ յաջող որս կուղարկի: Ասուծոները վազ դուրս կերթամ, երկար կմնամ ծովում, այլևս գինի չեմ խմիլ... Է՛հ, ինչ անենք, մի կերպ հօլա կտանենք: Դէ գնա շուտով:

Բայց Ժաննին տեղից չը շարժուեց:

—Ինչո՛ւ ես լռում. գոհ չե՞ս: Վախենո՛ւմ ես, չե՞ս ուզում նրանց վերցնել: Ի՞նչ է պատահել քիզ Ժաննի: Երջանիկ և ուրախացած Ժաննին լուռ ու մունջ տարաւ ամուսնուն մահճակալի մօտ և յետ քաշնց վարագոյրը:

Այնտեղ պառկած էին վաճառնուած հարևանուհու երեխաները և քնած էին հանգիստ ու անվրդով..

Թարգմ. Ս. ս. Երզնկ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԿՐԹԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԿԱԶՄԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ Գ.ՐԱՑ

Բժշկա—հոգեբանական գրոյցներ

Դ. Լ Ո Խ Ե Ն Ց.

Կրեերի սահմանափակումը. կրեերի տեսակներ եւ դասաւորումը

Ի՞նչ է կիրքը։ Կիրքն է հոգու զօրեղ չարժուղութիւնը։ երբ մի սրեկիչ ազատութիւն մարդու մէջ սաստիկ կերպով գործեցնում է համապատասխան զգացմունքներ, որոնք մարքի բնաւորութիւնը յանկարծակի փոխում են, այդ ժամանակ նկատելի է լինում նոգեկան յուզումն՝ կիրք։

Երբ մի զգացմունք և կամ մի զգայութիւն, շատ զօրեղանալով, մարդու գիտակցութեան մէջ տիրապետել է տալիս միմիայն մի երկու գաղափարների նեղ շրջան, միւսները բոլորովին անհետացնում է մարքից, մենք ասում ենք՝ մարդը կրի ազդեցութեան տակ է։ Սաստիկ բարկացած մարդու գլխում միայն մի բան կայ, որ իր բարկութեան առարկային վնաս հասցնել խօսքով կամ ֆիզիքական հարուածով. վախեցած մարդը իր

մտքերը երբեմն բոլորովին կորցնում է, չէ՛ընում է, կամ մոռանում է միայն փախչելու մասին նրա։

Գրքերի մասին մանրամասն հոգեբանական և բնախօսական մեկնութիւն ևս կատմ չեմ տայ, առանձին գրոյցով։ Ես այժմ ուղղակի առաջ բերենք գրքերի գլխաւոր տեսակները։

Գրքերը ընդհանրապէս երկու ընդդիմադիր ձևով են արտայայտում՝ հաճոյական, ուրախալուն կամ տհաճ՝ անբաւական զգացումներով, կամ սաստիկ ձգտումով (սէր, բաղձանք և այլն), կամ սաստիկ խորտումով (բարկութիւն, տանջութիւն և այլն)։

Այս ընդհանուր բաժանումը կարելի է մասնաւորել երկրորդապէս՝ առօրեայ, ընկերական, մեր սկզբնական կենդանական «Ես»-ին վերաբերեալ գրքերի (ա) ուրախութեան. անձնասիրութեան, մեր սեռի պաշտպանութեան գիտարեալ կրեերի եւ բ) բարկութիւն, ցասումն և այլն) 2) բարձր մտաւոր զարգացմամբ առաջացած մեր մտքի կային ես-ին վերաբերեալ գրքերի (ա) իղէալական սէրը, ընտանեկան գրքերը, հայրենասիրութեան չափազանց գրքերը, և բ) բարկութիւն անիրաւութեան դէմ, ոխակալութիւն անարդարութեան դէմ և այլն։

Մի այլ տեսակէտից նայելով՝ գրքերը կարելի է բաժանել և հետևեալ կերպով, որ աւելի

յարմար է մեր պրոյեկտը նկատելին։ Այս բաժանումը Կանտ փիլիսոփային կպատկանի, որ բերում է զանազան հոգեբանական զրւածքների մէջ.

Ա. Կրքեր, որ չափազանց զրգռում են և լարում մեր կազմւածքի օրգանիզմները։

Բ. Կրքեր, որ ընդհակառակը՝ ընկճեցնող և թուլացնող ազդեցութիւն ունին։

Բերենք այստեղ այդ երկու դասակարգին վերաբերեալ մի քանի կրքեր իբրև դէմ յանդիման.

Ուրախութեան և ծնցութեան կրքեր	Տխրութեան և Դժգոհութեան կրքեր
Ինքնահաւանութեան և Ինքնախրութեան կրքեր	Ամօթխածութեան և Համեստութեան կրքեր
Հիացում	Ջարդում-գլուխ կորցնել
Բարկութեան և վհատած Նուիթեան կրքեր	Փոքրոգ. և սառըսաղարշ կրքեր
Քաջութիւն	Երկչոտութիւն
Ոգևոր. և խրոխտաւէտիւն	Վախ և սարսափ
Նախանձ, խէթի և	Յուսաբեկութեան և
Վրէժխնդրութեան կրքեր	Ապաշաւութեան կրքեր

Այս կերպ փորր ի շատէ խօսելով կրքերի էութեան և տեսակները մասին, դառնանք հետևել կատարելու մեր հիմնական հարցին, թէ այս ամենը՝ կրքերը ինչ ազդեցութիւն ունին մեր կազմւածքի զանազան գործարաններին և առողջութեան վրայ։

ԳԼՈՒԽ Բ.

Կրքերի ազդեցութիւնը սրտի եւ նրա եւակների վրայ, կամ արիւնի շրջանառութեան վրայ

Բնախօսական նայեացք.—Այս հարցը ճիշտ բնախօսական (ֆիզիօլօգիական) հայեացքով որ քննելու լինէինք, պէտք է ձեզ ծանօթացնէի թէ ուղեղը ինչ ջղերով (նեբւերով) կապւած է սրտի հետ, որ ջիղը ինչ տեսակ ազդեցութիւն ունի սրտի վրայ, կենդանիների վրայ եղած փորձերը ինչ են ցոյց տալիս.—ուղեղի որ մասը այս և այն տեսակ զրգռելուց (օրինակ՝ տաքով ծակելուց կամ էլէքտրական սլաքի զրգռից) ինչպիսի շարժումներ է առաջ բերել սրտի կամ երակների կողմից. յատկապէս որ հոգեկան զրգռիչը ինչ տեսակ ազդեցութիւն է անում սրտի վրայ կամ սմբողջ երակների որ մասի վրայ և այլն և այլն։

Այս խնդիրների սկզբնական մասը բնախօսութիւնը բաւականաչափ քննել է և լուծել։ Մնացեալ երկրորդ մասը, այն է՝ զանազան կրք-

քերի ապրելությունը սրան և երակների շարժումների վրայ՝ դեռ ես փորձերի և բնախօսական հետազօտությունների առարկայ նոր է դարձել։ Այժմ, օրինակ, կան փորձեր որոշելու՝ թէ դանազան դեղերից սրտի բարախումը ինչ փոփոխումներ է կրում։ Պէտք է խմանաք, որ բնախօսությունը ունի մի քանի տեսակ մեքենայ սրտի շարժումները թղթի վրայ դուրս բերելու դանազան ձևերով, որ կոչւում են կարդիոգրամներ, այսինքն սրտի գրեր. նոյնը և բազկերակների շարժումների վրայ, որ կոչւում են սֆիգմօգրամներ, այսինքն երակների գրեր։ Գան մեքենաներ՝ որոշ ժամանակների տակ այժը կամ ճնշման ուժգինը չափելու, որ կոչւում են երակաժանրաչափեր։ Ցայսմիկ են նաև իտալացի բնախօս Մօսօյի պլեսիսմօգրաֆի տեսակները, որ տալիս են մէջտղ մարմնի մի մասի, օրինակ ձեռքի երակների ամբողջութեամբ լայնանալը և լցւելը կամ սեղմել և կծկւելը, դանազան հոգեկան գրգիռներից ակնյայտնի չափելու գրչաձև ալաքների շարժումներով, որ առաջացում են յիշուած մասը մի մեքենայում պարփակող ջրի ալիքներից... Սակայն այս ամենը սկիզբն է գործի և դժուար է դեռ այդ փորձերից ընդհանուր և գործնական եզրակացութիւններ դուրս բերել, որ հասկացուցիչ լինէին մեզ բացմութեան համար,

ուստի այդ փորձերի մանրամասնութիւնները մի ժողովրդական դպրոցի մէջ նկարագրելը ձանձրալի և անօգուտ կլինէր։

Այն ինչ, եթէ դառնանք ժողովրդի դաւհսը դիտողութիւններին և գիտնականների պատմած նասատս դէպքերին, մենք աւելի դիւրըմբռնելի և աւելի համոզեցուցիչ ցուցումներ կգտնենք մեր հարցի պարզաբանութեան համար։

Ուրախութեան եւ տրտմութեան կրճերի ազդեցութիւնը սրտի եւ երակների վրայ.—Մեր ժողովրդի մէջ սովորական ընդունուած պարձանձներ են «ուրախութիւնից սիրտս թռչում».—«Սրտի շարժումը նմանում է բռնած թռչնիկի շարժումներին».—«Վախից սիրտս թռաւ», այսինքն սրտի յանկարծակի մի մեծ կարկը և յետոյ սովորականից աւելի կանգ առնելը։ Հրաժանքննելից սիրտս սկսեց դողդողալ։ Իսկ ահաբեկութիւնը ժողովուրդը այսպէս էլ արտայայտում՝ «սիրտս արբում է, ճմլւում է», կամ աւելի չափազանց ապրեցութիւնից «սիրտս պնում է», այսինքն փոքր առ փոքր ուղում է կանգնել, դադարել գործելուց, որ ուշաթափութեան կամ մահուան է առնում։

Ուրախութիւնից գժւել. մահուան բօթը զգոյշ հաղորդել.—Ի՞նչ է նշանակում հետևեալ ժողովրդական խօսքը մէկի կամ մեսի ուրախութեան

աստիճանը ցույց տալու համար. «Ուրախասիրտից լիշ էր մնում թէ գժւիս: Մէկէկ դա ապացոյց չէ այն բանին՝ թէ ժողովրդին վատից յայտնի են եղած դէպքերը, որ չափազանց ուրախասիրտներից մարդ խելագարւել է: Մի այլ օրինակ.—Հեռաւոր տեղից, երկար տարիների «զարհուրելի. նից» վերագառնում է յանկարծ իր հայրենի քաղաքը գերդաստանի սիրած որդին: Սրան տեսնող ծանօթները վազում են առաջ, որ ծնողներին նախապատրաստեն այդ անսպասելի ուրախասիրտիանը. մեծ զգուշութեամբ հաղորդում են որդու վերադարձի աւետիսը: Ինչո՞ւ համար են այդ զգուշութիւնները և նախապատրաստումը: Որովհետև մի բարմափորձ ժողովուրդ, ինչպէս մեր հայն է, չէր կարող չփոխանակ լսած չը լինել յանկարծակի մտնեան դէպքերի մասին՝ անսպասելի և չափազանց մեծ ուրախութեան ազդեցութիւնից: Նոյնը կարող է պատահել և չափազանց մեծ ուրախութեան ազդեցութիւնից: Այս է պատճառը, որ ամենուրէք մի անսպասելի մտնեան բօթը կամ ծանր լուրը որոշ ժամանակ հանդուցեալի մօտիկներից, ծնողներից և այլն թագցնւում է, որպէսզի սակաւ առ սակաւ նախապատրաստեն ծանր հարւածին դիմանալու, սարսափելի լուրը լսելու...

Երբ ճիշտ դիտութիւնը այսպիսի ժողովրդական փորձերը և դիտողութիւնները բոլորովին անտես չի առնիլ, մանաւանդ որ սրանք շատ ընդհանրացած են բոլոր ազգերի մէջ գարերի ընթացքում, այն ժամանակ հոգեբանական գիտութիւնը մարդուս հոգեճանաչութեան մէջ ունի բազմակողմանի կլինի և ունկի հաւատամք քայլեր կանէ գործնական կեանքի մէջ:

Գ Լ Ո Ւ Խ Գ.

ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ ԿՐԳԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ.

Անսպասելի ժառանգութիւնից ցնծալ

Ցիշենք անգլիացի հոգեբոյժ Կրիչսոն Բրաունի հետաքրքրական դիտողութիւնը:

Մի երիտասարդ մի օր անսպասելի հետաքրքիր առացաւ, որ իր հանդուցեալ ազգականից նրան շատ մեծ և հարուստ ժառանգութիւն է մնում: Երիտասարդը յանկարծակի ուրախութեան ազդեցութեան տակ նախ գունաթափւեց, յետոյ սակաւ առ սակաւ երեսը սկսեց կարմրել, գլուխը սառ քանալ... չափազանց հրճւանքի շարժումներ և ապա՝ անհանգստութիւն ու անվերջ հառաչանք: Որպէսզի հանդարտի, բարեկամի հետ գուրս եկաւ գրօսնելու, բայց աչքերը նրան լաւ չէրն պանում: Մէկ խօսքով ինչ երկարացնեմ, երիտա-

սարդը ներկայացնում էր սոսկալի հարբածի— գինովցածի լիակատար պատկեր, մինչդեռ յայտնի էր, որ նա ոգելից խմիչք սովորաբար չէր գործածում և այն օրը ոչինչ բերանը չէր առել: Սառը ջրով երիտասարդի գլուխը լուանալը նրան հանգստացրեց, և միւս օրը ինչպէս արբեցողութիւնից յետոյ, զգում էր նա յոգնածութիւն, գլխացաւ, սաստիկ խռովմունք: Մի երկու օրից յետոյ բժշկի օգնութեամբ երիտասարդը հաւիւ առողջացաւ:

Լէսինգի Բեռլինում. Հոգերոյժների գրւածքներում յիշած է մի նման դէպք, աւելի ծանր հետևանքներով: Հռչակաւոր գերմանացի մատենագիր Լէսինգի («Նաթան իմաստուն»-ի հեղինակը) քեռորդին, որ նրա միակ ժառանգն էր, դառնալով իր նոր հանգուցեալ քեռու բարձր տուրքերին անսպառելի 9000 գերմ. թալեր գրամ, չափազանց ուրախութիւնից ինքն ևս խոհոյն վախճանեցաւ:

Անգլիական երկաթուղու վրայ մայր եւ դուստր.— Անգլիայի երկաթուղու կայարանում տեսի մէկ քանի դէպք է պատահել 1867 թ., որ այն ժամանակուայ լրագրներում ևս տարածման նկարագրւած է: Մի մայր սպասում է աղջկան հետուտեղից, երբ լուր տարածւեց թէ գնացքները իրար են դիպել ճանապարհին և մէջի ժողովրդի

մեծ մասը վնասուել է: Երևակայեցէք թէ մայրը ինչպիսի հոգեկան յուզմունքներով սպասում էր գնացքի գալուն: Եւ երբ գնացքը հասնելուց, իր աղջկան աղջ և առողջ գտաւ, խեղճը հազիւ կարողացաւ աղջկայ հետ զրկախառնուել.. ու ուրախութիւնից հոգին աւանդեց:

Ընդհանուր բացատրութիւն յիշած երևոյթների: Վերը բերած առաջին օրինակից մանր պարզ տեսնում ենք, որ ժողովրդական բանաստեղծութիւնների մէջ սովորաբար գործածւած ոճով՝ «ես ուրախութիւնից գինովցած եմ», փոխադարձ սիրոյ ուրախութեան համար՝ «սիրուց արբած եմ»— գործւածները ոչ միայն բանաստեղծական փոխաբերութիւններ են, այլ նաև հիմնւած են ճիշտ դիտողութեան վրայ: Դիտութիւնը պէտք է այդ դիտողութիւնների հիմունքով ընդունէ իրաւի «հոգեկան արբեցութեան» գոյութիւնը, զարմանալի նմանութիւն տեսնելով գինովցածի և ուրախութիւնից արբածի հետևդակաև երևոյթների մէջ: Եւ յիրաւի, մենք նկատում ենք հէնց մեր այս առաջին օրինակում, որ մեծ ուրախութիւնը երիտասարդի երեսի և դիմի երակների վրայ ուժեղ ազդեցութիւն ցոյց տուեց: Այդ երակները նախ սեղմեցան (երիտասարդը գունաթափւեց), ապա՝ ընդլայնուցան (աչքեան հասում դէպի գլուխը, գլխի ուռչանալը):

Եթէ այդ ազդեցութիւնն ևս առաւել է, ուղեկի հրակները երկար ժամանակ ընդլայնացած պրսութեան մէջ չափազանց արիւնաւոր են դառնում, բանը հասնում է նախ՝ մաքի թեթև ցնորումի (արբածի պրսութեան) և ապա խելագարութեան։ Եթէ ուրախութեան կրքի ազդեցութիւնը չափազանց է, յանկարծակի է, մինչև իսկ սիրտը թուլացած և արիւնախտպ, կանգ է առնում — մահ։ Ուղեկի այս ազդեցութիւնները հրակների վրայ պիտութեան մէջ կոչւում են երակաառաջական երեւոյթներ։

Գ Լ Ո Ւ Խ Ը.

ԵՐԱԿԱՇԱՐԺԱԿԱՆ ԵՐԵՒՈՑԹՆԵՐ

Զափազանց տիրութեան եւ հոգեկան կսկիծի ազդեցութիւնը.— Այս կրքերի ազդեցութիւնը շատ ազդու կերպով ցոյց տալու համար մեր հայ ժողովուրդը գործ է ածում հետեւեալ գործածը՝ «արիւն արցունք թափեց»... Ծանր թախիծի տակ մեծ աշխատանք կատարողի համար ասում են՝ «արիւն քրտինքի մէջ մաւս»։ Դիտէք որ այդ խօսքերը հիմնած պիտի լինէին դանազան ժամանակների ճիշտ ժողովրդական պիտութիւնների վրայ, քանի որ իրաւի, արիւնախառն արտասուք, արիւնախառն քրտինք պիտած և նկատած են ականատես բժիշկները (Պարբօ, Քրտանկէ և այլն) և ինչ զարմանք, երբ մտածենք, թէ՝ իրաւի չափազանց հոգեկան կսկծից արտասրաթոր լոքները իրանց սովորական գործունէութիւնը (արցունք թափիլը) շատ և շատ աւելացնելով, հարկաւ նրանց հրակները այնքան տառատ պիտի լինեն արիւնով, որ վերջը արտասուքի փոխարէն արիւն արտաթորի։ Նոյնը կարող է լինել մեր մորթու տակ տարածած Ֆրենալորձերի հետ, ինչպէս և ուրիշ հիւթեր արտաթորող գործարանների հետ, եթէ նրանց չափազանց աշխատեցնենք։ Ի՞նչ զարմանք, ասում եմ, երբ մենք մտաբերենք օրինակ՝ ամօթխածութեան ազդեցութիւնն արեան հրակների վրայ, ամօթից մէկի երեսը կարմրում է, մեւսի ամբողջ կուրծքը կամ առաւել նորքի մասերը... Դօկտ. Սայմօրը յիշում է իր գրւածքում մի յղի կնի, որի բոլոր մարմնի վրայ մեծ-մեծ արեան բծեր երեսային սաստիկ յուզմունքից և հոգեկան կսկծից։

Սթիգմատիզմ.— Սաստիկ զգացումների այս տեսակ երակաշարժական ազդեցութիւնով մեկն կարելի է մեկնել այն սքանչելի երեւոյթը, որ Ստիգմատիզմ է կոչւում և որին կաթոլիկ կղերը մի ժամանակ կերպնական նշանակութիւն էր տալիս, չարժելով հաւատացեալների ափշումը և կրօնական չերմեռանդութիւնը։

Մի կին Միլանին քաղաքի մօտակայքում բուռն կրօնական զգացման տակ — ամեն ուրբաթ օր, որոշակի ժամերում, մատրիկով թէ ինչպէս Յիսուս պիտի տանջուէր այն բոլոր ցաւերը, որ Նրա ձեռքերը բռնում էին խաչին և գեղարդով ծակում էին Նրա կողքը — հրեաներից այդ ցաւերը ինքն էլ զգում, և այդ կնոջ ձեռքերից և կողքից փոքր առ փոքր սկսում էր արիւն ծորել կաթիլ կաթիլ։

Գիլյօտինի դատապարտած կինը. — Փրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակից մի դէպք են պատմում, երբ մի կինամարտի յայտնեցին, թէ գիլյօտինի (գլխատումի) պիտի ենթարկուի։ Նրա սկսած լուսինը խակոյս գադարեց և միևնոյն ժամանակ բոլոր մարմինը եպիպատական սեամոքքի կերպարանք առաց։ Այս միևնոյն կարգին են պատկանում այն դէպքերը, երբ անակնկալի չափազանց վշտից շատ կարճ ժամանակում մարդուս մազերը սպիտակել են, ժողովուրդն էլ այդպիսի դէպքում ասում է՝ «էս գարդից ձամ մազը չի ճերմակի»։ Գօկտ. Ուիլգօնը պատմում է մի այդպիսի դէպք, որ սպիտակեցրել յանկարծ մի խիստ վշտացած պարոնի գլխի և երեսի մազերի միմիայն հէս մասերը։

Դատախազի դիտողութիւնից. — Ընդհանրում ինձ մօտ եկած էր հալածարքեի դիտաւոր կին իր պանապան հիւանդական երևոյթների մասին խորհուրդ հարցնելու։ Այդ կնոջ ձեռքերի եղունգները մասամբ բոլորովին սպիտակ էին, մասամբ դեղնագոյն։ Առաջին անգամն էի տեսնում այդպիսի երևոյթ, ուստի յանկարծակի եմանալ՝ ի ծնէ էր այդ երևոյթը, թէ ստացական։ Ինչպէս ինքը հիւանդը, նոյնպէս և նրա հետ եկած պառաւը միաբերան հաստատեցին, որ այդ պատահից մի մեծ դժբախտութիւնից յետոյ, երբ կնոջ ամուսինը մեռաւ և միւս օրը Նրա երկու երեխաները իրար յետևից վախճանեցին .. սկզբում բոլոր եղունգները սպիտակեցին ու չորացան, յետոյ կամաց-կամաց ախորժի դեղնել։

Բժշկապետ Ա.. Ռաբայեան

ՄԱՆԿԱՍԱՀԱՆ ԱՄԻՐ

Ուիլիէլ Բուխանան

Ամեն մի մարդկային հզոր մէջ թագնուած կան գաղտնի ոյժեր, որոնք սպասում են միայն հրամանի, որ գործեն և բացեն իրենց ամբողջ յատկութեամբ։ Հայ աշ մի բան կարելութեան սահմանում, որին անկարելի լինի հասնել կամքի ոյժի, առողջ հոգուն և ամուր տատանի օգնութեամբ։ Կամքի կենդրոնացումը հոգեկան ե-

անդի հետ միասին կը յաղթահարէ բոլոր արգելքները և անպատճառ կը հասնէ իր որոշած նպատակին։

Մարդկային յաջողութեան աստիճանը ուղիղ յարաբերական է կանխատեսութեան սահմանին և կամքի ուժին. կամքը կառավարում է տիեզերքին և դա անում է նա այնչափ ուժով, որչափ նա գիտակցական է։

Որքան յանախ է պատահում, որ մեր նախագծերն ու մտադրութիւնները խորտակւում են պիպչելով անսպասելի արգելքների, որոնք չկատում են մեր ոյժերը և ազդում են մեզ վրայ այն ձևով, որ զգալով մեր անզօրութիւնը, մենք միայն այն ենք անում, որ թուլացնում ենք մեր ձեռքերը։ Իսկ միևնոյն ժամանակ բաւական էր հոգու հառնդ, գիտակցական ուժով կամք — և բոլոր արգելքները կվերանային։

Ոչ մի ձևով մենք աշխարհում ոչ մի բանից չպէտք է վախենանք, երկիւղը մեզ համար բոլորովին անծանօթ զգացմունք պէտք է լինի, և այդպիսով մեր հոգին պէտք է տոգորւած լինի ճշմարտութեամբ և բարութեամբ։

Եւ այն ժամանակ ահագին թնդիւնով ու ճայթումով կփշրուին այրքներն այն ամենի, ինչ որ վատ է, չարակամ, և այդ աղտոտից կը լուի արձագանք — «ամեն ինչ լաւ է»։

Ոչ էլ դու ձեռնարկելու լինես, սկզբից մտածիր, կշռիր չիշիր, որ վճռականութիւնը և հաստատ մտադրութիւնը սիրոյ, ուժի և խոհեմութեան հետ միասին կարող են յաղթել ամեն բանի գվերանան ժառանգած արատները, ատելութեան այդ չղթաները և դու կզգաս քո մէջ նոր ոյժեր, որոնք երբէք չեն դադարելի քեզ։

Քո կեանքիդ բախտը գտնւում է քո սեփական ձեռքերում. փեղանից է կախւած նրան գլուխդ դարձնել կամ թէ նրանից տանդիմել վերկոյկ տիպար, մի հրաշալի գեղանի արատրութիւն։

ՅՈՒՅՍԻ ՓԻԼԻՍՈՓՈՒԹԻՒՆԸ

Կա՞յ արդեօք տանման, վերջ մարդկային ոգու հզօր ուժին։ Կարելի՞ է տոհմատարակ մտածել, որ ոյժը երբևիցէ ասէր. «Միևնոյն այսեղ, եւ այլեւս ոչ մի բայլ»։

Մարդկային ոգին հաշւի չի առնում ոչ մի տարածութիւն, նա կանգ չէ առնում ոչ մի գլուխարութեան առաջ։ Մարդկային մտքերը յաղթահարում են ամեն արգելքները, նրանք ոչ մի գիմադրութեան առաջ կանգ չեն առնում, նրանք ծիծաղում են «անկարելի է» խօսքի վրայ։

Ցիմար բան կլինէր ննջասրիլ, որ մարդկային սգին, որին այնքան շատ բան է տուած բարձրից, կարող է ունենալ սրէ սահման։

Ամեն մի պատասխանութիւն, որի վրայ մենք հիմնում ենք մեր յոյսերը, — դա մի սոսկման է հաւատի սանդուխքի վրայ. ամեն մի յոյս ներկայացնում է իրենից մարգարէութիւն նրա իրականացման համար։

Յոյսը, դա գոյութեան անկասկածելի և ամենաճշտ նշանն է։

Մարդու յոյսերն այս աշխարհում ուղղուած են դեպի յաւիտենական երիտասարդութիւն և այդ մշտական երիտասարդութիւնը կարող է իրականանալ։

Յոյսն ու հաւատը ծնում են համարձակութիւն. տատանւում և ընկնում են միայն կասկածողները։

Աշխարհում միակ գործող ոյժը սէրը է համարւում մարդկային մարերի ոյժը։

Հելէն Վ. իլմաճս

«Ծաղկեպտոն»

ՊՐՕՖԵՍՍՕՐ ՄԵՉՆԻԿՈՎ

Համամարդկային հռչակ վայելող գիտնական Իլիա Իլիչ Մեչնիկովը ծնուել է 1845 թ. Խարկովի նահանգում։

1864 թուականին վերջացրել է Խարկովի համալսարանի բնագիտական ֆակուլտետը. 1870 — 83 թուականներին նա եղել է պրոֆեսսոր Օդեսայի համալսարանում. վերջին ժամանակներս նա աշխատում է Պաստէօրեան հիմնարկութեան մէջ (Институтъ) և Պարիզում հռչակաւոր գիտնական Բուի օգնականն է։ Շատ երկար կլինի, եթէ մենք հաշուենք Մեչնիկովի արած բազմաթիւ հետազօտութիւնները թէ կենդանաբանական, թէ հիւանդաբանական և թէ ընդհանուր բնափիլիսոփայական, որոնք յայտնի են լուսաւորեալ աշխարհին։ Բաւականանանք միայն մատնանշել նրա հռչակաւոր բջջակերական տեսութեան վրայ (фагоцитарная теорія), որ ընդունւած է գիտական աշ-

խարհում։ Այդ տեսութեան էութիւնը կայանում է նրանում, որ մարդու կազմուածքում գտնուող սպիտակ բջիջները յիշեալ կազմուածքի հզօրագոյն պաշտպաններ են ներկայանում, որք մեր մարմնի մէջ մտնում են ախտարեր մանրէներ, իսկոյն սպիտակ գնդակները յարձակւում են նրանց վրայ և կլանում, և գրա համար նրանք կոչւում են բջիջակերներ։

Մեչնիկովի միւս նորագոյն տեսութիւնը վերաբերում է ծերութեան, որը ըստ յիշեալ գիտնականի բացատրւում է նրանով, որ մեր կազմուածքը ենթարկւում է յարատև ստամոքսա-աղիքային ինքնաթունաւորման։ Մեր կազմուածքի մէջ գտնւում են փորրիկ թափառիկ և ագահ բջիջներ, որոնց գործունէութիւնը կայանում է նրա մէջ, որ մարքին կազմուածքը կլանելով մնացորդներ, մանրէներ, մաշած և անպէտք ոստայններ, որը իր տեղը չէ և չի գտնւում իր պաշտօնի բարձրութեան վրայ մարսելով դրանց։ Այդ բջիջները արեան սպիտակ գնդակներն են, մանաւանդ և միացուցիչ ոստայնի գնդակները։ Եւ ծերութիւնը բացատրւում է նրանով, որ այդ բջիջները սկսում են յարձակուել՝ գտնուող պատճառներից թուլացած՝ աղիքի կոչուող բջիջների վրայ, օրինակ՝ ուղեղի, լեարդի, փայծաղի, երիկամունքների և այլն։ Իսկ թուլացման գլխաւոր պատ-

ճառներն են սնիֆլիսը, ոգեմոլութիւնը և այն թոյնը, որը գոյանում է գլխաւորապէս հատ ստակներում, և այդ հիման վրայ նա այդ աղիքները համարում է՝ ոչ թէ պէտքական, այլ գնասակաս, արժանի անգամահատման, ինչպէս սրտի մի քանի խիրուրգներ Անգլիայում։

Եւ որպէսզի աղիքներում չգոյանան վերոյիշեալ թոյները՝ չնորհի գլխաւորապէս նեխիչ մանրէների — Սապրօֆիտ կոչուող, յիշեալ գիտնականը առաջարկում է մածունը և նրա մէջ պարունակուող կաթնամանրէները (лактобациллит Мечникова), որոնք խափանում են նեխուման և ընդ ամէն և արտազրութիւն օգտակար թոյներ։

ՄԱՆՐԷՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՒ ԲՈՒԺԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Գիտնական Մեչնիկովը իր մի աշխատութեան մէջ «ծերութեան մասին» ասում է, որ մածունը ամենակարևոր աննկուղելից մէկն է իր բարեբար ազդեցութեամբ մեր կազմուածքի վրայ։ Բժիշկ Մ. Լէօնը մի շատ հետաքրքիր յօդուած է տպել մածնի մասին, որը յոյժ կարևոր անդիկութիւն է տալիս։ Ես այժմ ուզի պատկանօրէն և մանրամասնօրէն պիտի նկարագրեմ այդ անընդհուկնի թէ բնախօսական և թէ բուժական նշա-

նակութիւնը, օգտւելով թէ վերոյիշեալ աշխատութիւնից և թէ միւս աղբիւրներից։

Մածնի մասին առհասարակ «հօդուրդ», այդ մածնի տեսակից է։ Ինչպէս յայտնի է՝ մածունը դեռ հին ժամանակներից շատ ազգերի մօտ համարւում էր արժէքաւոր սողջապահական և բուժական միջոց։

Կովկասի բնակիչները գործ են ածում «կէֆիր» և մածուն, իսկ Թուրաստանի պաշտային նահանգներում «կումիս», միւս մասերում «պրօստօկուաշա», եգիպտացիք «բաիր» և վերջապէս աստիկներն ու բուլղարները «հօդուրդ»։

Պրօֆ. Մեչնիկովը գրում է, որ այն ազգերը, որոնք գործ են ածում մածուն դանազան ձևի, աւելի երկարակեաց են, չնայած նրանց անբարւոք սողջական պայմաններին։ Մարդ ծերանում է ոչ թէ այն պատճառով, որ նրա մարմնի մաշւում է, այլ որովհետև նա կանխաժամ թունաւորւում է արտազրութեամբ նեխման, որը յառաջանում է ինքնաթունաւորման երևոյթներ։ Այդ ինքնաթունաւորումը կարճացնում է կեանքը։

Մածնի մանրէները մեր աղիքների մէջ ծնունդ են կաթնաթթւային խմորումը, որը քայքայում է նեխային գազերի գոյացումն։ Ըստ Մեչնիկովի, մածունը խոփանելով նեխումը աղիքներում՝ հանդիսանում է գլխաւոր գործօն՝ ոչակցող սողջութեան և երկարակեացութեան խաչնարած ապգերին, որոնք քան մեծ մասին՝ մածուն են գործածում։ Բայց պէտք է ասել, որ ամեն տեսակի մածուն միևնոյն արժէքը չունի։ Մեր սովորական մածունը, որը ստացւում է ինքնաբերաբար խմորմամբ, չի կարող համարել անպատճառ՝ առանց պակասութեան սողջապահական տեսակէտից։ Առաջինը՝ նա պարունակում է իր մէջ երբեմն հիւանդարեր սաղմեր. երկրորդ՝ յանկալի կաթնաթթւային խմորման հետ կարող են տեղի ունենալ ոչ յանկալի կողմնակի խմորումներ և գոյանալ մանրէակային—քակտերիական—թոյներ, տւբերկիլիս մանրէի թոյն, իւղաթթուներ և ալկօհօլ։ Երրորդ՝ նա ներգործում է բացառապէս քիմիապես, չնորհիւ նրա մէջ գտնւող կաթնաթթւատի, ինչպէս մեւս տեսակի մածնի՝ օրինակ կէֆիր, կումիս, որոնք բացի դրանից ունին և վնասակար կողմեր՝ մեծ քանակութեան ալկօհօլի։ Այդ հիման վրայ գանազան հետազօտիչներ խորհուրդ են տալիս կաթը նախ տապանելել եռմամբ և յետոյ պատւաստելով մաքուր կաթնաթթւատի մանրէներ՝ յառաջացնել թեթև խմորումը։

— Մածնի պատրաստւելը եւ տարածւելը.— Մածունը, որի հայրենիքը հիւսիսային Բալկանեան ու Տանկատանեան է, պատրաստւում է կովի

և ոչխարի եփ ուած կաթից։ Սառածից եփ ստա-
ցուց յետոյ կաթը ածում են մեծ ամանի մէջ, ո-
րը փաթաթում են բրդի շորի մէջ. երբ որ տա-
քութիւնը իջնում է մօտաւորապէս 50° C.-ի, մի
քանի հոգի գդալ այդ կաթից արդրում են մած-
նի լմնդանիւթի հետ, որը կոչւում է «մայհա» և
աւելացնում են մնացած կաթին այն հաշուով—2
խ. ս. մէկ լիտրի։ Մայհան պատրաստւում է
ոչխարի ստամոքսից—նա մի տեսակ լմնդանիւթ
է։ Մածունը 12 ժամից յետոյ պատրաստ է լի-
նում։ Վերջինը Բուլղարիայում, Յու-
նաստանում, Փոքր Ասիայում, Բուլղարիայում,
Սերբիայում և այլն մեծ քանակութեամբ է պա-
տածում իբրև գերազանց սննդարար և բուժա-
րար միջոց։ Մարմարեայ ծովափում, կան մի քա-
նի մածունի գործարաններ, որոնք մատակարա-
րում են Պոլիս։ Մածունը շատ գործածելի ճաշատ
է և ուր որ կայ այդ վերջինը, այնտեղ ապա-
րնակութիւնը աւելի առողջ է և երկարակեաց.
օրինակ՝ Բուլղարիայում 4 միլիոն աղգաբնակու-
թիւնից 3800 ապրել են 100 տարուց աւելի, մինչ
դեռ Դերմանիայում 61 միլիոն ժողովրդից միայն
78 հոգի։

Մածունը կարելի է գործածել թէ ինքնըս-
ինքեան և թէ շաքարի, բրնձի, պտուղի հիւթերի
հետ և այլն։ Բուլղարները և տաճիկները օրա-

կան 2 լիտր մածուն են գործածում։

Մածնի գործողութիւնը աղիքների վերայ (միկրոբների մասին) վերայ Պերակերի հետ մեր աղիքները մանում են անչափ մանրէներ, որով-հետև կերակուրը ըստ մեծի մասին հնացեալ չի լինում։ Հաշուած է, որ մանրէների քա-նակը միջին թուով կդկղանքի չոր մնացորդի 1—3 մասն է կազմում։ Ամեն մարդ արտաքսում է կղկղանքի հետ օրական 8 – 18 գրամ մանրէներ, և եթէ վերջիններս հաստ աղիքների մէջ ամենաար-տածածը կատանան օրական 128 եկեղեցին ման-րէներ։ Եթէ մանրէների բազմացումը չը հանդի-պի արգելքի, մանրէական պրօցեսը կարող է հաս-նել այնպիսի ուժգնութեան, որ կը յարուցանի հիւանդագին փոփոխութեան ձգտարիս է, վնա-սարար մանրէների հետ կան նաև օգտակարները կազմածքի համար։ Խնդիրը նրանում է, որ պի-տի աշխատել կարելի եղածին չափ պակասցնել վնասարար մանրէների քանակը աղիքներում, դլխաւորապէս նեխիչ մանրէների, նախ և առաջ հաստ աղիքների մանրէների։ Մի շարք փորձերը ցոյց են տուել, որ երբ գոյն են ածում մածունը, աղիքների մէջ մանում են կաթնաթթուտային մանրէներ, որոնք անհետացնում են այդ մանրէն։

Մի ամբողջ շարք կենդանաբանական հետա-զօտութիւններ ապացուցում են, որ մածունը

հեռացնում է ապրանքի մնասարիր մանրէների խումբը և ամրացնում բույլարական մանրէն նրա մէջ և դրանով ընդհմադրում է նեխային թոյ նների զոյացման։

Մածնի գործածութիւնը պանագան հիւանդութիւնների դէմ։ Նախ և առաջ մածունը գործածրելի է սաամրքսի և ապրանների հիւանդութեան ժամանակ, նրանց մկանունքների թուլութեան և անբաւարար հիւթաթորաթրութեան, թերի մարսողութեան, սաամրքսի վէրքի ժամանակ, իբրև մեղմացնող ցաւերի և գադարեցնող փսխումի։ Մի քանի բժիշկներ մածունը սաա Չարկում են տիֆի (ժանտաւենդ) դէմ Ուելի ևս կարևոր է մածնի ազդեցութիւնը արևիտածի (dysenterie) դէմ։ Մածունը շատ լաւ է ներգործում ջրդողութեան, որտի, երիկամունքների հիւանդութիւնների դէպքերում։ Մածունը նոյնպէս գործածրելի է սակաւարիւնութեան դէպքերում։ Բժ. Դերմանը 1908 թ. խոլերի ժամանակ փորձել է մածունը այդ հիւանդութեան դէմ և այսպէս ծանրը հիւանդներին տուել է մածունը խառնած եփած ջրի հետ։ Փորձը ցոյց է տուել, որ մածունը պակասեցնում է լուծմունքը, փսխումը և անհետացնում է հիւանդի կղկղանքից խոլերայի մանրէները։

Ընդունենք այժմ Մեչնիկովի հետաքրքիր տեսութեան՝ «Ծերութեան մասին»։

Ծերութիւնը բացատրում է յարատև սաամոքսա-աղիքային ինքնաթունաւորութեամբ։ Մեր կազմուածքի մէջ գտնում են փոքրիկ թափառող և ադամ բջիջներ, որոնց գործունէութիւնն է մաքրել կազմուածքը կլանելով մնացորդները, մանրէները, մաշուած և անպէտքացած հիւսուածները, մարսելով դրանց բոլորին։ Այդ բջիջները՝ մասամբ արեան սպիտակ գնդակներ են՝ մասամբ միացուցիչ հիւսուածի գնդակներ։ Ծերութիւնը՝ թոյ յիշեալ գիտականի բացատրութեամբ, նրանով, որ այդ բջիջները սկսում են յարձակել պանդան պատճառներից խոլացած՝ տղու կոչուող բջիջների վրայ։

Ամենագլխաւոր պատճառները այդ նեպման տիֆիլիսն է (ֆրանկախա), ալկոհոլութիւնը և այն թոյները, որը գոյանում է հասա տղիքների մէջ, շնորհիւ տղիքներում պանուած բազմաթիւ նեխուչ մանրէների։ Մեր երիկամունքները արտազատում են ի միջի այլոց կարբոլեան թթուու, որի կէսը գոյանում է հասա տղիքներում։ Միանգամայն ապացուցած է, որ կարբոլեան թթուու-

տը արտադրում են հատ ապիքներում հոած միկրոբները։ Հոչակաւոր գիտնականը այնքան հոգացած է իր աւնութեան մէջ, որ խորհուրդ է տալիս հնարաւորին հատ ապիքը գործադրելուն միջոցով, համարելով նրա դոյութիւնը վնասակար։

Վերոյիշեալ հետազօտութիւնները լրացուցիչ են տալիս աւելի եւս համոզելու, թէ որ տատիճան օգտաւէտ է ամենուրէք տարածուած մանուկներ, թէ իրբ վերամարմնացնող և թէ իրբև բուժիչ միջոց։

Ծանօթանալով Փրանկֆուրտցոց մի թաղապետի իղձն էր, որ ամեն մի Փրանկֆուրտցի իր ճաշի համար կրնար միջոց ունենար մի հատ աւնանալ, իսկ մենք ցանկանք, որ ամեն մի գիւղացի իր տան դռանը մի կով ունենայ և տեղեկ վրայ էլ մաձուն։

Բժ. Ե. Ա.դամեանեան

ՊՐՕՖԵՍՍՕՐ ԷՐԼԻԽ

Պրօֆեսսօր Էրլիխի գիւտը ախտիսի դէմ։

Բժշկական աշխարհի ուշադրութիւնը մեծ չափ անգամ է պատահել, որ մի նոր գիւտ այրօֆ. Էրլիխի տրած պիտի չափ հետաքրքրը քաշեան առաջ կայ դարձած լինի։ Անթիւ մարդկանց «606» դեղը ծանօթանալու արդիւնքը սանելու համար պէտք Փրանկֆուրտ ճանապարհին մեզ յիշեցնում է տրինար առաջ մարդկանց Բերլին կատարած արշաւանքը Գոխի նոր հնարած դեղը՝ թոքախտ ամենակարող չիճաւի՝ տիւպերկիւլի մէջոցով պատմանելու համար։

Աշխարհի ամեն կողմից բժիշկները ուղղեցին դէպի Փրանկֆուրտ «606»-ի գործածութեան ընդհանրին ծանօթանալու համար։ Հեռաւոր վայրերից չատ հիւանդներ, անոնց ման հատատով

ու բեկբուլիամբ լցած վկպի էրլիխի պարմանատունը ուխտադնացուլիան էին գալում հիւանդութեամբ իրենց ամուսնալի կաւերից բաժանուելու և հետևյալ օրն իսկ տուն վերադառնալու յուսով։ Պրոֆեսոր Էրլիխի բնակարանը հիւանդների լամրով պաշարուած էր, որոնք անհամբեր սպասում էին իրենց ընդունելութեան, բայց արքան հիասթափուեցին, երբ տեսին պատի վրայ գրուած հետևեալ խօսքերը տեսան. «606» ի քիչ լինելու պատճառով առայժմ չենք կարող ընդունել»։

Աշխարհի ամեն կողմից եկած պատգամաւորութիւնները և նամակները «606» էին պահանջում, բայց նոյն իսկ Էրլիխը չէր համարձակւում այն ամենի ձեռքը տալու, որովհետև դեռ շատ փորձեր կային կատարելիք ոչ միայն նրա պատճառութեան և դեղաչափի նկատմամբ, այլ և դեղի հիւանդին ներարկելու դոզոլոգիչ կողմի նկատմամբ։

Յիշենք այժմ թէ ինչ է այս «606» ասուածը, որ յաճախ ներարկուելից յետոյ մազկան ազդեցութեամբ անմիջապէս բժշկում է այնպիսի սոսկալի ու պաղտնի վէրքերով պատած հիւանդների, որոնց անունը, նոյն իսկ նկարագրութիւնը ահ ու սարսափ պիտի ազդէ ամենին։ Առանց ընդերկայնելու համբերութիւնը չարաչար գործածելու անմիջապէս ասենք, որ այդ դեղը մեզ ծանօթ մի փոշի է՝ սալիցիլի (սիչանօթի կամ թէ ասպիրին) բաղադրութեամբ որ մեր պատաւ ատաները մկներին սպանելու համար են գործածում։ Բայց այս դեղը սալիցիլի բաղադրութիւն լինելը մեզ այնքան չի զարմացնում, որքան նրա ներգործումի եղանակը, որի մասին մտածողը կարող է միայն ապշել։ Առաջին մի այնպիսի դեղ է, որ մենք բժիշկներս ամեն օր գործածում ենք, չատ անգամ սիֆիլիս ունեցող հիւանդներին էլ ենք տալիս։ Սակայն նրա «606» անուանուած ծանօթ եղած բաղադրութիւնը մի սպանիչ հանգամանքի չնայելու չէ, որ ապրում է սոյն հիւանդութեան վրայ, այլ նրա տարբաղադրութեամբ մարդու արեան մէջ գտնուող միկրոբների սպանուելու առաջ եկած հակամարմինների չնորհիւ է, որ մնացած միկրոբների մեծագոյն մասի փճանալուն պատճառ կլինի։ Ահա այս է խնդրի ամենադեղեցիկ կողմը, որով մինչև հիմա հետազոտողների փափագն էր գտնել այնպիսի մի դեղ, որ կարելի լինի մարդկային արեան մէջ գտնուած մակաբոյծները սպանել, առանց մարմնին հիւանդութիւն կամ մահ պատճառելու։

Ի՞նչպէս է լինում այս ամենը։ Մի իսկական պատերազմ է, որ տեղի է ունենում մարդկային արիւնը ապրուստ վերածելով։ Սիֆիլիսի

միկրոբները անպատասխան կերպով «606»-ի հիվանդների վրայ են յարձակւում։ Եւ ահա այդ ժամանակ է, որ տեղ է ունենում հիվանդների աշխարհի մեծ ճակատամարտերից մէկը, որի մասնակիցները և զոհերը շատ փոքր են մնում։ Սկզբում սիֆիլիսի միկրոբներն են յարձակում գործում «606» ի հիվանդների վրայ, որոնք թնդանօթների նման պայթում են՝ դուրս թափելով իրենց անհամար աճումները սրանք ուժասպառ են նման դուրս միայն միկրոբների կործանելին, որոնց նախանձելի համար մահացուցը նախապատրաստութիւն ունենալով միանում են նրա հետ և միասին մի նոր բազմատեսակ՝ հակամարմիններ կամ հակաթոյներ են կազմում, և որոնք են, որ իրենց կարգին պատճառ են լինում մնացած միկրոբների փճանալուն։ Այս ամենը նիւթերի ամենազարմանալի տարբերի պայքարն է, որ քիմիական փոփոխութեան չնորհիւ տեղի է ունենում։

Ամենալաւ արդիւնքները միայն այն ժամանակ կարելի է ձեռք բերել, երբ հիւանդութիւնը իր ծայրագոյն աստիճանի մէջ է։ Այս պարագային՝ հակառակ տարբեր պարագաների մէջ մեղ ծանօթ եղող օրէնքների, դեռի համեմատաբար մի փոքրիկ քանակութիւն բաւական է վերջին հաղ քիմիական փոփոխութիւնները առաջ բերելու, այս այն պատճառով է. թէ «606»-ի հիվանդների վրայ յարձակուղ միկրոբները որքան բազմաթիւ և կորաւոր լինեն, հակամարմիններն էլ այնքան շուտ և սրագ են պատրաստւում։ Հետևաբար հիւանդութիւնը իր առաջին աստիճանի մէջ բուժելու համար պէտք շատ գեղի է կարօտում, քան երկրորդ և երրորդ աստիճանների մէջ։ Այս դէպքում իրաւունք ունինք ենթագրելու, որ բուժումը «606»-ի հիվանդների իրենց ամենապարզ վիճակի վերածելուց յետոյ առաջ եկած հակամարմինների կամ հակաթոյների քանակութիւնից կախում ունի։ Հետևեալը այս պարագան բացատրող մի գեղեցիկ օրինակ է։

Եթէ մի մայր հիւանդ մանկան ծնունդ տալուց յետոյ ընդունէ «606»-ը, այս վերջինը հիւանդութիւնից կրաժէլ, եթէ միայն մի շաբաթ իր մօր կաթից ծծէ։ Այս պարագային չի կարելի ենթադրել, որ մանկան ստացած արսենիկի քանակութիւնն է, որ իր բուժումին պատճառ եղաւ, արդէն իսկապէս մօր կաթի մէջ արսենիկ գոյութիւն չունի, այլ բուժումը մօր կաթի մէջ գտնուած հակամարմինների արդիւնքն է, որ մօր կաթի միջոցով մանուկը ստանում է։ Այս պարագան շատ կարևոր է նկատել, որ անմեղ մանուկները «606» ի ամենափոքրիկ քանակութեանն իսկ դժուար են դիմանում։ Առայժմ չգիտենք, թէ որ-

ձեօք ապագային այդ մանուկները կրկին հիւանդութեան նշաններ պիտի ցոյց տան, իսկ եթէ տան, կարելի է «606»-ի ներարկում անել նրանց վրայ։

Այս ընդհանուր ծանօթութիւնից յետոյ այժմ գանք նկարագրելու նրա գործածութեան եղանակը։ «606»-ը ընդունող հիւանդը պէտք է խիստ ուշադիր քննութեան ենթարկուի։ Ոչ միայն պէտք է նրա ընդհանուր առողջութիւնը գոհացուցիչ լինի, այլ իր զանազան գործարաններն ևս։ Շնչերի ներքին մասերը պէտք է ակնագէտով քննուին։ Երիկամունքները առողջ լինելով իրենց արտաթորման մէջ իր մէջ որևէ մի անբնական նիւթ չպէտք է պարունակէ։ Հիւանդը պէտք է նաև օրական, լաբդի և այլն հիւանդութիւններից ազատ լինի։

Ներարկումը կատարելուց յետոյ հիւանդը երեք օր անկողնի մէջ մնայ և չորրորդ 8—10 օրերը սենեակից դուրս չպէտք է գնայ։ Բժիշկը անշուշտ ուշադիր կերպով պէտք է հսկէ ոչ միայն ներարկումը կատարած մասին, այլ նրա ընդհանուր առողջական վիճակի վրայ։ Բժիշկները պիտի մոռնան այն հիւանդներին ներարկելու, որոնք ոտքի վերայ են ուզում ներարկում ընդունել։

Դօկթ. Վահան Գազարեան

ՄԱՋԵՐԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Գլխի վրայ անընդհատ պիտում են քրտինք, մորթային և իւղային արտաթորութիւններ. այս արտադրեալ նիւթերը ոչ միայն իրեն պարզ օտար մի մարմին, ազդում են մազերի մորթի վերայ, այլև խմորելով կարող են զգալման բացասական պատճառներ դառնալ։ Սրանից չոկ մազերը բնականից շատ քիչ խառն չիւղիկներ ունեն, այս պատճառով է, որ նոր երևեալ ծրնող կանանց և ապաքինող անձանց մազերը սանրի բիրտ ազդեցութեան տակ չդիմանալու համում են։

Սանրով և խոզանակով առօրեայ օգտագործելու չափ մազերի զօրութեան նպաստող ի րան չկայ։ Ատամները սուր և բարակ սանրերը չպէտք է գործածել։ Ատամները նօսր սանրերը անվնաս են, որովհետև սուր և բարակ ատամներով սանրերը մազերը փետում են և թեփի տրամադիր մազի մորթը գրգռում, որով թեփը շատանում է և թեփը ուրիշ բան չէ, եթէ ոչ մաշկի բարակ կտորներ. նոյնպէս խոզանակները չպէտք է կարծր լինեն։ Գլխի արտադրդին վնասակար նիւթերը միշտ պէտք է մաքրուելիան մէջ պահուին։

Շատ շատ սովորութիւն է մշտական գլուխը

ջրով լանջայը: Ըստ էլինկների այս սովորութիւնը վաղահաս ճաղատութեան գլխաւոր պատճառներից մէկն է: «100 ճաղատներից 85-ը, ասում է նոյն հեղինակը, – իրենց հրեխասարդութիւնից ի վեր մազերը թրջելու կամ լանջելու սովորութիւն ունէին, իսկ սրանցից չոկ ուրիշները, որոնք նոյն իսկ իրենց վերջին տարիներին էլ լաւ զարդարուն մազեր էին պահած, 100 ից միայն 8 թրջելու և լանջելու սովորութիւն ունէին: Ջրի ազդեցութեան տակ մազի արմատը ուռելով անփայլ և չորացած մազերը բուսնելուն տեղիք կտայ:

Ինչ էլ որ լինի, այն մարդիկ, որոնք փախնում են ճաղատ լինելուց, նոյնպէս պիտի փախնան ջրից: Զգուշանալ գլուխը ջրի մէջ թաթախելուց և ամառայ տաք եղանակին գլուխը սպունգով և թաշկինակով չորացնելուց: Մի կամ երկու անգամ միայն տաք ջրով լանջել լաւ ջրերը լաւ չեն լանջելուց առաջ օգտակար է հաւկիթի դեղնուցի մէջ մի քանի գրամ սոդա (ծypa) ջուր խառնելով գլուխն քսել:

Գլխի համար ինչ տեսակ կոմմոիք պէտք է գործածել.– խոհապէս ուղիղն ասած և ոչ մէկը: Ըստ անգամ մազերին յարմար և ներդաշնակ ուղղութիւն տալու, գլխազարդը դիւրացնելու համար, օծանոյշների գործածութիւնը անհրաժեշտ է դառնում:

Օծանոյշները, որ հեշտութեամբ ծթռում են գլխի վերայ գրգռիչ, սնափառին, կեղտառ և խանձրախառն մնացորդ են թողնում, որոնց մաքրելը մեծ տանջանք են պատճառում սրանք մազերի համար խիստ վնասակար են: Իւղերը ընդհանրապէս օծանոյշներից պակաս վնաս են պատճառում, մանաւանդ հնդկաիւղը, որը շատ քիչ է ծռթում: Դիկսերիւնը, որ մի տեսակ քիմիական ոգի է և իւղի ֆիզիքական յատկութիւնն ունի առանց նրա վնասակարութիւնը ունենալու, որով իբրև մազի անվնաս իւղ, կարող է յանձնարարուել:

Մազերը ցանկալի գերքի մէջ պահելու նիւթերը գտնել միշտ զգի խնդիր, սակայն սրանք վնասակար բաներ են, գրգռում և կեղտառում են մազերը, նոյնպէս նրա սննդառութիւնը, մանաւանդ շատ վնասակար են մազերը իբրև կրպոյնող կոսմետիքները. սրեսմն և քաշառողջ ապրելու համար հարկաւոր է մազերը շատ շատ չհանել, նրանք պէտք է հանգիստ ապրեն:

Փոշանքը և կարմրած երկաթով գանգրածքը ևս մազերի կեանքը կարճացնում են. սրանք ոչ միայն մազերը քաշկռտելով են նեղում, այլ երկաթէ ունկինների տաքութիւնը նրանց անդամակազմական կազմակերպութեանը խանգարելով

մազերի փճանալուն պատճառ են դառնում։

Առնւազը երկու ամիսը մի անգամ մազերը կարելով պէտք է այն զովացնել. չպէտք է մազերը խիստ կարճ կտրել, որովհետև մեր բաբեխառն կլիմայի մէջ օդային և մեէօրաբանական փոփոխութիւնները այնքան յանախ չեն լինում, որոնք պատճառ են դառնում փողատապի, առամի ցաւի. ականջի հիւանդութեան և քթի ու կոկորդի հարբուխ լինելուն։

Մանուկների սկզբնական երեք չորս տարիներում չպէտք է մազերը կտրել, սակայն չառնելը անփութօրէն կարում են մանկան պաշտպան բնական այդ բուրգը։ Գաղնաս հաստատում է, որ աճնագեղեցիկ և հաճոյալի մազերը նրանք են, որոնց բնաւ մկրատ չէ դիպել, ուրեմն այլ ևս հարկ կայ մազերը կտրելու վատ սովորութեանը հետևելու։

Եթէ ձեր մազերը թափւում են, սկսեցէք յանախակի կարել, կամ ածիլել։

Եթէ մազերը չոր են, հարկաւոր է հնդկայուղը ծծումբ կամ քափուրի խառնելով դլուխը օծել։

Եթէ մազերը իւղոտ են՝ սօսայի կամ ռսկեբորակի (ծyրa) ջրով պէտք է լուանալ։

Դոկտ. Կ. Փաշայեան

Ա.ՏԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առամների կարևորութիւնը չատ մեծ է։ Առանց նրանց օգնութեան մարսողութիւնը դժւար է և դժւարամարսութիւնը պատճառ է դառնում հիւանդութիւնների պատճառ է դառնում։ Եւ որպէսզի մարսողութիւնը կանոնաւոր լինի, հարկաւոր է կերակուրը բերնի մէջ լաւ ծամել, մանրել և յուսոյ կուլ տալ։

Քննւած է, որ լոբի, ցորեն կամ սպի մի հատիկը առանց առամի հարւածն սոսնալու, մարսողութեան խողովակից այնպէս է դուրս ելել, ինչպէս որ իր մուտքն էր արել, որովհետև մարսողութեան խողովակի մէջ դնւած հիւթերը չեն կարող իրենց ազդեցութեան տակ լուծել։

Հաստատւած է, որ այն մարդը, որն իր առամների հիւանդութեան ու վատ լինելու կամ լորձաթաղանթի պատճառով չի կարողանում լաւ ծամել կերակուրը և չուսով նեխ է տանում, վաղ թէ ուշ դժւարամարսութեան պէտք է հիւանդանայ և երկար տառապի։

Ամեն հատակի մէջ առամների կարևորութիւնը գնահատելի է, մանաւանդ ծերութեան մէջ, երբ առամոքսը իր ոյժը կորցրել է, պէտք է միշտ զգուշանալ դժւարամարսութիւնից։

Դժւարամարսութեան օրինակները չեն պա-

կասում և կարևոր եմ համարում այստեղ մի օրինակ բերել։

Մի անգամ մի հիմար մարդ հիւանդանոց է մտնում բժշկել տալու իր տասներկու տարի ի վեր ունեցած փորացաւութիւնը։ Այս մարդը խնքախաւարը ահաք ունէր, սակայն կրծքի և փորի վրայ հիւծաղթի ոչ մի նշան չէր երևում։ Քննութեան ժամանակ լինդերը սունկի նման սևորակ էին, ոչ մի տաք չկար բերանում, բայց նրանց կառուցուածքներից, սրունք արիւնով ու թարախով էին շրջապատուած։ Առանց վարանելու հանձնեցին բոլոր տամների մնայորդները և հականեխական դեղերով բերանը մաքրելուց յետոյ, կիզած տաքի մի շերտը չինեցին և անցկացրին ծերունու բերանը, որ և նա առողջացաւ փորացաւութիւնից։

Տաքաստքան և ջղային հիւանդութիւնները յաճախ տաքերի վատ վիճակի արդիւնք են լինում։

Գաւառը անհոգ ու անփոյթ են վերաբերւում իրենց կոպրցած մէկ տաքի նկատմամբ, առանց մտածելու՝ թէ այն յաճախ ամբողջ տաքերի կամարն է տեղափոխում, որի հետևանքի շնորհիւ մարդու դէմքն է կերպարանափոխւում, տաքերը մտնում են իրար մէջ և սկսում են շարժուել բնականոն տաքիցան։

Երբ մի կամ մի քանի տաք պակասում են,

անմիջապէս պէտք է դիմել տաքաշտքոյժի բերանը քննել տալու համար՝ թէ արդեօք հարկաւոր է արհեստական տաքերը դնել, սակայն պէտք է տալ և այն, որ յաճախ արհեստական տաքը տալի անհրաժեշտ է լինում, քան թէ օգտակար, յաճախ պատահում է, որ նրանք վնաս էլ են պատճառում։

Մեզ մի պարագայում կորած տաքը խրատում է մեւսներին լաւ հոգս տանելու համար, եթէ նրանք փտած են, պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել այդ մասին։

Ընդհանրապէս աւելի լաւ է տաքերի փրտելուց զգուշանալ, քան թէ յետոյ խնամք տանել։ Հարկ է տալ, որ յաւր սկսի, նոր միջոցներ որոնել։

Տաքերի կորուստը տարաբաղդ մանուկ ժամանակից խնամք չտանելուց է առաջ գալիս։ Որքան տարի է լինում, երբ մի երեխայ տաքի չի ունենում, կամ մեծ մասը փտած են լինում։ Նրա դէմքը ոչ միայն կերպարանափոխուած է, այլ տաքերի հիւանդութեամբ է տառապում։

Ամերիկայի, նոյն իսկ Փրանսիայի զանազան կրթական հաստատութիւններն ու ընտանիքները ինչպէս իրենց բժիշկը, նոյնպէս տաքերը ունեն։ Տարի և հինգ օրը մի անգամ նրանք 1—2 այցելում են այդ հաստատութիւնները և

քննում այնտեղի երևոյթներին, որոնք մեծերից աւելի խնամքի պէտք ունեն։

Պէտք է յիշել նաև, որ տատմի հիւանդութիւնը տեսութեան և լսողութեան կարող են վնաս հասցնել։

Պէտք է պատճառ տատմների յարգը և չմոռանալ ընդմիշտ հողս տանել նրանց առողջութեան վրայ։

Վիրաբոյժ և տատմնաբոյժ

Հրաչեայ Համամճեան

ՅԱՑԸ ԻՆՉՊԷՍ ԽՄԵԼ

—

Ընդհատ ժեչա է չայը խմել լիմոնով, մանաւանդ երեկոները. որովհետև չայի մէջ կայ թոյն։ Լիմոնը չնչացնում է չայի թոյնը։ Մատամր կաթը, թթուաշ մուրաբաները նոյնպէս չնչացնում են չայի թոյնը։

Նրանք, որոնք գլխացաւ, սրտի բաբախում ունին, ջղային են, անպայման պարտաւոր են չայը լիմոնով կամ շատ թթուաշ մուրաբայ խմելու։

ԹԷ ՈՒԶՈՒՄ ԵՍ ԵՐԿԱՐ ՅԱՐԵԼ

—

1. Ինչքան հնար ունես տարբեր մարմուր և առողջարար օդում, մանաւանդ արևում, բայց արևը շատ տաք չլինի։

2. Մին կեր օրական միայն մի անգամ, այն էլ չափաւոր։ Կերակուրը կազմիր առաւելապէս առողջ կովի կամ այծի հում կաթից, հաւկիթներից, դանդան արմատակէններից, բանջարեղէններից, իւղից, պանրից, պտուղներից։ Ամեն տեսակ ամիսը մի քանի ժամանակ մսից բոլորովին խուսափիր։ Շատ լաւ ծամիր։

3. Ամեն օր լողացիր, և ամեն շաբաթ մի անգամ բաղանիքում քրտնիր։

4. Ամեն օր տատմոքսդ պէտք է նիրգործի։ Շաբաթը մի անգամ ընդունիր մի թեթև լուծողական։

5. Հագուստդ ծակոտեկաւոր կաուչուկից պատրաստած լինի կարած, մանաւանդ բրդէ։ Շապիկիդ օձիքը թող լինի լայն։ Ամառը գլխարկդ և չոքերդ բաց գոյնի, ձմեռը մուգ գոյնի լինեն։ Ցածր կը բռնկնեքով կօշիկներ հագիր։

6. Պառկիր վաղ, արթնացիր նմանապէս և շատ վաղ։

7. Քնիր պատուհանդ բաց, մութ և հանդարտ սենեակում։ Քունդ պէտք է 6½ ժամից ոչ պակաս և 7½ ժամից ոչ աւել տևէ (8½ ժամ կանանց համար)։

8. Ձարթիր մի անգամ բոլորովին հանգստացիր։ Աշխատիր չարաթ օրից մինչև երկուշաբթի ժամանակդ անկաշկանդ գլուխդ կամ թէ տարիքդ։

9. Խուսափիր բարոյական վրդովմունքներից և հոգևոր դրգռումներից։ Մի մտածիր ոչ նրա մասին, ինչ որ չի կարելի փոխել, ոչ էլ նրա մասին, ինչ որ պէտք է պատահի։ Անախորժ բաները մի խօսիր։ Կամքդ պէտք է ուժեղ լինի։

10. Սեռական յարաբերութիւնների մէջ եղիր չափաւոր, սակայն մի խափանիր բոլորովին բնական պահանջը։ Ամուսնացիր։ Եթէ այրեցաւ, նորից ամուսնացիր։

11. Խուսափիր վատ օդ ունեցող կամ չատ տաքցրած (մանաւանդ գոլորշիով տաքցրած) տեղերից։

12. Չափաւոր գործածիր ոդեկից խմիչքներ՝ սուրճ, թէյ և ծխախոտ։

Ա. Ա. Շեխով

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՐՃ ԽՐԱՏՆԵՐ

— Սեղմիրանը (կորսէ) հագուստեղէնների ամենաթանկագին և ամենից ոգետարը մարդ է։

Դօքթ. Ֆուլտ

— Մաքուր օդը լաւ անուանի չափ օգտակար է. օդը մեր կենսական ոյժն է։

Դօքթ. Ռ. Բարիս

— Ինչ որ հաճելի է թւում և ճաշակներիդ յարմար, երբեմն խիստ վտանգաւոր է լինում ձեր առողջութեան։ Նոյն

— Մանուկների հագուստի առողջապահութիւնը կայանում է երկար բաների մէջ, այն է՝ մարքուր, պարզ և ազատ։ Ֆոնսագրիվ

— Մարմնամարզութիւն կատարեցէք և ձեր երիտասարդութիւնը պիտի երկարի։ Լոկ

— Մաքուր ապրողը իր առողջութիւնն ապրեցնէ։

Դօքթ. Ֆուտո

— Նա որ չի ծամում, վաղ թէ ուշ ստամոքսի հիւանդութեան ենթակայ պիտի լինի։

— Առողջապահական միջոցներ գործածեցէք, եթէ չէք ուզում վնդ գործածել։

— Չոլէսթ է կերած կամ մարսած ժամանակ մտաւոր աշխատանք կատարել։

Ռնամ Կոթիէ

—Լաւ եփած հացը, չոր միսը, գիւրամարս բանջարեղէնները լաւ են յարմարւում բանասաղծներին և գիանականներին։

Մոլէոս

—Չափաւորութիւն, կանխատես աշխատանք, պարզութիւն—ահա երկար ապրելու գաղտնիքը։

Ֆլորենս

—Նա որ շատ գօրաւոր ընտիդներ է ընդունում, չատանալու համար պէտք է շատ երկար շարժումներ անէ։

—Պէտք է քիթով շնչել թոքերի մէջ անցած օդը տաքացնելու համար։ Կաճս

—Առողջութիւնը չի կարելի ծուլութեամբ և անգործութեամբ ձեռք բերել։

Պլուտարքոս

—Ցրտին դիմանալու համար թէյ գործածեցէք։ Դօք. Պապինէ

—Լողանալուց յետոյ ամենաօգտակարն է տաքով պաստա դործել։ Դօք. Վելէզ

—Պաղպաղակը ճաշի ժամանակ երբեմն վր նասում է մարդու, իսկ ճաշից յետոյ ամրողջովին վնաս է։ Ուրեմն մի գործածէք։

Դօքթ. Տոճէ

—Նա որ լաւ է ծամում, առաջքրից չի տառապում։ Դօքթ. Ֆլէօրի

—Լաւ քնելու համար պէտք է ֆիզիքական չարժումներ անել։ Նոյն

—Երեխաների սենեակների մէջ աչ վարագոյր կախել և աչ էլ գորգ։ Նոյն

—Ցան ամենատերին յարկը ապրեցէք։ Նոյն

—Չափաւոր կերակուրը շատ հիւանդութիւններ է վանում։

—Ճաշի ժամանակ պէտք է երկար գաւաթ չուր խմել։

—Չարժումը մարմնի առողջութեան համար այնքան կարևոր է, որքան սնունդը

—Եթէ մարդ քիչ ուտէ և քիչ խմէ, երբէք չպիտի հիւանդանայ։ Հիբոկրատ

—Ոգելից ըմպելիները կարող են նոյն իսկ հանճարներին անգամ փճացնել։

—Ծխախոտի չափաւոր գործածութիւնը աւելի օգտակար է, քան վնասակար, բայց չպէտք է օրական քսան գրամից անցնել։

Դօքթ. Մոսէճ

—Ստամոքսից առաջացողները պէտք է ևփած պտուղ ուտեն։

Հաւաքեց՝

Դօքթ. Մ. Պալտաճեան

ԻՆՉՊԻՍԻ ՊԷՏՔ Է ԱՊՐԵԼ

Աշխատելու ժամանակ խուսափիր կրծքիդ ճնշում գործ դնել։

Երբէք մի գլխիր, մի կարդայ և մի աշխատիր մթնաշաղին։ Պահպան ժամանակդ մի կորցուր։

Եթէ աչքերդ յոգնել են, գործդ մի կոպիտ դիր և հեռուն նայիր, ամենից լաւ է դէպի լայնարձակ տարածութիւնը

Եթէ աչքիդ մէջ որևէ բան ընկնի, մի տրտըիր աչդդ, այլ միայն դգուշութեամբ շփիր փոքրի կտոր—քունքիդ կողմից դէպի քիթդ։ Եթէ այդ էլ չօգնէ, շտապիր բժշկի մօտ։

Ականջներդ պահպանիր ուժեղ ցնցումներից. մի թոյլ տայ, որ նրա մէջ լղանեն։

Ականջներիդ մէջը մի քշփոցիր սրածայր բաներով։

Եթէ ականջիդ մէջը որևէ միջատ մտնելու լինի, այն ժամանակ գլուխդ թեքելով (առողջ ականջդ դէպի ուսդ) հիւանդ ականջիդ մէջ մի քիչ տաքացրած անարատ իւղ լցրու կաթիլաթիլ։

Քիթդ սրբելու ժամանակ առանձին այժ մի գործ դնիր և միաժամանակ երկու քթանցքերդ սեղմելով մի փչիր։

ԱՒՈՂՋՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ընդհանուր մաքրութիւն և անպայման առատ կերակուր։

Խմիր միայն մաքուր, մաքուր ջուր։

Կեր բազմատեսակ մաքուր, լաւ ուտելիք։

Ուտելի շատ կատարիր մկանութեային վարժութիւններ։

Քեզ պահիր ուղիղ։

Քո հագուստ միայն օգտակար վարժութիւններ տուր։

Թոզ փոշոտում կանոնաւոր կերպով յաջորդեն միմեանց աշխատանքը, հանգստութիւնը և քունը։

Սահմանափակիր կրքերդ և հետևիր քո ըղձպատկերներիդ։

Պահիր մարմինդ իդէալական մաքրութեամբ։

Վճռական եղիր ամեն բանում։

Եթէ դու կը կատարես այդ բոլոր կանոնները, դու կլինես առողջ, ուրախ և անհոգ։

ԱՄԵՆԻՒՑ ԱՌԱՋ ՀԱՒԱՏՔ

(Ն. Ս. Մարտին)

Ծագկունքը մէջ մանուշակը համարւում է հաւատի խորհրդանիշ։ Նրա փոքրիկ թերթիկնե-

ըից ամեն մեկը, որ այնպես չդառնա մեր հայեացքը, ունի իր առանձին նշանակութիւնը, որի պատճառով էլ մանուշակը համարւում է ամենասիրելի ծաղիկը։ Այս թերթիկները կարծես ուզում են մի ուրիշ անգամ ևս ապացուցանել մեզ, որ հասնելու համար այն բարձրութեան, որը թուում է մարդուն իրրև մի բարձրադոյն գնորք, մենք պէտք է զօրացնենք ինքներս մեր մէջ հաւատի և վստահութեան զգացմունքը։

Այն մարդը, որ վստահութիւն չունի պէտք ինքը և չէ հաւատում իր ընդունակութիւններին այժին, երբէք կեանքում յաջողութիւն չի ունենալ։ Եւ թող այն ամենքը, որոնք գանգատւելով ժամանակի վատութիւնից, նրանակայում են, թէ իրանց բախտ ասուղը նահմացիլ է, իմանան, որ հաւատը պէտք է լինի միշտ ամենից առաջ և որ առանց այդ պայմանի ոչ ոք ոչ մի բանի չի կարող հասնել։ Ինչ բանի որ ձեռնարկում ես, միշտ լիովին վստահ եղիր, որ այդ գործը քեզ կը յաջողւի։ Եթէ դու մնացիլ ես անգործ և մտազիր ես գնդատան տեղերում սրանիլ յարմար զբաղմունք, — մի գնալ ոնից տուն անվստահ և վախվխելով, ընդհակառակը, վստահ և իր. որ ձեռնարկութիւնդ յաջող եւք կաւնենայ և աշխատիր ներշնչել քեզ, որ դու հէնց այն մարդն ես, որ ամենայարմարն է այս պաշտօնի համար։

Հաւատալ նշանակում է ունենալ վստահութիւն դէպի ինքն իրեն և դէպի իր Ստուածը։ Անհրաժեշտ է վառել ամեն մի երկիւղ. Ամենից լաւ է ունենալ անյողդողդ հաւատ, ուր բոլոր լինելիքը պիտի ծառայի միմիայն մեր օգտին։ Միայն այդ դէպքում մենք կարող ենք գտնել մեր մէջ ուրախութիւն ու բախտաւորութիւն և օգտուել մեր շրջապատողների բարեհաճութիւնից։

ՀՈԳՈՒ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ՓԻԼԻՍՈՓՈՍԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՑՈՒՑՆԵՐ

(Խսահակ Պ. Նոյես)

Մեր կեանքը կլինէր մի սարսափելի տանջանք, եթէ նրանից չհեռու չը սկսուէր մի ուրիշ կեանք։

Այն ոյժը, որն ստեղծել է այս ամենը, ինչ մենք տեսնում ենք, ընդունակ է ստեղծելու նոյնպէս և մի ուրիշ կատարեալ բան։

Ընդհակառակն այն բանի, որ երկրային էակների համար կեանքն ամենից ապագայ կեանքը, մեր այժմեան կեանքը առանում է ուրիշ մեծ արժէք, քանի որ մենք գիտենք, որ այն աշխարհում մենք վարձատրւած կը լինենք այն բոլոր զրկանքների փոխարէն, որ կրել ենք երկրային կենցաղավարութեան ժամանակ։

Ապագայ կեանքը հերկայանում է մեզ լի սմբոզջ շարք յաջողութիւններով։ Նա գերազանցում է հրկրայինին բոլոր կողմերով։

- Եւ միայն մարդը չէ, որ ձգտում է հասնելու բարձրագոյն իդէային, այլ բոլոր կենդանի էակները ձգտում են հասնելու աւելի բարձր զրութեան։

ՀԱՒԱՏՔ

(Սիճմունդ)

Մեր հոգին կարելի է նմանեցնել մի տան, որի բաց դռներից նրան են մանում մարդիկ։ Եթէ մենք կանենանք միշտ դռնապահ հոգի ամեն տեսակ մարդերի համար, ապա դրանք բոլորն էլ ինչ տեսակ որ լինեն, լիմոնեն ու կապաւորեն այնտեղ, թէկուզ լինեն դրանք - կարիք, զրկութիւն, հիւանդութիւններ։ Եւ եթէ մենք կողպած կպահենք մեր տան դռները, բանալով միայն հրաւիրած հիւրերի համար և յատկապէս մարդու, անարատ մարդերի համար, ապա մենք կլինենք աւելի ուժեղ և աւելի ներդաշնակ կապրենք աշխարհի հետ։

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ, ԵՒ ՁԱՐԱՒԱԽՈՒԹԻՒՆ,

Բարութիւնն անչուշտ պիտի յաղթէ չարութեան, — ահա այն հիմնական կէտը, որից ծագում են Նոր մեծերը։ Ուսուցչին այժ ձեռք բերելու համար պէտք է հասնել այն դրութեան, որ սէրը լինէր մեր կեանքի փակաղը։ Մեր կեանքը — դա հոգսերի և աշխատանքի աշխարհն է և մենք կարող ենք հեշտ և ուրախ կերպով կատարել մեր պարտականութիւնները, եթէ միայն չարունակ կճաճանենք Ուսուցչի և սիրոյ մասին։ Ուսուցչի և սիրոյ մասին եղած միտքը մեզ առաջին չի խանգարիլ ոչ աշխատելու, ոչ ծառայելու, քանի որ Ուսուցչի սիրող մարդը աւելի շատ բան կանէ, քան թէ նա, որն իր գործը կատարելիս առաջին չէ մտածում Ուսուցչի մասին։

Ամեն ոք, ով միայն փորում է անարատ և սուրբ կեանք Քրիստոսի կեանքի նման - կարող է շատ կամ քիչ աստիճանի բնդունակ լինել բռնժշկել այս կամ այն հիւանդութիւնները։ Որտեղ նա է, — այնտեղ առողջութիւն է։ Որ տունը նա մտնում է, — առողջութիւն է մտնում նրա յատակից նա ոչ մի խօսք չի ասում, նա առաջին չէ անում, նա ոչ մի միջոց ձեռք չէ առնում և այնուամենայնիւ նրա չուրջը թագաւո-

լում է մի առանձին մթնոլորտ, որից այնպէս բուրում է ուրախութիւն և հանգիստ։ Նրա լոկ ներկայութիւնը թարմացնող ու զարթեցնող ներգործութիւն է անում յանցաւորների անուշ վերի աճապարծների վրայ։ Եւ ուրիշ կերպ չէ էլ կարող լինել. չէ՞ որ նրա դէմքին այնպէս էլ փայլում է սուրբ հոգու զօրութիւնը։

Ա. Պ Ա Գ Ա Հ Ա Կ Ա Ն

Ինչպէս էլ մենք պաշտպանենք, փիլիսոփայութեամբ թէ սոսկ գիտութիւններով, մի քան անփոփոխ պիտի լինի. պէտք է ամէն բան իրականացնենք, ապացուցենք գործով։ Մենք չպէտք է միայն մտածենք, մենք պէտք է նմանպէս գործենք։

Ոչ մի օր, ոչ մի ժամ չպէտք է անգործացնենք առանց ապացոյցները տալու մեր գոյութեան, մեր առեղծագործութեան, քանի որ միայն նա է բարում աշխարհի վրայ, ով գործում է և առեղծում։

Միայն նա կարող է յոյս պնել աւելի լաւ ապագայի, ով քանդում է նախապաշարմունքների անշարժ պատը։

Այնտեղ, ուր ցինիկը միայն քանդում է, բառեղծագործող ոգին նորից է շինում. այնտեղ, ուր քննադատը խառնում է բարիքը չարիքի հետ,

առեղծագործութեան հանճարը ցանում է նոր սերմեր և այնտեղ, ուր պեսսիմիստը ոչ[ր]ում է իր կեանքի պատասկութիւնը, — առեղծիչը իր փայլուն աչքերով յոյս է նայում դէպի անյայտը և ուղղում իր հայեացքը դէպի ապագան։

Գ. Ֆ. Գ.

ՉՕՊԻՐ ԵՐՋԱՆԱՑՈՂՆԵՐԻԴ

«Մեծերից կարելի է
ճանաչել մարդուն»։

Մարդը պատկերն է այն Աստուծոյ, որ բնաւորւում է նրա երևակայութեան մէջ. նա պատկերն է այն կատարի, որին նա է առեղծել իր համար։ Եթէ նրա արատները և վարմունքը կոպիտ են ու անկարգ, ապա կարելի է վստահ ասել, որ նրա մտքերի հորիզոնը լայն չէ և որ նրա կուռքը քիչ առաւածային կողմ ունի։ Մեր շարժմունքները, մեր գործերն ընդհանրապէս կախւած են լինում այն մտքից, որով զբաղւած է մեր հոգին։ Մարդու, այնիւ մտքերը ցոյց են տալիս մարդու արժանաւորութիւնը։

Եթէ մենք գտնում ենք, որ այսօր մենք հոգով աւելի մեծ ենք և մտքով, քան թէ երէկ, ապա ուրեմն մենք մի ամբողջ քայլ յառաջել ենք անմահութեան։

Ըստ լաւ կլինէր, եթէ մեզանից ամեն մէկը կարողանար ասել, որ այս օրը նրա կեանքի լաւագոյն օրն էր։ Լաւ կլինէր այդ ցանկութեամբ պիտաւորել ամեն նոր օրին. այդ մտքով կուզէինք վերջացնել երեկոն։ Այդ պայմաններում մահը մեզ կթէր լինչպէս արթնացում կեանքից

Թող մաքուր մտքերը օրինակ լինեն քեզ կեանքում։ Թող քո խօսքը լինի ճշմարիտ, թող քո հոգին լցւած լինի միայն բարութեամբ, թող քո սրտին դանել միայն ներդաշնակութեան մէջ։ Փոդոյիր քո բոլոր օյժերը և արտաքոիր քեղանից բոլոր վատ մտքերը։

Ընտանեան արա քո սրտից վրէժխնդրութեան ու թշնամութեան զգացմունքները, քանի որ դրանք հոգին հիւանդացնում են. իմացիր, որ միայն առողջ մտքերը կարող են պահպանել մարմինը։ Երբ մեր հոգին ապատ կլինի այնպիսի զգացմունքներից, լինչպես առելութիւնը, նախանձը և նրանց մշտական ուղեկիցը — երկիւղը, այն ժամանակ մենք կհասնենք այն գրութեան, որի մէջ մեղանում երեան կգան նոր ուժեր և ծերացած կենսական հիւթերը կը թարմանան ու կը նորոգւեն։

«Ազդակ»

ՏՐԴԱՏ ԺԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՄԱՀԱՐՁԱՆԸ

Կ. ՊՕԼՍՈՒՄ

Կոստանդնուպօլսոյ Ս. Սոփիա եկեղեցին մինչեւ գարու ճարտարապետական ամենամեծ հրաշալիքն է։

Այս հրաշալիքը 6-րդ գարու սկզբին կանգնել տւաւ Յուստինիանոս կայսրը, Փոքր Ասիացի յոյն ճարտարապետներու ձեռքով, որոնց մէկն էր Թրալլացի Անթէմիոս և միւսը Միլէտացի Իզիոդոր։

Այս եկեղեցին մինչև այսօր աշխարհի բոլոր պետականների ուխտատեղին է, որն որ Կոստանդնուպօլսոյ առումէն յետոյ մզկիթի փոխարկեցին տաճիկները։

Ընկարելի է առանց սարսափելու դէպի վերանորոգմելին նայիլ, որ ահաւոր անդունդի մը պէս կախւած է պետրոի գլխին վրայ, որուն մէջ Բիւզանդական կայսրութեանց օրով սակեղն ու արծաթեղէն անթիւ ջահեր ու կանթեղներ կը փողփողէին աստեղազարդ երկինքի մը նման։

Գմբէթի արտաքինը 31 մեթրէն աւելի է, արտաքին մը, որ քիչ պակաս է Ջաբլենոյ եկեղեցիի կամ Ընթի Գազկաչէն Ս. Գրիգոր եկեղեցիի ամբողջ չէմքին արտաքինէն։

Ձէնքը վերչանալէն, Յուստինիանոս քա-
ռակի կուռքով գնայ օծման հանդէսին ներկայ
գտնուելու. երբ նեքս մաս ու տեսաւ այս հրա-
շալի շէնքը զարդարուած ոսկեղէն և արծաթեղէն
պարզիերով, բիւրաւոր ջահերով ու վանթեղներով,
հպարտ շեշտով մը գոչից —«Յաղթեցի քեզ, Սո-
ղոմոն»...

Օծման թւականէն քանի մարի յետոյ այս
մեծազարմ գմբէթը փլաւ։ Յուստինիանոս տառնց
յուսահատութիւն, վերսին նորոգեց աւելի հռա-
չտաւոն կերպով։ Այս նորոգութենէն յետոյ մեր
անվնաս մնաց մինչև 989 թւականը։ Այս թւա-
կանին տեղի ունեցաւ մը վերսին փլուզ
գմբէթը և շէնքն ալ մեծ ճեղքուածք ստացաւ։

Ժամանակակից հայազգի վաստկաբոլը ու-
սկելով անմիջապէս վերանորոգել այս շնչաշար-
ժիկ չքշտաակարանը, բազմաթիւ տեղացի ճար-
տարապետներ հաւաքից անոր շուրջը։

Այս պէտքին նոյնպէս ժամանակակից հայ
պատմագիր Սեբէոսանոս Բագրեւանդ կը պատմէ, թէ
տեղացի ճարտարապետներէն ոչ ոք չի համար-
ձակեցաւ յանձն առնել անոր վերաշինութիւնը։

Պատահաբար այնանկ գտնուցաւ Զիլբակի
Թագաւոր Սմբատ Բագրատունիի անձնական ճար-
տարապետ՝ Տրդատ, որն որ հիմնադրիչը էր Ա-
նիի Մայր եկեղեցին, բայց Սմբատի մահուամբ

չինութիւնը ընդհատուեր էր։

Այս հանճարեղ ճարտարապետը համարձակ
մօտեցաւ այդ մեծ ու յանդուգն գործին և յան-
ձըն առաւ վերաշինել աւելի հռաստատուն, քան
իր նախորդները։ Անձամբ պատրաստեց բոլոր
կաղապարները. անկիւններու չորս առագաստ-
ները նորոգեց իր ուղած ձեով, յետոյ բարձրա-
ցուց չուրջանակի ցած գմբէթ մը, որ այն ժա-
մանակ միմիայն Հայաստանի յատուկ ոճ էր, և
այս գմբէթին վրայ կապեց 31 մեթրէն աւելի
տրամագծով կիսագունդը։

Այն օրէն ի վեր անցեր են 922 երկար տա-
րիներ, բազմաթիւ երկրաշարժներ և ուրիշ թնա-
կան արկածներ Կոստանդնուպոլիսը դղրդեր են,
սակայն Ցրդատաշէն գմբէթը անսասան կը մնայ
Ս. Սոփիայի գլխին։

Ընտասիկ գեղեցիկ փաստ մը պատմական
հայ ճարտարապետութեան յարեւտ քննութա-
նութեան համար։

Զիլբակի նման փոքրիկ թագաւորութեան
մէջ ծներ ու զարգացեր է այնպիսի հայ արուես-
տագէտ մը, որ ոչ միայն մըցակից հանդիսացաւ
Յուստինիանոսի գոյգ ճարտարապետներուն, Ան-
թէմիուսին և Իզիսոբին, այլև իր յատկութենական
մտարձանը կանգնեց Բիւզանդիոնի Ս. Սոփիա

հկեղեցւոյն վրայ, — պատիւ ու պարծանք իր հայրենիքին, իր ցեղին։

Երբ որ դպրոցականութեան բոլոր հաւանքները 5 րդ դարէն սկսեալ Բիւզանդական կայսրութեան երկիրները կողոպտէին, սրսկեօք քանի մեծագործ արուեստագէտներ խոտնած այդ հաւանքներուն Ծրդատի նման սքանչելիքներ կանգնեցին Բիւզանդական երկիրներու մէջ, «որոնք անչքնաւակ կըլան և անոնց հանճարի արտադրութիւնները արձանագրեցան երկրին և ազգապատում սարերին անունով։

Բայց ինչ հարկ կայ ուրիշ փաստեր փնտռելու հնագարեան Հայաստանի բարձրագոյն քաղաքակրթութեան և հայ ցեղին ստեղծագործական հանճարի մասին։ Այսօրուան Ս. Սոփիայի գլխին բաղմած հեղեղատեսիլ գմբէթը Հայաստանի բազմադարեան քաղաքակրթութեան պերճախօս պատմութիւնն է։

Թ. Թօրամանեան

ՄԱՐԴԸ ԵՒ ԿԵՆԴԱՆԻՆ

Պաբիկի մէկ կինեմատոգրաֆիական տան մէջ ցոյց են տալիս մակաբուկների հսկայ Գլադիատորը դիակատարը հանդիսանում է ազգ, արատակարգ մեծութեամբ, համարձակ և խորամանկ, որը մինչև հիմա բոլոր կռիւներում յաղթող է հանդիսացել։ Նա իր թշնամիների վրայ յարձակւում է, ձիերին վայր է դցում, յղամայրիկներին, ծղոտամարտիկներին վախցնում է ինչպէս միջատները, չնայած, որ միայն նրա պզմ քան հոգու չափ են դուրս գալիս։ Դրանից յետոյ նրա կռակցելու ժամն է հասնում, և նա խաղաղ ուտում է իր պահապանի ձեռքից, որը գթանքով է վերաբերւում։

Միևնոյնը կարելի է ասել և բոլոր կենդանիների մասին։

Մենք բոլորովին նրանց չենք հասկանում, մենք նրանց վրայ նայում ենք սառցած արգիւնքի տեսակէտից, թէ ինչ չափով կարող ենք շահագործել՝ ուշնացնել նրանց միսը, կաշին, փետուրը, իւղը և այլն. ահա ինչ է մեզ հետաքրքրում։ Բայց այն մարդիկ, որոնք կենդանիներին ուսումնասիրելով են զբաղւած, գալիս են այն հետևցութեան, որ նրանք էլ նոյնքան ապրե-

լու իրաւունք ունին, որքան մենք, և նրանք մի պահից սոսը չեն կանգնած, այլ բարոյականութեամբ բարձր են։ Մենք ընակացրել ենք շներ, կատուներ, ձիուն և էլի մի քանի ուրիշ կենդանիներ, որոնց մենք մեզ ծառաներ ենք դարձրել։

Բոլոր կենդանիները օժտուած են միտքով առաքինութեամբ։ Նրանք բոլորը ընդունակ են սիրելու և անձնուէր լինելու նրանց՝ որոնք ընդունակ են նրանց հասկանալ։

Այն կենդանիները, որոնք ուրիշ կենդանիների սպանում են, այդ կատարում են նրա համար, որպէսզի ապրեն։ Միայն մարդն է, որ բոլոր պահում է իր անասնարձութեան բաւականութիւն տալու համար, որպէսզի ցոյց տայ իր ոյժը, կամ սպանածի տեսնելը տեսնի և ուրախանայ։

Եթէ երկրիս վրայ մէկ անողորմ գազան կայ, այդ մարդն է։

Ոչ թէ միայն գազանանոցներում, այլ և տնտեսութեան մէջ ձեռնասուն կարելի է գտնել վտանգաւոր համարուող ապրեցնելու նրանց և օձերին։ Ինչ վերաբերում է ապրեցնելու նրանց և օձերին։ Ինչ վերաբերում է ապրեցնելուն, այդ սովորական բան է... ապրիլը դա մի մեծ կատու է, քնրոյշ և փաղաքշող, ինչպէս սովորական կատուն։

Պարիզի մօտիկ մի տանում, մի մասնաւոր անձի մօտ ապրում է ապրեցնելի մի ամբողջ ընտանիք, որոնք այդտ մէջն են ճաշում, նրանց և ընտանի շների հետ և յաճախ կանգնում են պատուհանի առաջ, որպէսզի նայեն առաջից անցնող գարձողին։ Մեզ ցոյց էին տալիս թատրոնում կոկորդիլոսներ, որոնք ձայն էին հանում, երբ որ նրանց անունը տալիս էին, և ուտում էին այն ժամանակ, երբ որ անունը իրաւունք էր տալիս։ Այս քանի ժամանակներս Լոնդոնում մի կոկորդիլոս աղաչանք էր տալիս, երբ վերջինս վրայ յարձակուել էր մի ուրիշ գազան։

Մինչև անդամ թռչնատուր օձերը անձնուէր և հնազանդ են իրանց կապողին։ Նրանց տասը կամ վեց մետր մարդուն մի տեսակ առելութիւն է ներշնչում։ Մարդը վախենում է ձեռք տալ մերկ կաշով կենդանուն. սողուններն, գորտերը, գոդաշները և չլնաշխն շները զզուելի են հէնց դրա համար։ Երևի կենդանիները ծիծաղում են այդ չափազանց բծախնդրութեան վրայ, որովհետև մարդը կենդանի է՝ նոյնպէս մերկ կաշով, առանց թեփոտ կեղևի, փուտրի և նոյնքան մազերով, որքան չինական շները։ Որպէսզի ծածկեն իրանց մերկութիւնը, պաշտպանեն փխրուն մկանունքները և իրանց թոյլ առողջութիւնը, մարդիկ ընութիւնից տուրք են վերցնում։ Նրանք պատում են բազմատեսակ կենդանիներ, որպէսզի մեկից վերցնեն կաշին,

միսից փետուրը, երբորդից բուրդ։ Նա հագնուած է իր թալանածով, նա ամենամեծ պարապիան է։ Նայեցէք մուշակ հագած պարոնի վերայ գեղեցիկ, դանդան փետուրներով զարդարուած և մարթի մէջ փաթաթուած սիկնոջ վրայ, և հաշուեցէք՝ որքան անմեղ կենդանիներ պէտք է սպանէին, սրպէսզի հագցնէին այդ երկու մեծ կենդանիներին, որոնք առանց դրան կը լինէին բնականից մերկ և ցրտից դողդողացող կնչալա զուրս։ Վատ չէր լինիլ, եթէ մարդը իր «ցաւոք եղբայրակիցներից» մի քանի բարոյական յատկութիւններ իւրացնէր օր. սիրոյ մէջ՝ նրանց հաւատարմութիւնը, փիլիսոփայութիւնը, բաւականութիւնների մէջ՝ չափաւորութիւնը և նրանց ժուժկալութիւնը։ Եթէ մարդը աշխատի կենդանիներով հետաքրքրուելու, նրանց բնաւորութիւնն ու վարքը դիտելու, նա նրանից շատ օգտուէլ պտսեր կտտնուր։

Ամեն մի կենդանի, առանց բացառութեան, կարող է ծառայել իրր անսպառ ուսումնասիրութեան առարկայ և կարող է դառնալ հաճելի ընկեր։ Դեռից հանուած ջրաղէսը, անտառում բռնուած գորշուկը բոլորովին ընտանի են դառնում, ինչպէս շունը, բայց շատ օգուտ են բերում. ջրաղէսը իր տիրոջ համար ձուկ է բռնում, իսկ գորշուկը դառնում է այդպիսի բազմաշխատ օգ-

նականը, որովհետև վշացնում է խլուրդը, սրդեքը, խլուկը և ամեն մի բանջարանոցի վնասակար միջատները։

Ընտանեթեան մէջ խոզնուած, ագռաւը, սեբմնաբաղ ագռաւը, ուրուրը ընտելանում են բոլոր տանեցիներին։

Ագռաւը գառնում է ամենախելօք, հետաքրքրքիր և զրաղեցնող թռչուններից մէկը։ Մարդը մի քիչ վախենում է ագռաւի հետ բարեկամանալուց, որովհետև նրա սև փետուրները վատ մտածմունքներ են ներշնչում։ Ագռաւի հասկացողութիւնը և ուրախութիւնը զարմանալի է։ Զգանգիմանանք այդ մարթով զարգացած թռչունին, նրա համար, որ նա կերակրւում է դիակներով, որովհետև մեզ կպատասխանէ, որ ամենամեծ ագռաւը գոլ է։ Նա ձեզ կուզարկէ ս ղանդանոցները որ ձեզ կենդկայական սարսռեցուցիչ տեսարան, որի մասին դուք ոչ մի ժամանակ չէք մտածել, չուտով քարշ տրած հազարաւոր կենդանիների տեսարան, դիակների տեսարան, իր վրայ թափթփուած, կտրատած, մաշկած, պատառոտած, որոնց կտորները հազարաւոր խանութներում կախած՝ մինչև որ դայ մարդը, գնէ և ուտէ նրան։ Դրանից չեսոյ դուք համարձակութիւն չէք ունենայ չանգիմանելու ոչ միայն ագռաւին, այլ բոլոր նրան և գայլաշներին։ Մարդը բնութեան մէջ ամե-

Նաշատ պիակներ ուտողն է։ Մի քանիսին նա կենդանի է ուտում (ուտելու ոսոխ), մի քանիսին կենդանի ոտպակած է է ուտում (խնչափոտ, խեցգետին), նա ուտում է նույնպես մի քանի բոլշ ոտաջ կենդանիների (ձուտիկներ և ձկներ), իսկ չորրորդներին թողնում են առժամանակ ապրելու (կացար և ուրիշ վայրի որս, լու ճաշ ունեցողները)։

Պինեմատօգրաֆիական տան մէջ ձեզ նոյնպէս ցոյց կտան, թէ ինչպէս են որսում կէտին, երբ որ ահագին կէտ որանկիւն կեռերի պարկերով սպանած, հանած է ծովափ, և արագ բարկուում է աւարի բաժանումը։ Նաւորդները չոտպում են հանել օգտակար մասերը. դուք տեսնում էք ինչպէս մեծ գպանի վրայ թափել են փոքրիկ գպաններ, որոնք պոկոտում են մսի կտորներ, ճարպ, չոր ջլեր, մի խօսքով ագռաւների խումբը և գրանք մարդիկ են։ Ամենավայրենի կենդանին այն չի անում, ինչ որ անում է մարդը. այդ բանտարկելն է, չարչարանքն է, տանջանք պատճառելն է՝ որպէսզի տանջանք տեսնի։ Սպանդանոցներն գարշուրանքը. իրեն արդարացնում է մեռ ուտելու ցանկութեան կարիքութիւնը, բայց ոչինչ չի կարող նեղել հոգ նեղի կոխը, գպաններին կուշտնիլը, ոտոնիներին գնդակոհարելը, տանուկներն և ձիերի հետ

անողորմ վարուելը։

Բոլոր հասակի և սեռի մարդիկ ունին նոյնանման զարճանքներ սիսոքակ։ Երիտասարդ, կղզեցիկ աղջիկը սիրում է թռչուններին պահել, նրան՝ որ ապատութեան համար է ստեղծած։ Խեղճերը կապնելով վանդակ բանակ ցանցին, փչրում են իրենց թևերը. ինչ ողբարժանութիւն են կատարել այն կենդանիները, որոնք բանտարկուած են կենդարանական այգիների մէջ։

Վերջին ժամանակներս Պետերբուրգի կենդանաբանական այգում տեղի է ունեցել կենդանիների հետ մի չլսուած անողորմ վարմունք։ Կենդանաբանական այգու տէրերը, որպէսզի նոր կապալառուներից թագցնեն մի քանի կենդանիներ, նրանց գիշերով տեղատարում են ուրիշ տեղ։ Ամուր ծածկուած արկղների մէջ կենդանիներին տեղատարում են ուժով և անողորմ կերպով։ Մի քանի օրից յետոյ նրանցից մի քանիսին տարտափիլ դրութեան մէջ են յետ տանում այգի։ Մի քանիսը սատկել էին, իսկ մի քանի հիւանդ կենդանիներին բացի զնդակահարելուց ուրիշ ելք չկար։ Մեծ մասամբ կենդանիները կանուած են ոտքերը չտպուած. չտեսրը չէին կարողանում կանգնել և թուլանում ընկնում էին, մի քանիսը կուրացել էին և այլն։

Երկրիս վրայ հոգած դրախտի աւանդութիւնը, որտեղ բոլորը ապրել են եղբայրների նման, առասպելական չէ. ասպարէզ եկաւ մարդը և սկսեց սպանել ու տանջել կենդանիներին։

Ելլոուստունի երկրում «Ազգայնական գրասպարէզ» անունով մի մաս կայ, որին ամերիկացիք պահպանել են իր իսկական դրութեան մէջ, այնտեղ արգելւած է կենդանիներին սպանելը, մինչև անգամ գնդակահարելը։ Այնտեղ բոլոր վայրենի գազանները ձեռնասուն են դարձած, մեծ եղջիւրները անտառից դուրս են գալիս, որպէսզի հետաքրքրութեամբ նայեն ճանապարհորդներին. արջերը ամրոցի ընտանիքներով գալիս են մարդկային բնակարանների շէնքը, որպէսզի լիպեն կանտբուիկների ապակիները, ձեռք մեկնելով կարելի է տեղում նրանց թաթը։ Միայն մարդու երկիւղը բոլոր արարածների մէջ պատերազմ է յարուցել։

Աշխատենք սիրել և հասկանալ մեր եղբայրակիցներին, որոնք բոլորովին մեզանից ցած չեն կանգնած։ Մարդուս բարոյական յատկութիւնը կարելի է չափել նրանով, որ նա որքան է բարի դէպի կենդանիները։ Եթէ դուք խելացի էք, փախէք այն մարդուց, որը չարչարում է կենդանիներին, նա ձեզ համար վտանգաւոր է։

Թարգմ. Ե. Մ.

ՄԵՌԵԼՆԵՐԻ ՅԱՒԼԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՋԱՆԱՋԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԷՋ

—

Մարդու մեռնելուց յետոյ ի պատիւ նրա կատարւելիք բոլոր արարողութիւնների նպատակն է միւս աշխարհի մէջ երջանիկ կեանք վայելել տալ նրան։ Ինչ կրօնի էլ պատկանի ժողովուրդը, այդ միակ նպատակն ունի, բայց դատաստանքի տարբերութիւնները, սովորութիւնների դանազանութիւնները փոփոխութիւններ են մտցնում այդ արարողութիւնների ձևի մէջ։

Աքիլլէս իր բարեկամ Պատրօկլի աճիւնին վերջին պատիւը տալու համար նրա փայտակոյտի վերայ դնել տւեց չորս երիվարներ և իր չներից երկու հատ, յետոյ տասներկու երիտասարդներ զոհեց։ Բանտատեղը այս անգութ արարքը պատմում էր իրեն մի սովորական եղելութիւն, որովհետև այն ժամանակ ժողովուրդը հաւատում էր, թէ հանդերձեալ աշխարհի մէջ էլ մարդիկ ապրելով կեանք են վարում, այնպէս ունեն ծառաներ, ձիեր, անասնդի հայլն։

Սակայն քանի բարքերը մեղմանում են, այնքան էլ այս բարբարոս սովորութիւնները անհետանում են։ Վիրգիլիոս երբ մի դիւցազնի յուղարկաւորութեան նկարագիրն է անում, յիշում է նաև նրա երիվարը, որ հանգէս է բերւած, ա-

Իսկ խեղճ կենդանին սպանելուց վախ չունէր։ Իր սովորութիւնը սակը է անենում նաև մեր օրերում։ Անգլիացի մի բարձրաստիճան պետական մեհենում է, յուշարկաւորութեան հանդէսին բերում են նաև իր նախընտիր երիվարը սև գորգերով ծածկուած և սիրող ոռամանները սպանդակի վերայ հանգստակ կողմից գլուած։

Սրիւնալի յուշարկաւորութիւնները նոյն իսկ այսօր գոյութիւն ունին Ընդրկայի վայրենի ցեղերի մէջ։ Յաղթութեան ժամանակ երբ մի պատուական է մեհենում, գերեզմանի վերայ մարդասպանը են կատարում։ Մի անգամ մի գիտպետ մեհենիկին, հինդ հազար հոգի խոզողեցին գերեզմանի վերայ։

Իր սիրեկանի գերեզմանի վերայ իր կեանքն էլ վերջ տալու սովորութիւնը կատարեցին Հնդկաստանի մէջ։ Այնտեղ այրի մնացած կանայք ամուսինների մարմինը այրող փայտակոյտի վերայ են նետում իրենք իրենց և անձնասպան լինում։

Ովկիանոսի շատ կղզիների մէջ մեհենդի մօտաւոր ազգականները նրա մարմնի մի քանի մասերը յաշատում են, այսպէս մսերը խեցիով ձեղքում, բերանից մի քանի ատամ հանում և մօրուքն ու արտանունքը ածիլում են։

Մի քանի հին ազգեր հաւատում էին, թէ մեհենելուց յետոյ մէկի կեանքը կարում ուրի այս աշխարհում իր մարմինը պահելու տեսակէտից,

դրա համար եգիպտացիք մումիա էին անում իրենց մեհենների պէսները։

Գրօշնդանդացիք, երբ երեխայ է մեհենում, նրա հետ թաղում են նաև մի շուն, որպէսզի առաջնորդէ նրան հանդերձեալ աշխարհ, ասելով թէ շունը մի սրեւ ճանապարհ չուտ է գտնում։

Ռուսները մեհելի ձեռքը մի թուղթ են գրնում. այդ թղթի մէջ պարունակում է ննջեցեալի նկարագիրը, որպէսզի երկնքի դռան առաջ ցոյց տայ Պետրոս առաքեալին։

Հնդկաստանի մէջ հին ժամանակները, ինչպէս ասացինք, այրեցած կանայք իրենց ամուսինների մարմինը այրելիս, իրենք էլ էին այրւում բոցերի մէջ։

Ասորալիայի բնիկները կապում են մեհելի մարմինը և հանում նրա մատների եղունդները, որպէսզի մեհելը եղունդներով չը փորէ գերեզմանը և դուրս գայ։

Հիւսիսային Ամերիկայի հնդիկները մեհելի հետ թաղում էին ամանով ուտելիքն, ադեղ, հագուստեր և պատճառներ, նաև եղջերուի մորթ և ջրպէր՝ հարկաւոր դէպքում մուճակներ կարկատելու համար։

Շինացիք թղթէ կեղծ դրամներ են բժժում գերեզմանի ճանապարհին, որպէսզի մեհելին հետևող շուն ոգիները հաւաքելով դրամները

պրպտեն պրանով, և նրանց միանգամայն անծա-
նօթ մնայ գերեզմանի տեղը։ Նաև գերեզմանի
վրայ հավին տալով ցրում են գահաւորակ ամեող
ծառաներին և ուրիշ ապաստաւորների թռիչ
պահակներին, որպէսզի հանեն հրաժարական հո-
գսն և ծառայութիւնները մատուցանեն նրան։

Նախկին յոյները երբեմն թաղում էին, եր-
բեմն էլ այրում իրենց մեռելներին։

Հռոմէական պետութեան մէջ առանց բացա-
ռութեամբ այրում էին մեռելների մարմինները։

Ն. Կ. Պէրպէրեան

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ըստ Դ. Միլլէրի)

Սպառողական ընկերութիւնների նպատակը

Սպառողական ընկերութիւնն նպատակն է
կրճատել այն ծախսերը, որ սովորած անում է
ամեն մի սպառող, մթերքներ գնելիս և վաճա-
ռելիս։

Խանութպանները մեծ մասամբ իրենց ապ-
րանքները թանգ են վաճառում և այդ անում են
դրսում հետևեալ պատճառներից —

1) Առևտրականը իր առևտրի ժամանակ դի-
մավարում է որևէ կարելի է չափ օգուտ ստա-
նալու նպատակով։ Նրա անձնական չահը սով-
որեցնում է, որ նա խանութում, իր ծախած ապ-
րանքի գինը հնար եղածի չափ թանգացնի։ Այդ-
տեղ նրա անչափ զարգացող ախորժակին առ-
ման է գնում միայն իր ընկերակից խանութպան-
ների մրցութիւնը. բայց քանի որ բոլոր առև-
տրականները միասին հաւասար կերպով ձգտում
են մի բանի—հնար եղածին չափ շատ հաւաքել
և շատ հարստանալ, ուստի մրցութիւնը կարող
է իջեցնել ծախու ապրանքի գինը մինչև այն
աստիճանի, որի ժամանակ բոլոր վաճառական-
ները «վնասի մէջ չենն»։

2) Քանի որ ամեն մի լանուխպան սովորաբար հասցնում է կարողանում չորս անուխան մեջ պահել 4—5 հազար բուրլի, հետևապես և նա չի կարող մեծ քանակով—ուրեմն և էժան գնով—գնել իրեն հարկավոր ապրանքը։

Որքան քիչ է իր ամենալիք ապրանքի քանակը, այնքան մեծ է գինը, որովհետև ինքը շատ պետք է վճարի գնելիք ապրանքի համար։ Այդպիսով ինքը ևս ստիպված է լինում ապրանքը թանգացնել և այդ թանգությունից առաջացած դումարը նա վճարում է մեծ քանակությամբ ապրանք վաճառողներին։

Ահա այսպիսով լանուխպանների գլխին ևս կանգնած է խոշոր վաճառականը և պահանջում է իր մասը։

3) Ընդհանրապես պարզված է, որ լանուխպաններն ինչ 3—4 անգամ ավելի է, քան այդ հարկաւոր է իսկ այս հանգամանքը պատճառ է լինում ապրանքների թանգանալուն, որովհետև ամեն մի լանուխպան իր առևտրից պետք է հանե թե իր ծախսերը, որ արել է լանուխի շինության, ծառայողների վարձի, իր ընտանիքը պահելու վրայ և թե այն դումարը, որն ամեն մի լանուխպան աշխատում է մինչև «ինայել» ապագայի համար։

Պարզ է, որ այսպիսի պայմաններում, մա-

նավանդ ուսակիչն վաճառող առևտրականը, չափազանց մեծ տուրք է դնում սպառողի վրա։

Ահա այդ տուրքն է, որ պետք վերացնել սպառողական ընկերությունները։ Ահա այս թերի կողմերն է, որ պետք լրացնել կօօպերատիվ ընկերությունը։ Սրանք—կօօպերատիվ ընկերությունները—պետք է էժան և լավ որակի ապրանք մատակարարեն սպառողին, զրկելով այս վերջիններիս մեծ ծառայություններ մատուցած կլինեն, որի մասին մինչև հիմա «ինդուստ» էր խանութպանը։ Բոլոր վերոյիշյալ պակասությունները, որով բռնած են մանրավաճառները, պետք վերջ գտնեն կօօպերատիվ ընկերության հնարքներ։

Սպառողական ընկերությունները պետք է ուելի ձեռնտու գնով գնեն և ուելի խնայողաբար վարեն իրենց գործը, չհանգրվանի չը հետևեն, այլ ընդհակառակը՝ աշխատեն սպառողի շահերը հնար եղածին չափ բարձր պահել։

Սպառողական ընկերությունները պետք է վերացնեն անօգուտ և ուելորդ ծախսերը։ Մի այն դեպքում, երբ սպառողական ընկերությունները կծառայեն այդ նպատակին, արժանի կը լինեն նաև բռնելու մանր առևտրականների տեղը։

Եթե որևէ տեղում, օրինակ գիւղում սպառողական ընկերությունը չի վարգանում և ստիպված է լինում դադարեցնել իր գործունեությունը,—

նշանակում է նա չի վարտոպային ծառայել իր նպատակին, նրա գործը անօգուտ է ընթացել, ուրվհետև այն չէ արել, ինչ որ պէտք է անէր իրրև այդպիսին։

Այդտեղ, ի հարկէ, չանցաւոր է ոչ թէ սպառողական ընկերութիւնն, այլ այն մարդիկ, որոնք դնկավարել են նրան և անշնորհք են գտրս եկել այդ գործում։

Սպառողական ընկերութիւնը մի նուրբ մեքենայ է, որին կարող է բանեցնել միայն հմուտ ու փորձած մեքենավարը։ Ուստի անհրաժեշտ է, որ բոլոր նրանք, որոնք ուզում են օգտուել սպառողական ընկերութիւնների աւած անգնահատելի ծառայութիւնից, լաւ տեղեակ լինեն այդ ընկերութիւնները դնկավարող կանոնների հետ։ Պէտք է սկզբից աշխատել գործը ամուր հիմքերի վրայ դնել և աշխատել հետու մնալ, որպէսզի ընկերութիւնը չը փչացուի։

Ա. Աւագեան

ԻՆՉՊԷՍ ՀԻՄՆԵԼ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԸՆԿԵՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սպառողական ընկերութիւն հիմնելու ամենահնչեղ ձևը այժմ կարող է համարւել նախապատրաստման կողմից հաստատւած բնական (նօրմալ) կանոնադրութիւնը եթէ կազմակերպող անդամները յանկանում են հիմնել սպառողական ընկերութիւն մի այլ կանոնադրութեան հիման վրայ, այժմեան պայմաններում նրանք չեն կարող անմիջապէս թոյլատրութիւն ստանալ և այդպիսով հնարաւորութիւն չեն ունենալ մօտ ապագայում հիմնել սպառողական ընկերութիւնը։ Այս դէպքում ասելի լաւ է կազմակերպել նօրմալ կանոնադրութեան հիման վրայ, իսկ յետոյ լնդրամատոյց լինել, որ անհրաժեշտ փոփոխութիւնները մտցնեն ընկերութեան կանոնադրութեան մէջ։ Փորձը ցոյց է տալիս, որ դա ամենալաւ միջոցն է ատելու ժամանակ չկորցնելու համար։ Սպառողական ընկերութիւն հիմնելու համար պէտք է ունենալ բնական կանոնադրութեան երկու բլանկ, որը կարելի է ստանալ «Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնից», «Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Ջնայնագործական ընկերութիւնից», կամ «Գիւղատնտես» շաբաթաթերթի խմբագրութիւնից։

Բլանկների մէջ նշանակած կամ գաղարկ տեղերը ծածկում են անհրաժեշտ լրացումներով։ Եւ երբ երկու օրինակներն էլ միատեսակ լրացումներով պատրաստ կլինեն, դրանց վրայ պիտի տարագրեն հիմնադիրները—ամենաքսակասը 20 հոգի։ Տարագրութիւնները պէտք է պարունակեն իրենց մէջ՝ անուն, հօրանուն, կոչում և մշտական բնակման տեղը։

Մի բլանկի վրայ աշ անկիւնում գրւում է проектъ устава, միւսի վրայ—копія проекта устава և ապա գրւում է խնդիրը հետեւեալ բովանդակութեամբ.

Его Превосходительству господину губернатору ..... губ.

(Այստեղ պէտք է գրել անուն, հօրանուն, ազգանուն և քնակութեան վայրը բոլոր տարագրողների)։

Прошеніе

Мы, нижеподписавшіеся, жители..... села (или деревни) признали необходимо учредить въ своемъ селѣ (или деревнѣ) потребительное общество по прилагаемому при

семъ нормальному уставу, а потому имѣемъ честь просить разрѣшить открытіе (այս ինչ) потребительнаго общества (Համաթիւ, տարիթիւ և տարագրութիւններ)։

Խնդիրքի վրայ պէտք է կպցնել երկու գերբովի մարկա 75 կ. արժողութեամբ, իսկ կանոնադրութեան նախագծի համեմ մի թերթին մի հատ 75 կոպ. մարկա[1]

Ամեղոր ծախսերի մէջ չընկնելու համար լաւ է ձեռք բերել կանոնադրութեան ապատ բլանկները, որը բաղկացած է միայն երկու թերթից)։

Խնդիրը կարելի է ուղարկել պատւիրատ նամակով նահանգապետ անունով, կամ ուղարկել հատատարմատարի միջոցով։ Վերջին դէպքում պէտք է տալ հատատարմատարին հատատարմագիր, տարագրած բոլոր այն անձանց կողմից, որոնք տարագրել են կանոնադրութիւնը և վաւերացրած նոտարի կամ ոստիկանութեան կողմից։

Յ. Լ.

---

[1]) Տպած կանոնադրութիւն չեն ընդունում, այլ ձեմիզգեռնի վրայ տպած, որի վրայ գնում է միայն 75 կոպ. մարկա։

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

ԹՈՂՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

(Ըստ Բէօմերի)

Կան մարդիկ, որոնք կարծում են, որ եթէ միաժամանակ պահպան ահակ թռչուններ պահեն, շատ օգուտ կունենան. այս ենթադրութիւնը կարդարանար, եթէ այն տեղը, ուր մտածում են հատարուածութեամբ պարապել, յարմար լիներ ինչպէս հաւերի, նոյնպէս էլ սագերի, բադերի և հնդկահաւերի համար. բայց ամեն տեղ էլ այդ յարմարութիւնները չի ունենում. օրինակ, ջրաշատ տեղերում յարմար է բադ և սագ պահել, մինչդեռ հաւերի համար այսպիսի տեղը անյարմար է և ընդհակառակը, սակաւաջուր և քուսականութիւնից զուրկ տեղերում դժուար է յաջողութեամբ զարգացնել ջրային թռչուններ (սագ և բադ), իսկ հաւերի համար լաւ է։ Սագերի համար անհրաժեշտ է գնացական—պարզ ջուր, առատ արօտ և մեծ գալու ընդարձակ պաշտ, իսկ բադերը կարելիանան արհեստական ապահանով էլ, միայն թէ շարժէր գոնէ մի անգամ պէտք է ջուրը փոխել, չմոռանալ, որ շատ ապուռի և հոտի. ապա թէ ոչ թռչունները կարող են վնասել—հիւանդանալ։

Հնդկահաւերը ցուրտ կլիմայում յաջող առաջ չեն գալիս, նրանք տաք, չոր կլիմայ՝ թռչուններ են. սրանց մատղաշ ձագերը լինելով շատ քնքոյշ և կլիմայական փոփոխութիւններին դիւրազգաց. պահանջում են լաւ խնամք և առատ ու կանաչ արօտ։

Հաւերին խնամին էլ ունի իր առանձին դժուարութիւնները. նրանց համար պէտք է ունենալ չոր, տաք և մաքուր բուն և քամուց լաւ պաշտպանուած հաւատուն։

Ուրեմն ամեն մի թռչնապահ, եթէ ցանկանում է օգուտ առանալ, նախ և առաջ պէտք է անպատճառ ի նկատի ունենայ իր տնի համար ո՛ր տեսակ թռչունն է ձեռնտու պահել։

ՀԱՒԵՐԻ ՏԵՍԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

—

Եթէ թռչնապահի նպատակը ձու ունենալն է, ուրեմն նա աշխատելու է պահել բազմածիլ և շատ ձու ածող տեսակի հաւեր, այնպէս որ նրանց ածած ձուերը լինեն մեծ և ծանր կշռով։

Ցայտնի է, որ ամեն մի հաւի ձուարանում կայ 600—800 ձուաբջիջ, և հաւը 4—8 տարուայ մէջ պէտք է բոլորը ածէ։

Կան հաւեր, որոնց ածած ձուերը լինում են խոշոր, մինչեւ քաշով մինչեւ 17 մխալ ծանրութիւն ունեցող, կան մանր, մինչեւ 9½ մխալ կշռող ձու ածող հաւեր էլ։

Նոյն իսկ միացեալ հաւերը միաչափ ձու չեն ածում, կայ հաւ, որ ածում է տարին միայն 80 ձու, կան հաւեր, որ ածում են 150 և էլ–աւելի ձու։ Ուրեմն չի կարելի պարզապէս որոշել ցեղի հաւի տարեկան ածած ձւի քանակը. պատահում է, որ մի հաւի տարեկան ածած ձուն ուրիշ ցեղի հաւի ածած ձւից 2—3 անգամ շատ է լինում։

Ցեղական հաւերի ընտրութեան կարեւորութիւնը

Հաւերի բոլոր տնտեսները միանման արդիւնաւոր չեն լինում։ Թռչնատան վրայ դնելիս թռչնատէրը պէտք է ուշադրութիւն դարձնի, որ նրանք բազմապատկելու իր նպատակին համապատասխանող ձեւեր. օրինակ, եթէ ուզում է լաւ ձուաբեր հաւեր, անպատճառ պէտք է թռչնի տակ դնելու համար ձեռք բերել լաւ եւ շատ ձու ածող հաւեր. նոյնպէս պէտք է վարուել նաև աճեցող ընտրելիս, որի լաւը պէտք է վերցնել շատ ձու ածող ծնողից. իսկ եթէ ուզում է լաւ մսացու հաւ ունենալ, պէտք է մսացու հաւի ձուը ձեռք բերի.

այս գործը թռչնատունքիան մէջ տալում է բոլորովին ցեղի ընտրութիւն։

Թռչնատէրը չպէտք է պատահած հաւ պահի. տա նրա կողմից մեծ օգուտ կլինի. եթէ հաւը տարեկան 100 հատից պակաս ձու է ածում, նրան պահելը միաք չունի. պատահած հաւը շատ ձու չի ածում. օրինակի համար՝ 5 տարեկան հաւը կածի տարեկան 50—60 ձու և որքան նա մեծանայ, այնքան կպակասեցնի ձուն լաւ է 4 տարեկանից մեծ հաւ չպահել, այդպիսի հաւը պէտք է չտպացնել և մորթել։

Տարեքաւոր հաւեր կարելի է պահել թռնատան համար՝ նրանք չտեղ հաւերից լաւ են նմանում են թռչնի կալը։

Հաւերի տարիքը որոշելու չի կարելի որոշել. մանաւանդ թռչնատէրները մի հատակի հաւերի տանները միանման օդակներ են դնում. օդակները լինում են շարից, մեռաղներից կամ ոտներից. կարելի է օդակների վրայ նշանակել հաւի տարիքը։

Պէտք է այն էլ ունենալ ի նկատի, որ հարկ չկայ մեծնայն թռչնատանում պահել մի քանի տեսակ հաւ. ուստի եթէ մէկը կամենում է աշքի ընկնող հատատատ օգուտ ունենալ, պէտք է մի տեսակ միմիայն մի տեսակ թռչուն պահի։

Մ Ե Ղ Ա Ց Ո Ւ Մ Ն Ե Ր Ի Ց

Մայրերի փոխարինումը

Եթէ մայրը ծերացել է, կամ սրևիցէ պատճառով անկարող է պարտքը հարկաւոր է փոխել։ Փեթակից հեռացրէք տին մօրը և հէնց նոյն օրը տուէք վանդակով նոր մայր։

Մեղուների բնական ձագ տալը եւ արհեստական ձագ վերցնելը

Եթէ փեթակը լցուած է որդով և մեղուներով, բնատնիքի մի մասը բաժանուած է նոր բնատնիք կազմելու համար։ Ձագը լինում է բնական և արհեստական։ Բնական ձագը այն է, երբ մեղուները իրանք են բաժանւում դուրս գնում, իսկ արհեստականը, երբ մեղուպահը ինքն է բաժանում և բնատնիք կազմում։

Բնական ձագ

Բնական ձագերը գուրս են գալիս գլխաւոր բերքի սկսւում կամ քիչ առաջ և տևում է մինչև բերքի վերջը։ Եթէ բարեյաջող ընտանիքներում դուք երբեք նկատէք բոռեր և մայրաբներ, այդ նշանակում է, որ փեթակը պատրաստւում է չուառով ձագ դուրս անելու։ Առաջի ձագը

— առաջնաձագը, որը դուրս է գալիս սովորաբար հին մօր հետ, դուրս է գալիս հէնց այն օրը, երբ դանակը բարեյաջող է, երբ մայրարներից մէկն ու մէկը կնքւած է։

Առաջնաձագերը դուրս են գալիս յատ հղանակներին և օրւայ որոշ ժամերին՝ 0—3 ժամին երկրորդ ձագը, որ դուրս է գալիս առաջնաձագից 8—9 օր յետոյ չսիրէ մայրերով, դրա համար եղանակը և ժամը նշանակութիւն չունի։ Առաջնաձագի մայրը ծանրաբեռնուած լինելով ձիկններով, շատ հեռու չի թռչում, սովորաբար իջնում է փեթակի մօտ ծառի կամ թփի վրայ։ Եթէ ձագը իջել է ծառի ճիւղի վրայ, պէտք է ձագակալին բռնել տակը և ճիւղը թափ տալ ձագակալի մէջ, իսկ եթէ թափ տալու յարմարութիւն չկայ, պէտք է հաւաքել շերեփով կամ տուփով լոպանակով կամ ծուխ տալով քշել։ Եթէ մեղուպահը չկանգնում է փեթակների թիւը շատացնել, ձագերը պէտք է ածել առանձին փեթակի մէջ, իսկ եթէ ուզում էք մեղր ստանալ, պէտք է ածէք ուժեղ ձագեր՝ մի քանիսը երթ հետ միացնելով։

Պէտք է միացնել առաջնաձագերը՝ ընդունւած մայրերը առաջնաձագերի հետ, իսկ երկրորդ ձագերը ջոկել մայրերով, երկրորդ կամ երրորդ ձագերի հետ։ Հակառակ դէպքում կարող

են մեկը մյուսին չարգել։ Որպէսզի երկրորդ երրորդ ձագերը չփախչեն փեթակից, պէտք է տալ մի կաթ հաց օրական և ձուլ

Միջոց երկրորդ ձագի դուրս գալու դէմ

Մեղուապահը ձագ տալու ամբողջ միջոցում շարունակ պէտք է ուշադրութեամբ հսկէ, թէ ձագը ծր փեթակիցն է դուրս գալիս և ծրանում է իջնում։ Մեղուները, երբ թաղնուած են իրենցն իրենց յատուկ շատ ձագ են տալիս, որից թուլանում է մայր փեթակը, թոյլ են լինում և ձագերը։ Մեղուապահի միջամտութիւնը այս վայրում անհրաժեշտ է, որպէսզի թոյլ չառ մեկից աւելի ձագ տալուն։ Դրա առաջն առնելու համար, պէտք է ձագը դնել մայր փեթակի տեղը, իսկ վերջինն դնել մի այլ տեղ։

Ձագի տեղաւորելը փեթակի մէջ

Փեթակի մէջ գրէք ձագի մեծութեան համեմատ չրջանակներ պատրաստի հացով կամ մոմաթերթով. նեղացրէք միջնատախտակով, գրէք թաթանն ու բարձը, հատցրէք և ծածկէք փեթակը։ Փոխէք սփռոց արկանոցի առաջ և թաղի աւէր ձագը։ Ձագերին առաջին երեք օրը կանկալի է կերակրել շաքարաջրով։ Բոլոր ձագերը,

գլխաւորապէս չհսկել մայր ունեցողները, մինչև բեղմնաւորելը մեծ հսկողութիւն են պահանջում։

Արհեստական ձագ վերցնելը

Ըհնեստական կերպով ձագ վերցնելը քանակից մեծ առաւելութիւններ ունի. նախ՝ մեղուապահը կարիք չունի մեղուացը ամբողջ մի ամսում հսկելու և վախենալու ձագերի փախչելուց և երկրորդը՝ մեղուները բնական ձագ տալու ժամանակ, համարեա 10 օր չեն աշխատում, որ մեծ ազդեցութիւն է անում մեղրի քանակի վրայ։

Ըհնեստական ձագը պէտք է վերցնել օրերեզ բնաանիքներից, որ առնուազն ունի 7 հաց երկայնքով։ Ձագը վերցնելու համար պէտք է ընտրել պայծառ օր՝ ժամը 11—3 ը, երբ մեղուները մեծ մասը պաշտում են։

Մայր փեթակից, որից ձագ էք հանում, առանձնացրէք ժամանակաւորապէս այն չրջանակը, որի վրայ մայրն է։ Նոր փեթակն էլ կազմէք այսպէս. ափերից գրէք մի-մի չրջանակ մեղրով և մի մի չրջանակ էլ պատրաստի հացից կամ մոմաթերթով, մայր փեթակից վերցրէք երեք չրջանակ երկայն. թաղի աւէր կամ աւելացրէք մեղուներին ու գրէք նոր փեթակի ծրի կենտրոնում, եթէ պահուած մայր կամ հասած մայրբան չունէք նոր բնաանիքին տալու, մայր փե-

թակից պէտք է վերցնել էլի մի հաց սրդով, ձուկրով և նատած մեղուներով և դնել նոր փեթակի մէջ, որպէսզի իրենց համար մայր պատրաստեն։

Մօրը իր չբջանակովը վիրադարձրէք մայր փեթակին, հաւաքեցէք բունը և դրէք մեղուաոցում մի այլ տեղ, իսկ դրա տեղը դրէք նոր փեթակը։ Այս նշանակում է մի ընտանիքից մի ձագ վերցնել, իսկ երկու ընտանիքից մի ձագ վերցնելու համար հարկաւոր է մայր ընտանիքի մօրը 2 օրով նստեցնել վանդակի մէջ և փեթակը դնել մի ուրիշ ուժեղ ընտանիքի տեղը, իսկ վերջինին հեռացնել և դնել մեղուաոցում մի այլ տեղ և օրական մի քանի անգամ, 3 օրւայ ընթացքում, խոզանակով ջուր սրսկել արկղորդից։ Երեսատեան ձագ վերցնելու համար ցանկալի է պահեստի մայրեր ունենալ կամ հասած մայրաբջիջներ և հէնց նոյն օրն էլ տալ նոր կազմած ընտանիքին մայր կամ մայրաբջիջ։

Ս. Գրիգոր Բարխուդարեան

ԱՂԱՒՆԱՐՈՒԺԱԿԱՆ

Կովի ծծերի բորբոքումը.— Կովի ծծերի բորբոքած մասը ուռչում, պնդանում ու տաքանում է. հիւանդ պատկերից դադարում է կաթ գալուց, նոյնպէս էլ սակաւանում է առողջ մասի կաթը։

Բժշկելը.— Եթէ հիւանդ պատկերը սեղմենք, դուրս կգայ դեղնագոյն չհնուկ, կարած կազմելի բրդուձեռով լաւութ կենդանու ախորժակը պակասում է, հէնց որ տակաւին թէկնը նշմարւում է, պէտք է հիւանդ տեղի վրայ դնել (1 մասից պօտաշը 2 ֆ. թրջած ջրում) թրջած շորը այս անելու է անընդհատ առաջին 2 օրերում՝ օրը մի քանի անգամ. շորը թրջելու համար ջրի տաքութիւնը միշտ պիտի պահւի 39° Բ., իսկ ծծերը մրսեցնելուց պէտք է զգուշանալ. ամեն անգամ տաք շորը դնելուց յետոյ ծծերին պէտք է քսել ալիւրից շինած չիթոի ու ծածկել բաւական բամբակով։

Հիւանդ պատկերից առաջին երկու օրերում կաթը պէտք է լաւ քամել, իսկ միւս օրերում օրը մի քանի անգամ։

Ծծերի սեղմւածքները եւ խոցերը բժշկելու համար, նայելով նրանց հիւանդութեան ծանրութեանին, մի քանի օր շարունակ 1 մասաղ պօտաշ և 5 բաժակ ջուր եփ տալ, շորը թրջել ու տաք

տաք պնել վէրքի վրայ։ Բժիշկները հիւանդ մահճին պէտք է քսել մանանեխի խոց։ Վէրքերը պէտք է կանոնաւոր կերպով ախտահանել և եթէ կարիք լինի, կարել. իսկ եթէ վէրքը ժահրաբար, պէտք է նրան ամեն օր լուանալ կարբոլեան թթուտով կամ կրէօլինեան թթուտով։

Վարակ հիւանդութեանց դէմ միջոց.—Հէնց որ հոդիւրտաւոր կնդապնիների վրայ երևում են պարզի նշաններ և բիրանից սկսում են ծորել լորձինք (մուր), այս դէպքում պէտք է ուռեցնել ածաբի կամ ցորենի թեփախառն շոր ալիւր, խառնելով մէկ բաժակ ալիւրի հետ մէկ գդալ բուած շիր։ Այս կերը կազնել հարկաւոր չէ. մի անգամ էլ բաւական է և կենդանին մէկ երկու օրից յետոյ լաւանում է։ Պէտք է կոշտ կերակուրներ ուռեցնել, պէտք է տալ փափուկ խոտ կամ ալիւրի լոպի։ Բիրանը ողողելու և խրմելու համար գործածել քիչ քացախի հետ խառնած ջուր, կամ պէտք է վերցնել դեղատնից $^1/_8$ ֆունտ փիլին (ռոլին) լոյսից, եփ տալ ինչպէս թէյ խառնել պաղ ջրի հետ և խմացնել, ինչքան կուզէ թող խմէ. հիւանդը յօժարութեամբ կը խմէ։

Ցնդակի հիւանդութեան դէպքում պէտք է հիւանդ տարիքը սովորական ջրով լուանալ, յետոյ երկու բաժակ նման ջրի մէջ խառնել մի թէյ

գդալ բուած շիր, ուռեցնել և պլանով լուանալ հիւանդ կնդակը օրական մի երկու անգամ, յետոյ շոր շորով լաւ փաթաթել, որպէսզի կնդակի մէջ ցեխ կամ հող չլցի։ Լուանալուց յետոյ օգտակար է տարբերին ցանել նաև նաֆտալին, որ վանաւում է գեղատներում։

Եթէ կրծքի վրայ բշտիկներ են դուրս եկել և վէրքեր գոյացել, պէտք է լուանալ տաք ջրով նաև օրական երեք անգամ շրթխան ջրով լուանալ կամ քսել «գինկոզի մազ» (վէրքերին քսելը վերջինս աւելի հնշտ է)։

Առհասարակ պարապը բժշկում է ամեն տեսակ տաքսել նշոյներ և տաքսանախիշ միջոցներ գործածելուց։

Սակայն ամենից առաջ կարևոր է տատպենին տատնձնացնել հիւանդներին և հոկեր մարդուկան վրայ։

«Պիւղտեցեան»

ՄՏԱՒՈՐ ՇԱՀԵՐ

«Նորապսակների կեանքից»

—Կէրա՛ չան, յիշում ես թէ ինչպէս մինչև մեր պսակելը դու այնպէս մեծ բանականութեամբ ու ոգևորութեամբ մտածում էիր մեր երկուսիս միասին ապրելու ժամերն ու զբաղմունքը... Ահա ամսագրի մի նոր №, որի մէջ խիստ հետաքրքիր մի յօդուած կայ.—«Ժամանակից փիլիսոփայութիւնը և նորագոյն գրականական հոսանքները»... Նրա տեր միասին կարդանք։

—Ընչուչա սիրելիս, շատ հետաքրքիր կըլինի այդ յօդուածը դնանք միայն իմ սենեակում կարդանք. այնտեղ լաւ է և խաղաղ։

Գնում են։

—Նստի՛ր այստեղ, խախո՛ վրայ...

—Ո՛չ, դու պառկի՛ր, իսկ ես կը նստի՛մ այ, այդպէս. դէ հիմա կարդայ։

Ամուսինը կարդում է.—«Գիանքի իւրաքանչիւր մի չրջան»...

—Սպասի՛ր, այդպէս քիչ համար լաւ չէ. դու անյարմար ես պառկած. գլխատեղդ լաւ չէ, թող միւս սենեակից բարձր բերեմ, դիր գլխիդ տակը։

Բերում է։

—Շարունակի՛ր։

—«Գիանքի իւրաքանչիւր մի չրջան, ինչպէս մարդու անհատական կեանքում, այնպէս էլ ընդհանուր հասարակական»....

—Սպասի՛ր Գոլիա, ես ուզում եմ նստել բազկաթոռի վրայ. քո դիմացը, որովհետև ուզում եմ քո երեսը լաւ տեսնել. այ այդպէս, շարունակի՛ր կարդալը։

—«Գիանքի իւրաքանչիւր մի չրջան, ինչպէս իւրաքանչիւր մարդու անհատական կեանքում, այնպէս էլ ընդհանուր հասարակական կեանքում ունենում է իր նպատակները, ծնունդ յայտնի և գիտակցական պատկերներ»...

—Հոգեակս, ես ուզում եմ քիչ համբուրել, մինչ պէք է հէնց սրանով էլ սկսենք իւրաքանչիւր մի գործ.—համբուրում է — շարունակի՛ր։

—«Եւ գիտակցական պատկերները, որոնց առնչում են յայտնի և տարտնգաւոր անհատներ»...

—Սպասի՛ր, ես ուզում եմ քիչ աւելի մօտ լինել, թող ես պառկեմ ծախոի վրայ՝ քո տակը, իսկ դու նստիր ինձ մօտ այնպէս շարունակիր կարդալը։

Տեղափոխւում են։

Ամուսինը շարունակում է.

—«Ծագանգաւոր անհատներ, իսկ յետոյ նրանց տարտնգաւորութիւնները ընդհանրանում և

դասնում են ընդհանուր հասարակութեան սեփ-
կանութիւն»...

— Սիրելիս, նորից կարդայ, ես չեմ լսում:

Ամուսինը կարդում է երկրորդ անգամ:

— Դիտես, Գոլիա, ես ինչ-որ մտածել. լաւ
կլինէր, որ իմ սրակի դէյրան նորից չկոլատաեմ
և մի ուրիշ դէյրա կարել տամ, այլ նա, որպէս
յիշատակ, թող այնպէս էլ մնայ, չնայ այնքան
լաւ և գուրեկան կլինի նրա վրայ նայելը:

— Վէրա, տեսնում եմ, որ դու բնաւ ուշադ-
րիր չես ինձ լսելու. լաւ կլինի, որ այժմ թող-
նանք, չնայ կկորցանք:

— Ոչ, ոչ, ոչ ասայ, ինչից եղբակացրիր,
կարդայ, շարունակիր:

— «Փիլիսոփայութեան մէջ այժմ նկատւում է
երկու գլխաւոր ուղղութիւններ»...

— Ա՛խ, Գոլիա, քո բեխերները ուշադ նորը
են ու գեղեցիկ և ուրքան մեղմօրէն են շարժւում,
հրր դու կարդում ես:

— «Առաջին ուղղութիւնը՝ յատկանիշական է»

— Շուտեակ, աւելի լաւ կլինի, որ մենք այժմ
գնանք մի փոքր զբօսնելու, այսօր այդքանն էլ
բաւական է, ես յոգնեցի. կվերադառնանք և թարմ
ուժերով էլի կսկսենք մեր պարապմունքը...

(Ռուսերէնից) W.

«Կոյան»

Ի՞ՆՉ ԵՆՔ ՈՒՏՈՒՄ ՄԵՆՔ*)

Միս եւ ձկնեղէն.—Միսը զրեթէ հացի չափ
շատ զործածուղ մթերքներից է, բայց հացից էլ
աւելի շատ կեղծիքների է ենթարկուում: Ամենից
առաջ պէտք է յիշել, որ ոչ մի առարկա անա-
սունի մսս չի փչանում առանց սերտորէն փող բե-
րելու: Մսավաճառը սառածի մսը ծախում է
իր յաճախորդներին, իբրև մորթած անասունի
մսս: Մանաւանդ չի կարչում հիւանդ անասուն-
ների մսը:

Հէնց որ հիւանդ անասունն սկսում է նիհա-
րել և մէրը նրան առողջացնելու յոյսը կարում
է՝ անմիջապէս չուկայ է հանուում իբրև ամենա-
լաւ տեսակի: Քանի քանի մարդիկ են վարակուել
վարակիչ հիւանդութիւններով բռնուած անասուն-
ների մսից: Ճուկայում հնացած և տհաճ մսի
վաճառումը նոյնքան աշխոյժ է դնում, որքան
թարմ մսը,—դրա համար մսավաճառները ֆի-
նոլով, կրեոլինով և այլ դեղերով մսի զարշահո-
տութիւնը չնչացնում են, ներկում և թարմ մսի
բոլոր արատների յատկութիւնները տալիս: Շինո-
ղը ենթարկուում են նոյն կեղծիքներին և իբրև
թարմ մթերք չուկայ հանուում:

*) Տես «Շիրակ» օրագրի 1911 թ.

Էլ չենք խոսում գանազան տեսակ կալբատ-ներեի մասին, որոնց համար մի հանելիս անպատճառ-պէտք է խոզեն մի քանի ժամանակ, մինչև որ ինքն իրան ոսկորից կպոկվի. դա անում է թէ աշխատանքը կրճատելու և թէ միսը ոսկորից աւելի մաքուր քերթելու համար։ Իսկ տերևներով վարակած մէրը։

Կոնսերվներ՝ ձկան, մսի եւ բոյսերի.—Կոնսերվների մեծ մասը պատրաստւում է հին մթերքներից, իսկ աւելի յաճախ՝ արհեստական ճեղքերը լաւ չփակելու պատճառով միջի կոնսերվը փչում է կամ հոտում, և այդ պատճառը մեր սեղանի վրայ գալիս։ Քիչ չեն և այնպիսի դէպքերը, երբ կոնսերվի մէջ հայտնում են կլայկի և արձիճի կտորներ և նրան թունաւոր զարձնում։ Որպես ապահանման շատ կոնսերվներ պատրաստում են կիսակզների մնացորդներից կամ հոտած պատուղներից, որոնց իսկական յատկութիւնը ծածկում է ափիոնով և զանազան համեմներ խառնելով։

Մեղր.—Կարծեմ այժմ ոչ ոքի համար գաղտնիք չեն այն ափաչկարայ կեղծիքները, որ կատարւում են մեղրի հետ։

Թէ որքան լայն չափերով է գործ դրւում դա մեծ քաղաքներում, դրան ապացոյց կարող է լինել Թիֆլիսի օրինակը։ Ընդհանրը Թիֆլիսի առևտրական յանձնաժողովը քննելով չուկայում և փողոցներում ծախւող մեղրերը գոկնոխի համար, գտել էր, որ նրանց մօտ 95 տոկոսը եղել է ոչ իսկական մաքուր մեղր, այլ խառնուրդ և նոյն իսկ այնպիսի մթերք, որի մէջ մեղրի հետքը անգամ չկայ, բայց որը ծախւում է իսկական մեղրի տեղ։ Իսկ որպէսզի գնողը խաբուի, այդ կեղծած մեղրի մէջ դնում են մի երկու կաթ իսկական հայ մեղր։

Մեղրին խառնում են տհաստաբոյր ալիւր, օսլայ, շաքարաւազ։ Բայց ամենագլխաւոր խառնուրդը (պատօկան) գօշարն է, կամ օսլայի և կարտօֆիլի շաքարը։

Երբեմն կեղծ մեղը այնպիսի մաքուր և գեղեցիկ տեսք ունի, որ շատերը գրաււում են արտաքինով և չհասկանալով՝ աւելի շատ կեղծածն են դնում, քան իսկական մեղը, մանաւանդ որ նա շատ էլ էժան է։

